acba

Impact Banking

Կայուն Զարգացման
Հաշվետվություն

2025

Բովանդակություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 5

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 9

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ 13

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ 17

1. ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ 18

2. ՄԵՐ ԲԻԶՆԵՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22

3. ԲԱՆԿԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 27

4. ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 30

ԷԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 37

1. ՄԵՐ ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ 38

2. ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ 40

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 45

1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 46

2. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱ 61

3. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 74

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ 83

1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 84

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ 93

ԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 99

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԱԶԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 104

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ 115

1. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 116

2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 121

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 127

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 131

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 138

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 140

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 140

ՀԱՎԵԼՎԱԾ 2. GRI ՑՈՒՑԻՉՆԵՐ 144

ՀԱՎԵԼՎԱԾ 3. SASB INDEX 153

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 156

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ 162

Հաշվետվության
մասին

Հաշվետվության մասին

(GRI 2-2, GRI 2-3, GRI 2-4, GRI 2-5)

Հաշվետվության կազմման սկզբունքները և կառավարումը

Կայուն զարգացման 2025թ. Հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Ակբա բանկ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ակբա բանկ կամ Բանկ) առաջին կայուն զարգացման հաշվետվությունն է: Այն ներկայացնում է Բանկի գործառնական գործունեության համապարփակ ակնարկը կայուն զարգացման երեք հիմնասյուների՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) ուղղություններով՝ բանկի շահագրգիռ կողմերի համար էական համարվող թեմաների տեսանկյունից:

Հաշվետվության նպատակն է հնարավորություն ընձեռել շահագրգիռ կողմերին կայացնելու տեղեկացված որոշումներ՝ երկարաժամկետ, կայուն արժեք ստեղծելու Բանկի կարողության վերաբերյալ: Հաշվետվությունը պարունակում է մանրամասն տեղեկատվություն մեր ԲՍԿ ռազմավարության և կայուն ֆինանսավորման նախաձեռնությունների մասին: Ակբա բանկը հանձնառու է հրապարակել Հաշվետվությունը տարեկան պարբերականությամբ՝ ապահովելու համար հետևողականություն, թափանցիկություն և հաշվետվողականություն, միաժամանակ տեղեկացնելով շահագրգիռ կողմերին կայուն զարգացման հանձնառությունների կատարման առաջընթացի մասին:

Հաշվետվությունն ընդգրկում է Ակբա բանկի գործունեությունը՝ բացառելով նրա դուստր և փոխկապակցված ընկերությունների գործունեությունը, և պատրաստվել է GRI (Global Reporting Initiative) ստանդարտների հիման վրա ու համապատասխանեցվել SASB (Sustainability Accounting Standards Board) ստանդարտներին, որոնք Կայուն արդյունաբերության դասակարգման համակարգի (SICS) համաձայն դասակարգվում են որպես առևտրային բանկեր: Բանկի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները, որոնք հանրությանը հասանելի են բանկի պաշտոնական կայքում, պատրաստված են համախմբված հիմունքներով և ներառում են նաև դուստր ընկերություն հանդիսացող «Ակբա Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ակբա Լիզինգ կամ Լիզինգ): Ի տարբերություն դրա, սույն Կայուն զարգացման հաշվետվությունը կենտրոնանում է բացառապես Ակբա բանկի անհատական գործունեության և դրա ազդեցության վրա:

Ակբա բանկի տվյալները ներկայացված են 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար, իսկ Հաշվետվության հրապարակումը իրականացվել է 30.06.2026թ-ին: 2025 հաշվետու տարվա համար Բանկը բացահայտում է կայուն զարգացման քանակական տեղեկատվություն, որն ընդգրկում է միայն ընթացիկ հաշվետու ժամանակահատվածը: Նախորդ ժամանակահատվածների համեմատական քանակական տվյալները չեն ներկայացվում, քանի որ կայուն զարգացման հաշվետվողականության համակարգն ու համապատասխան ցուցանիշները ներդրվել և ներքին կանոնակարգերով սահմանվել են հենց հաշվետու տարում: Բանկը գիտակցում է ժամանակի ընթացքում տվյալների համադրելիության կարևորությունը և մտադիր է ստեղծել կայուն զարգացման տվյալների հետևողական բազա՝ հետագա հաշվետվություններում համեմատական տեղեկատվության ներառումն ապահովելու համար:

Քանի որ սա բանկի առաջին կայուն զարգացման հաշվետվությունն է, նախկինում հրապարակված տեղեկատվության վերաձևակերպումներ չկան: Թեև սույն հաշվետվության համար արտաքին հավաստիացման (աուդիտի) անցկացում նախատեսված չէ, բանկը գիտակցում է անկախ վավերացման կարևորությունը և դիտարկում է արտաքին հավաստիացման հնարավորությունները կայուն զարգացման ապագա հաշվետվություններում: Բանկը նախատեսում է կայուն զարգացման հաշվետվությունը պատրաստել տարեկան պարբերականությամբ: Հաշվետվության նախագծման աշխատանքներում ներգրավված են եղել կայուն զարգացման ոլորտի մասնագետներ, մինչդեռ Տնօրենների խորհուրդը և Գործադիր կոմիտեն պատասխանատու են եղել դրա բովանդակության վերանայման և հաստատման համար՝ ապահովելու հաշվետվության ամբողջականությունն ու արժանահավատությունը:

Կայուն զարգացման հարցերի և սույն Կայուն զարգացման հաշվետվության վերաբերյալ ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք կապ հաստատել՝

ՕՀԱՆ ԱԼՎԱՆԴՅԱՆ
Կայուն զարգացման բաժնի ղեկավար

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82–84
+374 10 31 88 88
+374 77 07 60 66
ohan.alvandyan@acba.am

Գլխավոր գործադիր տնօրենի **ուղերձը**

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը



ՀԱԿՈԲ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Գլխավոր գործադիր տնօրեն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Հարգելի՛ շահակիցներ, գործընկերներ, բաժնետերեր և հաճախորդներ,

Վերջին տարիներին բիզնեսի հաջողությունն ամբողջ աշխարհում չափվում է ոչ միայն ֆինանսական ցուցանիշներով, այլև այն ազդեցությամբ, որը կազմակերպություններն ունենում են մարդկանց կյանքի, շրջակա միջավայրի և հասարակության վրա:

ԲՍԿ (բնապահպանական, սոցիալական և կառավարման) սկզբունքներն այսօր ժամանակակից բիզնեսի զարգացման կարևորագույն չափանիշներից են. դրանք ձևավորում են պատասխանատու և երկարաժամկետ աճի նոր մշակույթ, որն ուղղակիորեն ազդում է տնտեսության, հասարակության, սոցիալական միջավայրի և ողջ երկրի վրա:

Իր հիմնադրումից ի վեր Ակբա բանկը զգալի ուշադրություն է դարձրել բնապահպանական խնդիրներին, սոցիալական միջավայրի զարգացմանը և պատասխանատու բիզնես վարքագծին:

Բանկն իրականացրել և շարունակում է իրականացնել զգալի ներդրումներ վերականգնվող էներգետիկայի ոլորտում, էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերում, ինչպես նաև «խելացի» և կլիմայակայուն

գյուղատնտեսության ճյուղերում: Ծավալուն աշխատանքներ են կատարվել և շարունակվում են կատարվել անվտանգ, ներառական ու զարգացող աշխատանքային միջավայր ապահովելու ուղղությամբ, և աշխատակիցների համար ստեղծվում են շարունակական վերապատրաստման ու կարիերայի աճի հնարավորություններ:

Բանկը շարունակաբար ընդլայնում է ֆինանսական ծառայությունների հասանելիությունը Հայաստանում ՓՄՁ-ների և գյուղական համայնքների զարգացման համար, ինչպես նաև իրականացնում է բազմաթիվ սոցիալական ծրագրեր երկրի տարբեր մարզերում՝ համայնքների համաչափ զարգացման և ենթակառուցվածքների արդիականացման նպատակով:

Ակբան իր գործունեությունը միշտ իրականացրել է բարձր էթիկ չափանիշներին համապատասխան, գործել է թափանցիկ և մշտապես եղել է հաշվետու: ԲՍԿ սկզբունքները ոչ միայն խորթ չեն եղել Ակբա բանկին, այլև մշտական ուղեկից են հանդիսացել մեր ողջ գործունեության ընթացքում: Այսօր ԲՍԿ սկզբունքներն ինտեգրված են նաև Բանկի ռիսկերի կառավարման համակարգում:

Այժմ մենք ուրախ ենք ներկայացնել Ակբա բանկի «Կայուն զարգացման 2025թ. հաշվետվությունը»: Սա պարզապես ամփոփում չէ, այլ մեր հաստատակամության վերահաստատումը՝ շարունակելու կերտել ավելի կայուն, կանաչ և ավելի լավ վաղվա օրը Հայաստանում: Մենք գիտակցում ենք, որ յուրաքանչյուր հաջողված ծրագիր և յուրաքանչյուր կայուն նախագիծ ուղիղ ճանապարհ է դեպի մեր երկրի տնտեսական հզորացումը:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում մեր աշխատակիցներին, բոլոր շահակիցներին, բաժնետերերին, գործընկերներին և հաճախորդներին՝ այս պատասխանատու ճանապարհին Բանկի կողքին լինելու և միասին ավելի բարենպաստ միջավայր ձևավորելու համար: Մենք կշարունակենք առաջնորդվել նույն սկզբունքներով՝ ապահովելով Հայաստանի կայուն զարգացումը:

ՀԱԿՈԲ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Գլխավոր գործադիր տնօրեն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Կայուն զարգացման գլխավոր ձեռքբերումները 2025 թվականին

Կայուն զարգացման գլխավոր ձեռքբերումները 2025 թվականին

Ակբան շարունակել է պահպանել առաջատար դիրքերը թվային բանկային գործառնությունների և ԲՍԿ ոլորտում՝ «Euromoney» պարբերականի կողմից արժանանալով **«Լավագույն ԲՍԿ բանկ»** և **«Լավագույն թվային բանկ Հայաստանում»**:

2025 թվականին կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և կորպորատիվ բարեգործական ծրագրերի իրականացման, Հայաստանի համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, կրթության զարգացմանը, մշակույթի պահպանմանն ու խթանմանը նպաստելու, ինչպես նաև բնության պահպանությանն ու շրջակա միջավայրի զարգացմանն աջակցելու նպատակով Բանկը համագործակցել է ավելի քան 20 կազմակերպության հետ՝ ներդնելով շուրջ **210 միլիոն << դրամ**:

2025 թվականին Ակբա բանկն իրականացրել է արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանության 10 դասընթաց **19 մասնաճյուղի համար, որոնց մասնակցել է 197 աշխատակից**:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ-ների համար կազմակերպվել է ընդհանուր առմամբ **20 անվճար դասընթաց**: Այս դասընթացներին մասնակցել է ընդհանուր առմամբ 381 անձ, այդ թվում՝ 206 կին և 175 տղամարդ, ովքեր ներկայացնում էին **251 ՓՄՁ**:

Վերջին տարիների առաջընթացը

2011թ

- «Սոցիալական և բնապահպանական ռիսկերի կառավարման ընթացակարգի» և էֆինանսավորվող ոլորտների ցանկի՝ «Բացառումների ցանկի» ընդունում:

2015թ

- Վարկային քաղաքականության շրջանակում շրջակա միջավայրին զգալի վնաս հասցնող գործունեության տեսակների (օրինակ՝ ձկնաբուծություն և հանքարդյունաբերություն) ֆինանսավորման սահմանափակումների կիրառում:

2022թ

- Միացում ՄԱԿ-ի «Կանանց լիազորությունների բարձրացման սկզբունքներին» (WEPs):
- Անդամակցություն «Արժեքների վրա հիմնված բանկային գործունեության գլոբալ դաշինքին» (GABV):

2024թ

- Ջերմոցային գազերի (GHG) Scope 1 և Scope 2 արտանետումների հաշվարկ:
- «Euromoney»-ի կողմից ճանաչում որպես «Հայաստանի լավագույն ESG բանկ»:

2025թ


- ԲՍԿ Ռազմավարության մշակում:
- ԲՍԿ Քաղաքականության մշակում:
- ԲՍԿ Ճանապարհային քարտեզի (Roadmap) մշակում:
- «Euromoney»-ի կողմից կրկին ճանաչում որպես «Հայաստանի լավագույն ԲՍԿ բանկ»:
- Ակբա բանկի միացումը «Ածխածնի հաշվառման ֆինանսական գործընկերությանը» (PCAF):

Աշխատակիցների բաշխվածությունն ըստ սեռի՝

Հաճախորդների սպասարկման փորձառությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու քանքերի շրջանակներում բանկին շնորհվել է «MFR» միջազգային վարկանիշային գործակալության Հաճախորդների պաշտպանության ոսկե մակարդակի հավաստագիր (Gold Level Customer Protection Certification), ինչը հաստատում է բանկի համապատասխանությունը հաճախորդների պաշտպանության միջազգային ստանդարտներին:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ - (Scope 1 և Scope 2)



Ակբա բանկի մասին

1. ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ 18

2. ՄԵՐ ԲԻԶՆԵՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22

3. ԲԱՆԿԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 27

4. ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 30

Ակբա բանկի **մասին**

I. Ակբա բանկի համառոտ նկարագիր

30+
տարի շուկայում

66
մասնաճյուղ

1800+
աշխատակիցներ

Ակբա բանկը Հայաստանի ֆինանսական շուկայում գործում է ավելի քան 30 տարի՝ մատուցելով բանկային ծառայությունների լայն տեսականի ողջ երկրի տարածքում: Մենք սպասարկում ենք ավելի քան 690,000 հաճախորդի և ունենք 66 մասնաճյուղից բաղկացած ցանց: Բանկը նաև շարունակում է հատուկ ուշադրություն կենտրոնացնել գյուղատնտեսության ոլորտի աջակցության վրա:

Ակբա բանկն ունի ավելի քան 1,800 աշխատակից և տիրապետում է վճարային հզոր ենթակառուցվածքի, որը ներառում է շուրջ 41,000 POS տերմինալ և 270-ից ավելի բանկոմատ (ATM): Բանկը սպասարկում է նաև մոտավորապես 920,000 քարտ: Ակբա բանկը վարկանշվում է միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից, այդ թվում՝ Fitch Ratings-ի (BB-) և Moody's-ի (Ba3) կողմից:

Ստորև ներկայացված են մեր հիմնական ցուցանիշներից մի քանիսը.

Հիմնական

30+ տարի շուկայում	66 մասնաճյուղ	1,876 աշխատակից	270+ բանկոմատ
41,000+ POS տերմինալ	690,000+ հաճախորդ	920,000 սպասարկվող քարտ	

Financial

1,063 մլրդ << դրամ
ընդհանուր ակտիվներ

736.5 մլրդ << դրամ
մլրդ վարկային պորտֆել

194.6 մլրդ << դրամ
ընդհանուր կապիտալ

35.9 մլրդ << դրամ
Զուտ շահույթ

Market / Credibility

FitchRatings
BB- Rating
Երկարաժամկետ կայուն հեռանկար

Moody's
Ba3 Rating
Երկարաժամկետ կայուն հեռանկար

3
Լավագույն 3 բանկերից մեկը <<-ում

~5,000
շահակիցներ

Կայունության առանցքային ցուցանիշները

89.4%
Թվայնացված գործարքներ

210 մլն. << դրամ
Ներդրումներ ԿՍՊ (Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության) և բարեգործական ծրագրերում

20
ՓՄՁ անվճար դասընթացներ 381 մասնակից / 251 ՓՄՁ

Հաճախորդների պաշտպանության ոսկե մակարդակի հավաստագրում

Բանկի առաքելությունը, տեսլականը և արժեքները

Ակբա բանկում մենք հանձնառու ենք նպաստել հասարակության կայուն զարգացմանը՝ առաջարկելով բացառիկ և նորարարական լուծումներ, որոնք բավարարում են մեր հաճախորդների և շահակիցների կարիքները:

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բացառիկ և նորարարական լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը:

Մեր առաքելությունը կյանքի է կոչվում մեր գործողությունների միջոցով: Դրանք ներառում են ֆերմերներին նպատակային ֆինանսավորման տրամադրումը՝ էկոլոգիապես մաքուր գործելակերպեր որդեգրելու համար, վերականգնվող էներգետիկայի նախագծերի աջակցումը և թվային տրանսֆորմացիայի խթանումը՝ մեր բնապահպանական հետքը նվազեցնելու նպատակով:

Որպես Հայաստանի առաջատար ֆինանսական կառույց՝ մենք ձգտում ենք ճանաչվել նորարարության, թափանցիկության և կայուն գործելակերպերի նկատմամբ մեր հանձնառությամբ: Հզորացնելով անհատներին և բիզնեսներին՝ մենք հավատարիմ ենք մնում մեր արժեքներին՝ խթանելով հասարակական առաջընթացը և ստեղծելով ավելի լուսավոր ու կայուն ապագա բոլորի համար:

Բանկի արժեքներն են՝

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանձնառություն՝ դրականորեն ազդելու համայնքի վրա և խթանելու կայուն զարգացումը:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Վստահության կառուցում և պահպանում հաճախորդների, բաժնետերերի և աշխատակիցների հետ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԽՆԱՄՔ

Բացառիկ սպասարկման տրամադրում և հաճախորդների հետ երկարաժամկետ հարաբերությունների կառուցում:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Թափանցիկության և հստակության ապահովում բոլոր գործառնություններում և հաղորդակցություններում:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ու առաջադեմ լուծումների շարունակական մշակում՝ զարգացող կարիքները բավարարելու համար:


ԱՐԺԵՔՆԵՐ

Ակբա բանկը հանձնառու է ստեղծելու նշանակալի փոփոխություններ, խթանելու նորարարությունը և կառուցելու վստահություն:
Առաջնորդվելով իր հիմնարար արժեքներով՝ ընկերությունը զորացնում է անհատներին ու բիզնեսներին՝ միաժամանակ նպաստելով կայուն զարգացմանն ու հասարակական առաջընթացին:

Մեր ամենօրյա գործարար գործառնություններն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.

- Նպաստել համայնքների զարգացմանը
- Իրականացնել բացառիկ թափանցիկ և հաճախորդամետ գործունեություն
- Խուսափել այնպիսի նախագծերից, որոնք մեծ ռիսկ են ներկայացնում հասարակության և բնության համար
- Ունենալ սոցիալական բաղադրիչը բանկի գործունեության հիմքում

Մեր բաժնետիրական կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.



acba Federation

«Ակբա Ֆեդերացիա»

«Ակբա Ֆեդերացիա» ՓԲԸ-ն 2017 թվականից Ակբա բանկի խոշոր բաժնետերն է՝ իր 75% բաժնեմասի միջոցով ներկայացնելով ավելի քան 75,000 ֆերմերի: Բացի սեփական կապիտալում մասնակցությունից, Ֆեդերացիան հանդես է գալիս որպես զարգացման խթանիչ՝ վերաներդնելով ստեղծված արժեքը գյուղատնտեսության, նորարարության և համայնքների կայուն զարգացման մեջ՝ այս ջանքերը համապատասխանեցնելով կառավարման միջազգային և ԲՍԿ ստանդարտներին:

PROPARCO GROUPE AFD

Պրոպարկո (Proparco)

Պրոպարկոն Ֆրանսիական զարգացման գործակալության (AFD) խմբի դուստր ձեռնարկությունն է և գործում է որպես AFD-ի մասնավոր հատվածի ֆինանսավորման կառույց: Այն Բանկի բաժնետեր է դարձել 2024 թվականի դեկտեմբերից: Պրոպարկոն աջակցում է զարգացող շուկաներում կայուն տնտեսական աճին՝ տրամադրելով երկարաժամկետ ֆինանսավորում, կապիտալ ներդրումներ և տեխնիկական աջակցություն, որոնք համապատասխանում են ԲՍԿ բարձր չափանիշներին:

Ազատ շրջանառվող բաժնետոմսեր (Free Float)

Բանկի բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը պատկանում է շուրջ 5,000 բաժնետիրոջ, այդ թվում՝ անհատ ներդրողների, աշխատակիցների, իրավաբանական անձանց, ներդրումային ընկերությունների և անվանատերերի: Այս դիվերսիֆիկացված բաժնետիրական բազան նպաստում է բաժնետոմսերի իրացվելիությանը, շուկայական տեսանելիությանը և շահակիցների լայն ներգրավվածությանը՝ միաժամանակ ամրապնդելով թափանցիկությունն ու կայուն կորպորատիվ կառավարումը:

2. Մեր բիզնես ուղղությունները, ապրանքներն ու ծառայությունները

(GRI 2-1, GRI 2-6, FN-CB-410a.1)

Ակբա բանկը առաջատար ֆինանսական կառույց է, որն իր գործունեությունն ուղղում է կայուն զարգացման առաջընթացին՝ նորարարական և սոցիալապես պատասխանատու բանկային լուծումների միջոցով: Գործելով Հայաստանի Հանրապետությունում՝ Բանկն ունի շուրջ 5,000 բաժնետիրոջ աջակցությունը և գործում է որպես Բաց Բաժնետիրական Ընկերություն:

Մենք առաջարկում ենք ծառայությունների լայն տեսականի, այդ թվում՝ հաշվի կառավարում, ավանդներ, վարկեր, թվային բանկինգ և արժեթղթերի բրոքերային սպասարկում: Կայուն զարգացման և նորարարության նկատմամբ մեր հանձնառությունը դրդում է մեզ բավարարել մեր հաճախորդների բազմազան կարիքները՝ միաժամանակ խթանելով երկարաժամկետ հասարակական առաջընթացն ու տնտեսական աճը:

Մենք կենտրոնացած ենք կայուն աճի խթանման վրա՝ իրականացնելով մեր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով.

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԱՆԿԻՆԳ	Անհատական ավանդներ, սպառողական վարկեր, օվերդրաֆտներ, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ:
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԻՆԳ	Վարկերի և վարկային այլ գործիքների տրամադրում կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում ու սպասարկում:
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻՆԳ	Վարկավորում գյուղատնտեսական ոլորտի հաճախորդներին, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում ու սպասարկում:
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԳ	Գանձապետարան և ֆինանսներ, ներդրումային բանկային ծառայություններ և կենտրոնական այլ գործառնություններ:


Մեր առաջարկները սպասարկում են անհատներին, կորպորատիվ հաճախորդներին և գյուղատնտեսական ձեռնարկություններին՝ համահունչ լինելով ֆինանսական ներառականությանն ու տնտեսական զարգացմանն աջակցելու մեր առաքելությանը:

Կայուն զարգացմանն ուղղված մեր պրոդուկտներն են. Վերականգնվող էներգետիկայի վարկեր, Էներգաարդյունավետության վարկեր, Սոցիալական հիփոթեքներ, «Կանայք բիզնեսում» վարկեր:

Մեր պրոդուկտների և ծառայությունների և պատասխանատու վարքագծի միջոցով մենք նպաստում ենք մի աշխարհի կերտմանը, որտեղ մեր հաճախորդները, աշխատակիցները, համայնքները և մոլորակը կարող են բարգավաճել: Այս հանձնառությունն ապահովում է երկարաժամկետ ֆինանսական կայունություն մեր հաճախորդների և բաժնետերերի համար:

Գծապատկեր 1. Վարկերի բաշխվածությունն ըստ բանկի գործունեության ուղղությունների

Մեր գործունեության ոլորտները



Մեր մատակարարման շղթան հիմնված է ծառայություններ մատուցողների, ֆինանսական կառույցների և տեխնոլոգիական գործընկերների հետ ռազմավարական գործընկերության վրա՝ ապահովելու համար գործառնական արդյունավետությունն ու կայունությունը: Մենք գիտակցում ենք թափանցիկության և էթիկ գործելակերպի կարևորությունը մեր արժեշղթայի բոլոր փուլերում:

Մեր սպառման շղթայի փոխհարաբերությունները ներառում են հաճախորդներին, վարկառուներին և այլ գործընկերներին, ովքեր օգտագործում են կամ օգտվում են մեր կայուն ֆինանսական պրոդուկտներից և ծառայություններից: Մենք նաև պահպանում ենք ամուր հարաբերություններ ապահովագրական ընկերությունների, վճարային համակարգերի և կարգավորող մարմինների հետ՝ խթանելու համագործակցային մոտեցումը, որն աջակցում է պատասխանատու բիզնես վարքագծին և կարգավորող պահանջների համապատասխանությանը: Այս փոխկապակցված ջանքերի միջոցով մենք նպատակ ունենք դրական ներդրում ունենալ տնտեսության մեջ և պահպանել կայուն զարգացման մեր հանձնառությունները:

Բանկի սպառման շղթայի կառույցները և դրանց գործունեությունը ներառում են.

- «Ակբա Լիզինգը», որը հիմնականում մատուցում է ֆինանսական լիզինգի ծառայություններ,
- «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը», որը հիմնադրվել է Հայաստանում 2013 թվականին: Ընկերությունը համատեղ պատկանում է երկու բաժնետերերի՝ «Ամունդի»-ին (բաժնետոմսերի 51%-ը)՝ եվրոպական առաջատար ակտիվների կառավարչին, և «Ակբա բանկին» (բաժնետոմսերի 49%-ը): Բացի այդ, «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը» կառավարում է երեք պարտադիր կենսաթոշակային ֆոնդ:



Հիմնական գործընկերներն ու ներգրավված ռեսուրսները

Ստորև ներկայացված է այն հիմնական գործընկերների և ռեսուրսների ցանկը, որոնք նպաստում են Ակբա բանկի գործունեությանն ու հաջողությանը: Այս համագործակցություններն ու ռեսուրսները կենսական դեր են խաղում մեր ծառայությունների բարելավման և ռազմավարական նպատակների իրագործման գործում.

acba Federation

«Ակբա Ֆեդերացիայի» մասին

«Ակբա Ֆեդերացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ակբա Ֆեդերացիա) Բանկի մեծամասնական բաժնետերն է, որը 2025 թվականի տարեվերջի դրությամբ տնօրինում է բանկի սեփական կապիտալի 75%-ը:

«Ակբա Ֆեդերացիան» հանձնառու է ապահովել հայաստանյան համայնքների կայուն ապագան՝ ներդնելով նորարարական գյուղատնտեսական լուծումներ և բիզնես մոդելներ, որոնք խթանում են Հայաստանի գյուղական շրջանների զարգացումը: Նրա տեսլականն է ստեղծել բարգավաճող գործարար միջավայր Հայաստանի բոլոր գյուղական համայնքներում՝ հնարավորություն տալով գյուղաբնակներին կերտել իրենց ապագան:

«Ակբա Ֆեդերացիայի» հիմնական ցուցանիշները

83.51 մլրդ << դրամ
շրջանառություն

33.97 մլրդ << դրամ
զուտ շահույթ

7
աշխատակից

Ակբա Լիզինգի մասին

«Ակբա Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ակբա Լիզինգ, Լիզինգ) հիմնադրվել է 2003 թվականին որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Լիզինգը գործում է վարկային կազմակերպության լիցենզիայի հիման վրա և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «<< ԿԲ») կողմից:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ակբա Լիզինգի» միակ բաժնետերը «Ակբա բանկն» է, որին պատկանում է ընկերության բաժնետոմսերի 100%-ը: Ընկերության վերջնական վերահսկողը հանդիսանում է Ակբա Ֆեդերացիան:

Ակբա Լիզինգն իր գործունեությունն իրականացնում է բացառապես գլխամասային գրասենյակի միջոցով և չունի մասնաճյուղեր: Ընկերության նպատակն է նպաստել տնտեսության արտադրողական ոլորտների զարգացմանը և խթանել լիզինգային մշակույթի ամրապնդումը տնտեսության մեջ:

«Ակբա Լիզինգի» հիմնական ցուցանիշները

120.1 մլրդ << դրամ
շրջանառություն

6.6 մլրդ << դրամ
զուտ շահույթ

24.8 մլրդ << դրամ
սեփական կապիտալ

45
աշխատակից

Ակբա բանկի անդամակցություններն ու ասոցիացիաները

(GRI 2-28)

Մենք հանձնառու ենք խթանել կայուն զարգացումը բանկային ոլորտում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Ակտիվորեն անդամակցելով ոլորտի առաջատար ասոցիացիաներին և շահերի պաշտպանության կազմակերպություններին՝ մենք փաստում ենք մեր նվիրվածությունը թափանցիկությանը, էթիկ գործարար վարքագծին և կայուն զարգացմանը: Այս ներգրավվածությունների միջոցով մենք նպատակ ունենք տրամադրել կայուն լուծումներ, բարձրացնել իրազեկվածությունը և անհրաժեշտության դեպքում հեշտացնել բովանդակալից երկխոսությունը շահակիցների հետ ֆինանսական և ԲՍԿ-ին առնչվող հարցերի շուրջ:

Մեր վերջին ձեռքբերումներից էր PCAF-ի (Ածխածնի հաշվառման ֆինանսական գործընկերություն) անդամ դառնալը՝ միանալով համաշխարհային այն համայնքին, որը հանձնառու է բարձրացնել թափանցիկությունը և ամրապնդել ջերմոցային գազերի (GHG) հաշվառման մեթոդաբանությունը ֆինանսական ոլորտում: Այս համագործակցությունը ձևավորում է ակտիվ, գիտելիքների փոխանակման ցանց, որը կենտրոնացած է չափելի գործողությունների խթանման վրա:

Բանկի անդամակցությունների և գործընկերությունների մանրամասները

GABV (Արժեքների վրա հիմնված բանկային գործունեության գլոբալ դաշինք)

Անկախ բանկերի ցանց, որն օգտագործում է ֆինանսները՝ կայուն տնտեսական, սոցիալական և բնապահպանական զարգացում ապահովելու համար:

Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի միություն, որի նպատակն է ներկայացնել իր անդամների կորպորատիվ շահերը:

Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատ (CCI France Armenia)

Աշխատում է Ֆրանսիայի և Հայաստանի միջև տնտեսական հարաբերությունների զարգացման և Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հաստատման խթանման ուղղությամբ:

«Արմենիան Քարդ» վճարային համակարգի հիմնադիր անդամ

ArCa-ն ապահովում է արագ, հուսալի և անվտանգ գործարքներ՝ առաջարկելով հարմարավետ ֆինանսական լուծումներ բիզնեսի և օգտատերերի համար՝ աջակցելով անկախիկ վճարումների ոլորտում Հայաստանի անկախությանը:

Visa International վճարային համակարգի լիիրավ անդամ

Visa-ն թվային վճարային տեխնոլոգիաների վստահելի համաշխարհային առաջատարն է, որը կապում և հնարավորություն է տալիս անհատներին, բիզնեսներին և տնտեսություններին զարգանալ ու բարգավաճել:

JCB վճարային համակարգի լիիրավ անդամ

Համաշխարհային վճարային բրենդ և վարկային քարտեր թողարկող ընկերություն, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Տոկիոյում (Ճապոնիա): Այն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի առաջատար վճարային համակարգերից մեկն է:

UnionPay վճարային համակարգի լիիրավ անդամ

Առաջարկում է անվտանգ, ծախսարդյունավետ, անդրսահմանային վճարային ծառայություններ աշխարհի խոշորագույն քարտապանների բազային՝ ապահովելով հարմարավետ տեղական ծառայություններ UnionPay քարտապանների և առևտրականների համար ողջ աշխարհում:

PCAF (Ածխածնի հաշվառման ֆինանսական գործընկերություն) ստորագրող

PCAF-ի ստորագրողները ֆինանսական կազմակերպություններ են, որոնք պարտավորվում են օգտագործել PCAF ստանդարտները՝ չափելու և բացահայտելու իրենց ֆինանսական գործունեության հետ կապված ջերմոցային գազերի (GHG) արտանետումները:

Mastercard Europe վճարային համակարգի ասոցիացված անդամ

Ապահովում է թվային իրական ժամանակում վճարային ենթակառուցվածքների, հաշիվների վճարման, էլեկտրոնային հաշիվների ներկայացման հավելվածների և բաց բանկային էկոհամակարգերի գործունեությունը:

American Express վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչ

Համաշխարհային վճարային համակարգ, որն առաջարկում է վարկային, դեբետային քարտեր և վճարային ծառայություններ: Այն գործում է աշխարհի ավելի քան 130 երկրներում:

3. Բանկի ձեռքբերումները

(GRI 201-1)

2025 թվականին մենք արձանագրեցինք մեր պատմության մեջ ամենաբարձր ֆինանսական ցուցանիշները: Ակբա բանկի և Ակբա Լիզինգի համախմբված զուտ շահույթը կազմել է 35,9 միլիարդ << դրամ՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով 24,7% աճ:

Վարկային պորտֆելն ընդլայնվել է 17,0%-ով և 2025 թվականի վերջի դրությամբ հասել 736,5 միլիարդ << դրամի՝ փաստելով Ակբա բանկի և Ակբա Լիզինգի՝ երկրի տնտեսական ակտիվությանն աջակցելու կարողությունը: ՓՄՁ և կորպորատիվ վարկավորումը շարունակել է կազմել մեր պորտֆելի ամենամեծ մասնաբաժինը, որին հաջորդում են մանրածախ և գյուղատնտեսական հատվածները:

Բանկի և Ակբա Լիզինգի ընդհանուր համախմբված ակտիվները 2025 թվականի տարեվերջի դրությամբ աճել են 14,0%-ով՝ կազմելով 1,063 միլիարդ << դրամ, ինչը ներկայացնում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր ակտիվների 8,2%-ը: Այս արդյունքն արտացոլում է մեր առողջ հիմնարար ցուցանիշները, ռիսկերի կառավարման հզոր գործելակերպը և ինչպես հաճախորդների, այնպես էլ գործընկերների կողմից մեր հանդեպ ունեցած վստահությունը:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ընդհանուր կապիտալը կազմել է 194,6 միլիարդ << դրամ՝ արձանագրելով 19,0% աճ տարեսկզբի համեմատ: Այն դեպքում, երբ բանկային հատվածում ընդհանուր առմամբ նկատվել է կապիտալի կայուն աճ, Ակբա բանկի երկնիշ աճը վերահաստատում է նրա դիրքը Հայաստանի լավագույն 3 խոշորագույն բանկերի շարքում:

Ֆինանսական ցուցանիշներից զատ, մենք շարունակել ենք խթանել ֆինանսական ներառականությունը, հատկապես խոցելի բնակչության և թերսպասարկվող համայնքների համար: Մեր լայնածավալ վճարային ցանցը մեծ քաղաքային կենտրոններից հասնում է մինչև գյուղական և հեռավոր սահմանամերձ բնակավայրեր՝ խթանելով թափանցիկ բիզնես գործելակերպը և հասանելի դարձնելով ժամանակակից վճարային լուծումները բնակիչների ու զբոսաշրջիկների համար:

Մենք նաև մասնակցել ենք բնապահպանական և սոցիալական նպատակներ հետապնդող մի շարք պետական աջակցության ծրագրերի: Առանցքային նախաձեռնություններից է «Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային հասանելիության պետական աջակցության ծրագիրը», որն առաջարկում է սուբսիդավորվող կառուցապատման վարկեր՝ ուղղված գյուղական շրջանների զարգացմանը:

2025 թվականի վերջի դրությամբ մեր ենթակառուցվածքն ընդլայնվել է՝ ներառելով ավելի քան 270 բանկոմատ (ATM) և շուրջ 41,000 POS տերմինալ: Այս ընդլայնումը մեծացնում է հասանելիությունը մեր հաճախորդների համար և աջակցում է մեր ԲՍԿ հանձնառություններին՝ նվազեցնելով տրանսպորտի հետ կապված ջերմոցային գազերի (GHG) արտանետումները, քանի որ հաճախորդները կարող են օգտվել ֆինանսական ծառայություններից իրենց բնակավայրին մոտ և նվազագույնի հասցնել ճամփորդելու անհրաժեշտությունը:

Առանցքային նպատակների և վերջին տարիների առաջընթացի ամփոփում

Պատասխանատու աճի սկզբունքներին համահունչ՝ բանկը վերջին տարիներին աստիճանական քայլեր է ձեռնարկել՝ աջակցելու ցածր ածխածնային տնտեսությանն անցմանը: Այս ջանքերն արտացոլում են աճող կենտրոնացումը կլիմայական ռիսկերի ընկալման, շահակիցների զարգացող սպասումներին արձագանքելու և կայուն ֆինանսավորման հետ կապված հնարավորությունների բացահայտման վրա:

Այս առաջընթացի հիմնական տարրերը ներառում են.

- Միջանկյալ նպատակների սահմանումն ու բացահայտումը,
- Հաճախորդների հետ երկխոսության ընդլայնումը՝ նրանց անցումային մարտահրավերներն ու կարիքները ավելի լավ հասկանալու համար,
- Կլիմայական լուծումներին ուղղված սկզբնական ներդրումներն ու նախաձեռնությունները:

Զուգահեռաբար, բանկը սկսել է մշակել որոշումների կայացման համար օգտակար ցուցանիշներ և չափանիշներ՝ներքին մոնիթորինգի և հաշվետվողականության աջակցման, ինչպես նաև ապագա ռազմավարական և ռիսկերին առնչվող որոշումների կայացման համար: Համապատասխան դեպքերում բանկը մասնակցում է նաև ոլորտային քննարկումներին ու համագործակցություններին և հետևում է ընդունված ուղեցույցներին՝ կայուն զարգացմանն առնչվող իր բացահայտումների որակն ու հետևողականությունը բարելավելու համար:

Մեր ԲՍԿ ճանապարհի մեկ այլ կարևոր գործոն է միջազգային համագործակցության ընդլայնումը:

Զարգացման առանցքային փուլերը (Ժամանակագրություն)

2011թ.

- «Սոցիալական և բնապահպանական ռիսկերի կառավարման ընթացակարգի» և ֆինանսավորման ոչ ենթակա գործունեության տեսակների «Բացառումների ցանկի» ընդունում:

2015թ.

- Վարկային քաղաքականության շրջանակներում շրջակա միջավայրին զգալի վնաս հասցնող գործունեության տեսակների (օրինակ՝ ձկնաբուծություն և հանքարդյունաբերություն) ֆինանսավորման սահմանափակումների կիրառում:

2022թ.

- Միացում ՄԱԿ-ի «Կանանց լիազորությունների բարձրացման սկզբունքներին» (WEPs):
- Անդամակցություն «Արժեքների վրա հիմնված բանկային գործունեության գլոբալ դաշինքին» (GABV):

2024թ.

- Ջերմոցային գազերի (GHG) Scope 1 և Scope 2 արտանետումների հաշվարկ:
- «Euromoney»-ի կողմից ճանաչում որպես «Հայաստանի լավագույն ԲՍԿ բանկ»:

2025թ.

- ԲՍԿ Ռազմավարության մշակում:
- ԲՍԿ Քաղաքականության մշակում:
- ԲՍԿ Ճանապարհային քարտեզի (Roadmap) մշակում:
- «Euromoney»-ի կողմից կրկին ճանաչում որպես «Հայաստանի լավագույն ԲՍԿ բանկ»:
- Ակբա բանկի միացումը «Ածխածնի հաշվառման ֆինանսական գործընկերությանը» (PCAF):

- 2022 թվականին «Արժեքների վրա հիմնված բանկային գործունեության համաշխարհային դաշինքին» (GABV) միանալուց ի վեր, մենք առաջնահերթություն ենք տվել սոցիալական և բնապահպանական ազդեցություններին և մեր գործառնությունները համապատասխանեցրել կայուն ու էթիկ բանկային գործելակերպին: Մենք դիտարկում ենք ֆինանսները որպես կայուն զարգացման կատալիզատոր և աջակցում ենք թերսպասարկվող համայնքներին: Հաջողության մեր սահմանումը դուրս է գալիս ֆինանսական ցուցանիշների սահմաններից՝ներառելով մեր ստեղծած դրական ազդեցությունները:
- Այս հիմքի վրա կառուցված մեր վերջին անդամակցությունը «Ածխածնի հաշվառման ֆինանսական գործընկերությանը» (PCAF) կարևոր հանգրվան է հանդիսանում: Միանալով PCAF ստորագրողների համաշխարհային ցանցին՝ մենք ամրապնդում ենք մեր մոտեցումը կլիմայի հետ կապված բացահայտումների թափանցիկության և հաշվետվողականության հարցում:

4. ԲՍԿ Ռազմավարություն

ՄԵՐ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԻՐԱԽՆԵՐԸ

(GRI 2-22)

Ակբա բանկում կլիմայի հետ կապված նպատակները և կայուն զարգացման ավելի լայն թիրախները սահմանված են երկու հիմնական ռազմավարական փաստաթղթերում.

- **ԲՍԿ ռազմավարություն (2025–2028 թթ.)**
- **Ճանապարհային քարտեզ (2025–2028 թթ.)**

Բոլոր ժամանակային հորիզոններում առաջնահերթությունները ձևավորվում են Բանկի գործառնական միջավայրի և կլիմայի հետ կապված զարգացող սպասումների հիման վրա:

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2025թ.)

- Ներդնել Կանաչ վարկավորման համակարգը և վերապատրաստել աշխատակիցներին:
- Ստանալ անկախ փորձագիտական կարծիք Կանաչ պարտատոմսերի համակարգի և դրա կիրառման վերաբերյալ:
- Շարունակել ՓՄՁ-ների համար արտաքին դասընթացների իրականացումը ԲՍԿ համակարգի շրջանակներում:

Բանկը սահմանել է փուլային կլիմայական նպատակներ և թիրախներ, որոնք արտացոլում են նրա ներկայիս հասունության մակարդակը, հասանելի ռեսուրսները և ռազմավարական առաջնահերթությունները: Այս նպատակներն աջակցում են կլիմայական գործոնների ինտեգրմանը բիզնես գործունեության, ռիսկերի կառավարման և որոշումների կայացման մեջ:

Կարճաժամկետ հեռանկարում բանկը կենտրոնացած է կլիմայի և կայուն զարգացման գործոնները հիմնական բանկային գործունեության մեջ ինտեգրելու հիմքերի ստեղծման վրա: 2025 թվականի առանցքային նպատակը Կանաչ վարկավորման համակարգի ներդրումն է, որն ուղեկցվելու է կանաչ ֆինանսավորման սկզբունքների, համապատասխանության չափանիշների և ներքին գործընթացների վերաբերյալ աշխատակիցների վերապատրաստմամբ:

Բանկը նաև նախատեսում է ստանալ անկախ փորձագիտական կարծիք իր Կանաչ պարտատոմսերի համակարգի համար և սկսել դրա կիրառումը: Սա նպատակ ունի բարձրացնել Բանկի կանաչ ֆինանսավորման գործունեության վստահելիությունն ու թափանցիկությունը և աջակցել կայուն կապիտալի շուկաներ մուտք գործելուն: Բանկը նաև կշարունակի ՓՄՁ-ների համար տրամադրել ԲՍԿ-ին առնչվող դասընթացներ՝ ամրապնդելու նրանց ԲՍԿ գործելակերպերը և կլիմայական ռիսկերի ու հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածությունը:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2026-2027 թթ.)

- Հաշվարկել կանաչ վարկային պորտֆելի մասնաբաժինը ընդհանուր պորտֆելում:
- Գնահատել թիրախները՝ ուղղված միջազգային ֆինանսավորման ներգրավմանը՝ վերականգնվող էներգետիկայի և ցածր ածխածնային արդյունաբերության ճյուղերին աջակցելու համար:
- Հանրայնորեն զեկուցել Scope 1 և Scope 2 արտանետումների վերաբերյալ:
- Մշակել և ներդնել կլիմայական ֆիզիկական ռիսկերի կառավարման համակարգը:
- Բարելավել ներքին ԲՍԿ համակարգի վերապատրաստման նյութերն ըստ անհրաժեշտության:

Միջնաժամկետ փուլում բանկը կենտրոնանալու է վերլուծական կարողությունների հզորացման, տվյալների հասանելիության բարելավման և կլիմայական գործոնները պորտֆելի կառավարման ու ռիսկերի գնահատման համակարգերում առավել լիարժեք ինտեգրելու վրա: Այս ժամանակահատվածի առանցքային նպատակներից է գնահատել և քանակապես չափել կանաչ վարկային պորտֆելի մասնաբաժինը բանկի ընդհանուր վարկային պորտֆելում:

Բանկը նաև նախատեսում է գնահատել թիրախները՝ ուղղված վերականգնվող էներգետիկայի նախագծերի և ցածր ածխածնային արդյունաբերության ճյուղերի համար միջազգային ֆինանսավորման ներգրավմանը՝ համապատասխանեցնելով իր ֆինանսավորման ռազմավարությունը կլիմայի հետ կապված առաջնահերթություններին:

Միջնաժամկետ փուլը ներառում է նաև ավելի մեծ կենտրոնացում թափանցիկության և բացահայտման վրա: Բանկը նպատակ ունի հանրայնորեն զեկուցել Scope 1 և Scope 2 ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ՝ հիմնվելով նախկինում կատարված կամավոր հաշվարկների վրա:

Բանկը մտադիր է նաև մշակել և ներդնել ֆիզիկական ռիսկերի կառավարման համակարգ, որն սկզբնական շրջանում կենտրոնացած կլինի ֆիզիկական ռիսկերի հիմնական գործոնների բացահայտման և որակական գնահատման վրա: ԲՍԿ վերապատրաստման նյութերը կվերանայվեն և կթարմացվեն՝ ըստ անհրաժեշտության:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2028թ. ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ)

- Ներկայացնել հաշվետվություն կլիմայական ֆիզիկական ռիսկերի վերաբերյալ:
- Մշակել հստակ, տվյալների վրա հիմնված տեսլական, որը կուրվագծի մինչև 2035 թվականն արտանետումների զուտ զրոյական մակարդակի հասնելու ուղին:

Երկարաժամկետ հեռանկարում բանկը նպատակ ունի ամրապնդել կլիմայական ռիսկերի գնահատման և անցումային փուլի պլանավորման իր մոտեցումները, այդ թվում՝ կլիմայի հետ կապված ֆիզիկական ռիսկերի վերաբերյալ հատուկ հաշվետվության պատրաստման միջոցով:

Բանկը մտադիր է նաև մշակել հստակ, տվյալների վրա հիմնված երկարաժամկետ տեսլական՝ մինչև 2035 թվականն արտանետումների զուտ զրոյական հնարավոր ամենաբարձր մակարդակին հասնելու համար՝ հաշվի առնելով տվյալների հասանելիությունը, տեխնոլոգիաները, կարգավորող պահանջները և բանկի բիզնես մոդելը:

Բանկը գիտակցում է, որ կլիմայական գործունեության արդյունքների չափումը դեռևս սահմանափակված է տվյալների հասանելիությամբ, որակով և զարգացող մեթոդաբանություններով: Ժամանակի ընթացքում այն կշարունակի ուժեղացնել տվյալների վերլուծության իր կարողությունները և ներքին գործընթացները: Հաշվի առնելով արտաքին միջավայրի բարդությունը՝ առաջընթացը կարող է գծային չլինել, սակայն փուլային մոտեցումը հստակ հիմք է հանդիսանում Բանկի կլիմայական և կայուն զարգացման գործելակերպի հետագա զարգացման համար:

ԲՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(GRI 2-23)

2025 թվականին մենք մշակել և ներդրել ենք մեր ԲՍԿ Քաղաքականությունը, որը սահմանում է բանկի մոտեցումը բիզնեսի և շահակիցների վրա ազդող բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) հարցերի կառավարման վերաբերյալ:

Քաղաքականության նպատակն է ինտեգրել ԲՍԿ գործոնները բանկի բոլոր գործառնություններում՝ արտացոլելով բանկի հանձնառությունը հետևյալ ուղղություններով.

- *Էկոլոգիապես կայուն գործարար պրակտիկայի կիրառում,*
- *Դրական ազդեցության ապահովում շահակիցների վրա,*
- *Կորպորատիվ կառավարման և բիզնես էթիկայի բարձր չափանիշների պահպանում:*

Քաղաքականությունը տարածվում է Տնօրենների խորհրդի, Գործադիր ղեկավարության և բոլոր բիզնես ու ֆունկցիոնալ ստորաբաժանումների վրա: ԲՍԿ գործոնները ներդրված են բանկի քաղաքականություններում ու ընթացակարգերում, և բոլոր աշխատակիցներից պահանջվում է պահպանել դրանք իրենց գործունեության ընթացքում:

Քաղաքականությունն ընդգրկում է բանկի բոլոր գործառնությունները, բիզնես ուղղությունները և գործընկերներին, այդ թվում՝ կորպորատիվ կառավարումն ու էթիկ վարքագիծը, վարկավորման որոշումները, գնումների և մատակարարման շղթայի կառավարումը, ինչպես նաև ներքին այլ գործառնություններն ու ռեսուրսների օգտագործումը:

ԲՍԿ Սկզբունքներն ըստ ուղղությունների

Քաղաքականությունը սահմանում է բանկի ԲՍԿ սկզբունքները բնապահպանական, սոցիալական և կառավարման տիրույթներում: Դրանք հետագայում մանրամասնվում և կիրառության մեջ են դրվում բանկի ԲՍԿ Ռազմավարության և Ճանապարհային քարտեզի միջոցով, որոնք սահմանում են կոնկրետ գործողություններ, թիրախներ և ժամկետներ.

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ (ENVIRONMENTAL)	Բանկը հանձնառու է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանը, իր գործառնական էկոլոգիական հետքի կրճատմանը, մատակարարման շղթայում պատասխանատու գործելակերպի խթանմանը և ջրային ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը:
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ (SOCIAL)	Բանկը խթանում է ներառական և անվտանգ աշխատատեղերի ստեղծումը, աջակցում է համայնքների զարգացմանը պատասխանատու ֆինանսավորման ու գործընկերությունների միջոցով, ինչպես նաև ձգտում է ապահովել հաճախորդների արդարացի և թափանցիկ սպասարկումը:
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (GOVERNANCE)	Բանկը հանձնառու է ամուր կորպորատիվ կառավարմանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի, ինչպես նաև ԲՍԿ վերահսկողությանը, թափանցիկությանը, հաշվետվողականությանն ու էթիկ վարքագծին:

Բնապահպանական ուղղության հանձնառություններն ու գործողությունները

- **Կլիմայի փոփոխության մեղմացում և անցում ցածր ածխածնային տնտեսության.** Կլիմայական չեզոքության հավակնություն, ֆինանսավորվող արտանետումների վրա կենտրոնացում (Scope 3), կանաչ վարկեր և պարտատոմսեր, արտանետումների բացահայտում (Scopes 1 և 2), կլիմայական ֆիզիկական ռիսկերի կառավարում:
- **Գործառնական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.** Էներգաարդյունավետություն, կայուն շենքեր, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, թափոնների և ջրի կառավարում, ցածր ածխածնային տրանսպորտ:
- **Պատասխանատու մատակարարման շղթա** Կլիմայի փոփոխության մեղմացում և անցում ցածր ածխածնային տնտեսության:
- **Ջրային ռեսուրսների խնամքով օգտագործում.** Ջրի պատասխանատու օգտագործում, կլիմայակայուն գյուղատնտեսություն, ոռոգման համակարգերի բարելավման իրազեկվածության բարձրացում և ֆինանսավորում:

Սոցիալական ուղղության հանձնառություններն ու գործողությունները

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՏԵՂ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ	Անվտանգ և ներառական աշխատատեղի ապահովում, մարդու իրավունքների պահպանում, բազմազանություն և ներառականություն մասնագիտական զարգացում, բարեկեցություն և աշխատանքկյանք հավասարակշռություն:
ՀԱՄԱՅՆՔՆԵՐ	Աջակցություն սոցիալ-տնտեսական զարգացմանը, գործընկերություն տեղական կառույցների և ՀԿ-ների հետ, աշխատակիցների կամավորական գործունեություն:
ՀԱԾԱԽՈՐԴՆԵՐ	Արդար և թափանցիկ արտադրատեսակներ, պատասխանատու ֆինանսավորում, թվային ներառականություն, բողոքների արդյունավետ լուծում, ֆինանսական գրագիտության բարձրացում, անձնական տվյալների պաշտպանություն:

Կառավարման ուղղության հանձնառություններն ու գործողությունները

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (CORPORATE GOVERNANCE)	Համապատասխանություն ազգային կորպորատիվ կառավարման կանոնագրքերին, թափանցիկություն և հաշվետվողականություն, որոշումների կայացման հստակ կառուցվածքների առկայություն:
ԲՍԿ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ (ԲՍԿ	Կայուն զարգացման հաշվետվողականություն ԲՍԿ ռիսկերի և արդյունքների մոնիթորինգ, ԲՍԿ-ի հետ կապված հիմնական կատարողական ցուցանիշների կիրառում:
ԷԹԻԿԱ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ	Վարքագծի և էթիկայի կանոնագրքեր, անաչառություն ու պատասխանատվություն, էթիկ խնդիրների մասին բարձրաձայնման և դրանց արձագանքման մեխանիզմների ապահովում:

ԲՍԿ Կառավարման Համակարգն ու Հաշվետվողականությունը

Բանկը ներդրել է կառավարման հստակ ԲՍԿ համակարգ սահմանելով Տնօրենների խորհրդի, գործադիր ղեկավարության, կոմիտեների և վերահսկողական գործառույթների դերերն ու պատասխանատվությունը:

ԲՍԿ-ի նկատմամբ ընդհանուր վերահսկողության պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը՝ կից մասնագիտացված կոմիտեների և գործադիր մարմինների աջակցությամբ: Ամենօրյա իրականացումն առաջնորդվում է գործադիր ղեկավարության և համապատասխան բիզնես ու ֆունկցիոնալ ստորաբաժանումների կողմից, իսկ անկախ վերահսկողությունն ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների միջոցով:

Մանրամասն դերերն ու պատասխանատվությունները ներկայացված են Կառավարման գլխի «Կայուն կառավարում» բաժնում:

Հաշվետվողականության և բացահայտման պարտավորությունները

Համաձայն ԲՍԿ Քաղաքականության՝ բանկը պարտավոր է.

- Տարեկան կտրվածքով հրապարակել Կայուն զարգացման հաշվետվություն և Կորպորատիվ կառավարման հաշվետվություն (ներառյալ՝ Կորպորատիվ կառավարման հայտարարագիրը)՝ համաձայն << Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և միջազգային ստանդարտների:
- Տարեկան կտրվածքով տրամադրել համապատասխան շահակիցներին Ազդեցության մոնիթորինգի հաշվետվություններ, ինչպես նաև Բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի հաշվետվություններ:
- Բացահայտել համապատասխան շահակիցներին բանկին առնչվող ԲՍԿ-ի հետ կապված ցանկացած պահանջ կամ միջադեպ:
- Ներկայացնել հաշվետվություններ միջազգային կամ տեղական ֆինանսական կազմակերպություններին (ըստ պահանջի)՝ արտացոլելով յուրաքանչյուր վարկային և լիզինգային գործարքի հետ կապված ԲՍԿ ցուցանիշները:
- Տրամադրել հաշվետվություններ պայմանագրային ժամկետներին համապատասխան, որոնք հավաստում են վարկային պորտֆելի համապատասխանությունը ԲՍԿ պահանջներին և/կամ արտացոլում են պորտֆելի՝ ԲՍԿ-ին առնչվող ցուցանիշները:

էականության գնահատում

1. ՄԵՐ ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ 39

2. ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ 40

Էականության գնահատում

1. Մեր էական թեմաները

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

(GRI 3-1, GRI 3-2, GRI 2-29)

Ակբա բանկի «Կայուն զարգացման հաշվետվությունը» մշակվել է համապարփակ և ներառական գործընթացի միջոցով, որը շահակիցների ներգրավվածությունը դնում է մեր կայուն կառավարման կենտրոնում: Համահունչ լինելով հաշվետվողականության առաջատար միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ «Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնությանը» (GRI) և «Կայուն զարգացման հաշվառման ստանդարտների խորհրդին» (SASB)՝ մեր մոտեցումը հիմնված է շարունակական երկխոսության, թափանցիկության և այն բանի խորը ընկալման վրա, թե ինչպես են մեր գործառնությունները ազդում մեր շահակիցների վրա և ինչպես են նրանք ազդում մեր գործառնությունների վրա:

Շահակիցների ներգրավվածությունը ձևավորում է մեր էականության գնահատման հիմքը: Կառուցվածքային զրույցների, հարցումների և ներքին գնահատման գործընթացների միջոցով մենք ձգտում ենք հասկանալ այն խմբերի մտահոգությունները, սպասումներն ու տեսակետները, որոնց կյանքը, աշխատանքը և միջավայրը առնչվում են բանկի գործունեության հետ: Այս գործընթացը հնարավորություն է տալիս Ակբա բանկին բացահայտել փաստացի ու պոտենցիալ ազդեցությունները, ամրապնդել ռազմավարական որոշումների կայացման որակը և ինտեգրել կայուն զարգացման գործոնները երկարաժամկետ պլանավորման մեջ: Շահակիցների ներգրավման և էականության գնահատման մեթոդաբանության վերաբերյալ հավելյալ մանրամասները ներկայացված են Հավելված 1-ում:

Շահակիցների ներգրավման հիմնական նպատակն է բացահայտել այն խմբերը, որոնք ներկայումս կրում են կամ հավանական է, որ կկրեն Ակբա բանկի գործառնությունների ազդեցությունը արժեշղթայի ողջ երկայնքով: Ակտիվորեն լսելով շահակիցներին և ներառելով նրանց հետադարձ կապը՝ բանկն ապահովում է, որ իր կայուն զարգացման ջանքերն արտացոլեն տարբեր խմբերի շահերն ու սպասումները՝ միաժամանակ ամրապնդելով վստահության և թափանցիկության վրա հիմնված հարաբերությունները:

Ներգրավվածությունը նաև վերահաստատում է կայուն զարգացման թեմաների արդիականությունը յուրաքանչյուր շահակից խմբի տեսանկյունից: Նրանց կոնկրետ կարիքների ու մարտահրավերների ընկալումը հնարավորություն է տալիս բանկին ավելի արդյունավետ հասցեագրել էական ռիսկերն ու հնարավորությունները, համապատասխանել գլոբալ ԲՍԿ սպասումներին և նպաստել կայուն զարգացմանը ազգային և տարածաշրջանային մակարդակներում: Այս գործընթացի արդյունքում բացահայտվել է ներքին և արտաքին շահակիցների յոթ խումբ:

15%
Կարգավորող և պետական մարմիններ

15%
Հաճախորդներ

15%
Աշխատակիցներ

18%
Կառավարում

16%
Ներդրողներ/ շահակիցներ

10%
Քաղաքացիական հասարակություն

11%
Մատակարարներ / Գործարար գործընկերներ

Գծապատկեր 2. Էականության գնահատման գործընթացի միջոցով բացահայտված շահակիցների խմբերը

2. Էական թեմաների ցանկ


Ակբա բանկի էականության գնահատումն իրականացվել է որպես կառուցվածքային, բազմափուլ գործընթաց, որը նախագծված է բացահայտելու այն տնտեսական, բնապահպանական և սոցիալական թեմաները, որոնք արտացոլում են Բանկի առավել նշանակալի ազդեցությունները՝ միաժամանակ համապատասխանելով կայուն զարգացման բացահայտման միջազգային պրակտիկային: Որպես մեր ընդհանուր մոտեցման երկրորդ մաս (որը հաջորդում է շահակիցների բացահայտմանն ու ներգրավմանը)՝ այս գնահատումը համախմբում է համեմատական վերլուծությունը, ազդեցության գնահատումը և շահակիցների առաջնահերթությունների սահմանումը մեկ միասնական մեթոդաբանության մեջ՝ համահունչ GRI և SASB սկզբունքներին:

Էականության գնահատման նպատակն է ապահովել, որ Ակբա բանկի հաշվետվողականությունը կենտրոնանա առավել կարևոր հարցերի վրա. այն հարցերի, որոնք ներկայացնում են նշանակալի փաստացի կամ պոտենցիալ ազդեցություն մարդկանց ու շրջակա միջավայրի վրա, և նրանց, որոնք ազդում են մեր շահակիցների գնահատականների ու որոշումների վրա:

Շահակիցներից հավաքագրված հետադարձ կապը համախմբվել և վերլուծվել է՝ գնահատելու բանկի կողմից բացահայտված էական թեմաների հարաբերական կարևորությունն ու առաջնահերթությունը: Այս գնահատման արդյունքում ձևավորվել է ինը էական թեմաների ամփոփ ցուցակ՝ ըստ ԲՍԿ հիմնական ուղղությունների:

Առաջնահերթությունները պատկերելու համար մշակվել է էականության մատրիցը որտեղ յուրաքանչյուր թեմա տեղորոշված է ըստ շահակիցների համար դրա կարևորության և բանկի բիզնեսի համար դրա նշանակալիության:

Գծապատկեր 3. Էականության մատրից



Մենեջմենթի մոտեցումը (GRI 3-3)

Այս էական թեմաների վերաբերյալ հաշվետվողականությունը համապատասխանում է GRI 3-3 բացահայտման ստանդարտին, որը պահանջում է պարզաբանել, թե ինչպես է բանկը կառավարում յուրաքանչյուր էական թեմա և, կիրառելիության դեպքում, հղում կատարել համապատասխան GRI Թեմատիկ Ստանդարտներին: Այս ստանդարտները սահմանում են կոնկրետ գործողություններ, գործընթացներ և կառավարչական մոտեցումներ, որոնք օգտագործվում են յուրաքանչյուր թեմային կառուցվածքային և թափանցիկ եղանակով հասցեագրելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ 1: ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

ԷԱԿԱՆ ԹԵՄԱ	ԷԱԿԱՆ ԽՆԴԻՐ	ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	Արտանետումներ	Միջին
	Էներգիա	Միջին
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	Զբաղվածություն	Բարձր
	Աշխատանքային/Կառավարչական հարաբերություններ	Բարձր
	Ուսուցում և կրթություն	Միջին
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ	Պրոֆեսիոնալ առողջություն և անվտանգություն	Բարձր
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Բազմազանություն և հավասար հնարավորություններ	Բարձր
ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ	Հակակոռուպցիա	Բարձր
	Գործարար էթիկա	Միջին

ԷԱԿԱՆ ԹԵՄԱ	ԷԱԿԱՆ ԽՆԴԻՐ	ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԲՍԿ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	Բնապահպանական, սոցիալական և կառավարչական գործոնների ներառում վարկային վերլուծության մեջ	Բարձր
ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ	Հակակոռուպցիա	Բարձր
	Գործարար էթիկա	Միջին
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	Հաճախորդների գաղտնիություն	Բարձր
	Տվյալների անվտանգություն	Բարձր
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	Տնտեսական գործունեության արդյունավետություն	Միջին
	Անուղղակի տնտեսական ազդեցություններ	Միջին
ԿԱՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	Ֆինանսական ներառականություն և կարողությունների զարգացում	Միջին
	Պատասխանատու/կայուն ներդրումներ	Բարձր
	Սոցիալական ֆինանսավորման/ Մատչելի բնակարանային ապահովման ծրագրեր	Բարձր

Կառավարում

1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 46
2. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹԻԿԱ 61
3. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 74



Կառավարում

1. Կորպորատիվ կառավարում

Բանկը հանձնառու է կորպորատիվ կառավարման բարձրագույն չափանիշներին՝ կիրառելով Հայաստանի Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներն ու միջազգային լավագույն փորձը: Թափանցիկությունը, հաշվետվողականությունը և էթիկ որոշումների կայացումը հիմնարար են կառավարման բոլոր մակարդակներում: Խորհուրդը վերահսկում է էթիկ չափանիշների և կայունության նպատակների իրագործումը՝ ապահովելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական (ԲՍԿ) գործոնների ներառումը ռազմավարական առաջնահերթություններում և օպերատիվ գործունեության մեջ: 2024 թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի ուժի մեջ մտնելուց հետո բանկն անցում է կատարել հայկական կանոնագրքի կիրառմանը: Մեր կորպորատիվ կառավարումն առաջնահերթորեն ուղղված է շահագրգիռ կողմերի շահերի պաշտպանությանը՝ միաժամանակ հաշվի առնելով հանրային բարիքը և ապահովելով երկարաժամկետ կայունություն: Ակբա բանկի կառավարման հիմքում ընկած է մեր բոլոր շահագրգիռ կողմերի վստահության ձևավորումն ու պահպանումը՝ հաշվի առնելով ավանդատուների, բաժնետերերի, աշխատակիցների և այլ առնչվող կողմերի օրինական շահերը: Բացի այդ, մենք արդյունավետ հարաբերություններ ենք պահպանում վերահսկող մարմնի՝ << Կենտրոնական բանկի (ԿԲ) հետ: Գիտակցելով **ԲՍԿ** գործոնների արդյունավետ կառավարման կարևորությունը՝ Բանկում ձևավորվել են մասնագիտացված թիմեր, որոնք համակարգում և վերահսկում են այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

(GRI 2-9, GRI 2-11)

Բանկը գործում է կառավարման եռաստիճան կառուցվածքով, որը բաղկացած է Բաժնետերերի ընդհանուր ժողովից, Խորհրդից և Գործադիր մարմնից: Գլխավոր գործադիր տնօրենը (CEO) պատասխանատու է բանկի ընթացիկ գործունեության օրական ղեկավարման համար, իսկ Խորհուրդը՝ որոշումների կայացման և ղեկավարման վերահսկողության համար: Խորհրդին աջակցում են չորս մասնագիտացված կոմիտեներ՝ Աուդիտի կոմիտեն, Ռազմավարության կոմիտեն, Ռիսկերի կառավարման կոմիտեն, ինչպես նաև Կառավարման, նշանակումների և վարձատրությունների կոմիտեն: Խորհուրդը և բոլոր կոմիտեները կազմված են բացառապես ոչ գործադիր անդամներից: Խորհրդի կոմիտեների որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ:



Բանկի Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պահանջում է, որ Խորհրդի կազմում ներառվի բավարար թվով անկախ անդամներ, և որ այն գործի անկողմնակալ՝ ի շահ Բանկի: Բաժնետերերի ընդհանուր ժողովն է որոշում Խորհրդի անդամների քանակը: 2025 թվականի դրությամբ Խորհուրդն ունի 9 անդամ և Կորպորատիվ քարտուղար: Խորհրդի 9 անդամից 3-ն անկախ են՝ համաձայն Բանկի ներքին Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սահմանման: Խորհրդի անդամները պաշտոնավարում են Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամկետներով՝ նվազագույնը մեկ տարի ժամկետով: Որպես կանոն, Խորհրդի անդամները նշանակվում և/կամ ընտրվում են 2-3 տարի ժամկետով՝ հետագայում վերանշանակվելու կամ վերընտրվելու հնարավորությամբ: Խորհրդի նախագահը Բանկում որևէ ղեկավար գործադիր պաշտոն չի զբաղեցնում: 2025 թվականի վերջի դրությամբ Խորհրդի կազմում ընդգրկված էին անդամներ, ովքեր ունեն մասնագիտական փորձառություն բանկային գործի, ֆինանսների, գյուղատնտեսության, ռազմավարական պլանավորման, կառավարման, աուդիտի, համապատասխանության, ռիսկերի և իրավաբանական ոլորտներում: Գործում է հմտությունների պաշտոնական մատրիցա՝ ընթացիկ կարողությունները գնահատելու և ապագա առաջադրումները ուղղորդելու համար: Խորհուրդը նաև հաշվի է առնում ոլորտային փորձն ու միջազգային գործունեությունը՝ իր հավաքական կազմը գնահատելիս:

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա կամ անցյալ հիմնական մասնագիտական փորձառությունը	Խորհրդի անդամների թիվը
Ֆինանսական ծառայություններ, բանկային աուդիտ	2
Հանրային ոլորտ և կրթական ոլորտ	5
Իրավունք	1
Բիզնես ոլորտ	1


Տնօրենների խորհրդի կազմն արտացոլում էր ինչպես բաժնետերերի ներկայացվածությունը, այնպես էլ անկախությունը: 2025 թվականին պաշտոնավարած Նախագահն ընտրվել է Խորհրդի կողմից իր անդամների կազմից՝ Բանկի Կանոնադրության համաձայն: Նախքան այդ, նա Խորհրդի կազմում նշանակվել էր բանկի խոշորագույն բաժնետիրոջ՝ «ԱԿԲԱ Ֆեդերացիայի» կողմից: «ԱԿԲԱ Ֆեդերացիան» առաջադրել էր նաև չորս այլ անդամների, որոնք բոլորն ընտրվել էին Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: 2026 թվականին Խորհրդն ընտրեց նոր նախագահ:

Երկրորդ խոշոր բաժնետերը՝ «Պրոպարկոն», որը տնօրինում է բանկի քվեարկող բաժնետոմսերի 10%-ը, ունի Խորհրդի անդամ նշանակելու օրենքով սահմանված իրավունք՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու:

Այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու օրվա դրությամբ տնօրինում են բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10%-ից պակասը, կարող են միավորվել և ստեղծել բաժնետերերի խումբ: Եթե այդ խմբի ընդհանուր բաժնեմասը հավասարվում կամ գերազանցում է տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10%-ը, խումբն իրավունք ունի Խորհրդում նշանակել մեկ ներկայացուցիչ՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու: Նման նշանակումը վավերական է միայն այն դեպքում, եթե բաժնետերերը կնքել են խմբի ստեղծման մասին համաձայնագիր և այդ մասին համապատասխան կարգով ծանուցել են Ընդհանուր ժողովին: Նման համաձայնագրերին ներկայացվող պահանջները սահմանվում են օրենքով:

Փոքրամասնական բաժնետերերը, որոնք տնօրինում են բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10%-ից պակասը և չեն ստեղծում նման խումբ, կարող են դրա փոխարեն Խորհրդում ընտրել մեկ համատեղ ներկայացուցիչ՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու:

Structure as of 31 of December 2025



ՄԵՐ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

(GRI 2-10, GRI 2-18, GRI 2-19)

Տնօրենների խորհրդի նոր անդամների հավաքագրումը կառավարում է Կորպորատիվ կառավարման, նշանակումների և վարձատրությունների կոմիտեն, որը պատասխանատու է թեկնածուների ընտրության և առաջադրման համար՝ համաձայն մեր «Խորհրդի անդամների թեկնածուների ընտրության և առաջադրման կարգի»: Երբ հաստիքը թափուր է մնում, կամ երբ անհրաժեշտ է լինում ավելացնել կամ փոխարինել նոր անդամի, Խորհուրդը գնահատում է փոփոխության բնույթը, իսկ Կորպորատիվ կառավարման, նշանակումների և վարձատրությունների կոմիտեն մշակում է համապատասխան աշխատանքի նկարագիրը և թեկնածուի պրոֆիլը:

Դերի պահանջները որոշելուց հետո թափուր հաստիքի համալրման և ընտրության գործընթացը կարող է իրականացվել ներքին կամ արտաքին աղբյուրներով: Թեկնածուները կարող են առաջադրվել բաժնետերերի կողմից, ներգրավվել մասնագիտական ցանցերից, արտաքին խորհրդատուներից կամ այլ համապատասխան ուղիներից: Թափուր հաստիքների մասին բոլոր հայտարարությունները ներառում են հավասար հնարավորությունների վերաբերյալ հակիրճ հայտարարություն և արտացոլում են թափանցիկության ու արդարության նկատմամբ մեր հանձնառությունը:

Բոլոր թեկնածուները մասնակցում են կառուցվածքային գնահատման գործընթացին, որը համապատասխանեցված է որակավորման ու համապատասխանության պահանջներին, ինչպես նաև բանկի ռազմավարական և կառավարման կարիքներին: Տնօրենների խորհրդի կանոնակարգով սահմանվում են Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության հիմնական սկզբունքները: Թեկնածուները պետք է բավարարեն արժանիքների և համապատասխանության չափանիշներին, ներառյալ՝ համապատասխան մասնագիտական փորձը, անկողմնակալությունը, ռազմավարական պատկերացումները, ինչպես նաև օրենսդրության և ներքին քաղաքականությունների պահպանումը: Գործընթացը պետք է ապահովի թափանցիկություն և օբյեկտիվություն՝ հստակ և հետևողականորեն կիրառվող գնահատման ընթացակարգերի միջոցով: Խորհրդի կազմը պետք է նաև նպաստի բանկի երկարաժամկետ ռազմավարական ուղղությանը, ռիսկի պրոֆիլին, անկախության պահանջներին և տեսակետների բազմազանությանը:

Կոմիտեն թեկնածուներին գնահատում է Խորհրդի հմտությունների մատրիցի, անկախության գործոնների և էթիկ չափանիշների հիման վրա՝ ներառյալ նրանց մասնագիտական փորձը, որակավորումը, շահերի հնարավոր բախումները և բանկի արժեքների հետ համապատասխանությունը: Գնահատումն ավարտելուց հետո Կոմիտեն կազմում է թեկնածուների կարճ ցուցակ, անցկացնում հարցազրույցներ և ներկայացնում պաշտոնական առաջարկ: Թեկնածուի կողմից պաշտոնական առաջարկն ընդունվելուց կամ հատուկ պայմաններով թեկնածությունը ներկայացնելու որոշում կայացվելուց հետո, Կոմիտեն պաշտոնական զեկույցի միջոցով թեկնածուին ներկայացնում է Խորհրդին: Խորհուրդը յուրաքանչյուր թափուր տեղի համար ընտրում է մեկ թեկնածու և առաջադրում նրան Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը: Բաժնետերերի ընդհանուր ժողովն այնուհետև ընտրում կամ մերժում է թեկնածուին՝ մեր կարգով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

<< ԿԲ-ում Խորհրդի նոր անդամի գրանցումից հետո, Կորպորատիվ քարտուղարը տրամադրում է Ինտեգրման ծրագիրը և համապատասխան հիմնարար տեղեկատվությունը: Բացի այդ, բանկի Համապատասխանության մշակույթի թիմը կազմակերպում է ծանոթացման դասընթաց, որը կարող է անցկացվել հե-

ռավար տարբերակով և ներառում է բանկի պատմությունը, հայաստանյան ֆինանսական շուկան, բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշներն ու ստանդարտները, ղեկավար թիմը, կազմակերպչական կառուցվածքը, բիզնես ուղղությունները, ներքին վերահսկողության համակարգը, ինչպես նաև Խորհրդի և դրա կոմիտեների գործունեության կանոնակարգերը: Խորհրդի նոր անդամներին տեղեկացնում են, որ հինգ տարի անընդմեջ պաշտոնավարելուց հետո նրանք կհրավիրվեն << ԿԲ՝ հարցազրույցի՝ իրենց մասնագիտական համապատասխանությունը գնահատելու համար:

Բացի այդ, տարեկան գնահատումներն օգնում են ապահովել, որ անհրաժեշտ փորձառությունը մշտապես ներկայացված լինի Խորհրդի կազմում: Հմտությունների մատրիցն օգտագործվում է գնահատելու համար, թե արդյոք պահանջվող մասնագիտական գիտելիքներն առկա են Խորհրդում՝ համաձայն նախապես սահմանված համամասնությունների, իսկ դրանց առնչվող գիտելիքների և փորձի չափանիշներն արտացոլվում են Խորհրդի անդամների անհատական գնահատման հարցաթերթիկում:

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Տարի	Խորհրդի անդամների քանակ
1-2 տարի	2
4-5 տարի	6
5+ տարի	1

ՄԵՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

(GRI 2-20, GRI 2-21)

Համաձայն Տնօրենների խորհրդի նոր կանոնակարգի, որը հաստատվել է 2025 թվականի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից, Խորհուրդը պետք է պարբերաբար գնահատի իր սեփական, ինչպես նաև իր կոմիտեների, առանձին անդամների և Նախագահի գործունեության արդյունավետությունը՝ շարունակական արդյունավետություն, հաշվետվողականություն և առաջնորդության կարողություն ապահովելու համար: Խորհուրդը պետք է իրականացնի տարեկան գնահատում, որն ընդգրկում է կառավարման հիմնական ուղղությունները, ներառյալ՝ ռազմավարական վերահսկողությունը, ռիսկերի կառավարումը, որոշումների կայացումը, կազմը և նիստերի արդյունավետությունը: Արտաքին անկախ գնահատում պետք է իրականացվի առնվազն հինգ տարին մեկ անգամ:

Տնօրենների խորհրդի նոր կանոնակարգի ընդունումից հետո, համապատասխան Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջներին և լավագույն փորձին հետևելու մեր հանձնառությանը, Խորհրդի առաջին ինքնագնահատումը տեղի է ունեցել 2025 թվականի հոկտեմբերին: Գործընթացի անկախությունն ապահովելու համար մենք հարցումներ ուղարկեցինք խորհրդի գնահատման ծառայություններ մատուցող մի շարք ընկերությունների և ընտրեցինք «Բեթեր Բորդս Լիմիթեդ» (Better Boards Limited) բրիտանական ընկերությանը, որը միջազգայնորեն հայտնի է խորհրդի արդյունավետության վերաբերյալ իր հետազոտություններով: Խորհրդի անդամները լրացրել են «Բեթեր Բորդս»-ի կողմից իր անկախ հարթակի միջոցով մշակված և հետազոտության վրա հիմնված հարցաթերթիկը՝ գնահատելու ինչպես Խորհուրդն ամբողջությամբ, այնպես էլ դրա կոմիտեներից յուրաքանչյուրը: Արդյունքների հիման վրա ընկերությունը բանկին տրամադրել է ամփոփիչ հաշվետվություն, և ներկայումս Նախագահի համակարգմամբ մշակվում է գործո-

ղությունների պլան՝ Խորհրդի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար:

2025 թվականին Ակբա բանկը պահպանել է Խորհրդի վարձատրության կառուցվածքային մոտեցումը: Փոխհատուցումը հիմնված է եղել Խորհրդի և կոմիտեների նիստերին մասնակցության, ինչպես նաև լրացուցիչ պարտականությունների ստանձնման վրա, ինչպիսիք են կոմիտեների նախագահումը: Կոմիտեների նախագահները ստացել են եռամսյակային ֆիքսված վճար՝ իրենց աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու առաջնորդության պարտականություններն արտացոլելու համար: Խորհրդի նախագահը ստացել է հաստատուն դրույքաչափով փոխհատուցում և արդյունքների վրա հիմնված սահմանափակ բաղադրիչ, որը համաչափ է տվյալ դերի պատասխանատվությանը: Այլ նախապատրաստական կամ ոչ պաշտոնական հանդիպումները առանձին չեն վարձատրվել: Վարձատրության այս կառուցվածքն աջակցում էր արդարությանը, հաշվետվողականությանը և կառավարման անաչառությանը՝ խրախուսելով Խորհրդի բոլոր անդամների ակտիվ ներգրավվածությունն ու պատասխանատու վերահսկողությունը:

«Հայաստանի Հանրապետության բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 211-րդ հոդվածի համաձայն՝ Խորհրդի անդամների վարձատրության չափը սահմանելու իրավասությունը պատկանում է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, եթե այդ իրավասությունը բանկի Կանոնադրությամբ չի փոխանցվել Խորհրդին: Ակբա բանկում այս լիազորությունը ձևակերպված է եղել Կանոնադրությամբ, և Խորհուրդը կիրառել է այդ իրավասությունը: Օգտագործելով իր լիազորությունները տվյալ ոլորտում՝ Խորհուրդը 2025 թվականից սկսած ներդրել է Խորհրդի անդամների վարձատրության համակարգ՝ համահունչ եվրոպական չափանիշներին՝ հաշվի առնելով տեղական համադրելի վստահելի տվյալների սահմանափակ հասանելիությունը: Համակարգը նախագծված է արտացոլելու միջազգային լավագույն փորձը և բանկի զարգացող ռազմավարական կարիքները:

2024 թվականին Հայաստանի Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունումից հետո, որով հանձնարարվում է, որ Խորհրդի վարձատրության վերաբերյալ որոշումները կայացվեն Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բանկը համապատասխանաբար փոփոխել է իր Կանոնադրությունը: Արդյունքում, սկսած 2026 թվականից, բաժնետերերն ուղղակիորեն կհաստատեն Խորհրդի անդամների վարձատրության պայմանները՝ բարձրացնելով թափանցիկությունը և ամրապնդելով բաժնետերերի ներգրավվածությունը: Խորհրդի վարձատրության հարցը ներառվել է 2026 թվականի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում:

Սկսած 2024 թվականից և շարունակվելով հաշվետու ժամանակահատվածում՝ Խորհուրդը սկսել է կապակցել Հիմնական կատարողական ցուցանիշները ավագ ղեկավարության փոփոխական վարձատրության հետ: Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այս ցուցանիշները հիմնականում կենտրոնացած են առևտրային արդյունավետության, ֆինանսական ցուցանիշների և հաճախորդների բավարարվածության վրա: Մեր Մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպչական զարգացման վարչությունը եռամսյակային կտրվածքով վերանայում է թոփ մենեջմենթի կատարողական ցուցանիշները և զեկուցում Կորպորատիվ կառավարման, նշանակումների և վարձատրությունների կոմիտեին: Ավագ ղեկավարների վարձատրության բոլոր տարրերը, ներառյալ՝ հիմնական աշխատավարձը, արդյունքների վրա հիմնված խրախուսանքները, պարգևավճարները և ոչ նյութական օգուտները, կարգավորվում են մեր Վարձատրության քաղաքականությամբ և Վարձատրության պլաններով:*

Գործադիր ղեկավարության աշխատավարձի ֆոնդը կառուցված է այնպես, որ խթանի պատասխանատու և թափանցիկ վարձատրության գործելակերպը: Այն բաժանված է Աշխատավարձի ֆիքսված հիմնադրամի և Արդյունքների վրա հիմնված պարգևատրումների հիմնադրամի, որտեղ փոփոխական վարձատրությունը կապված է հիմնական կատարողական ցուցանիշների իրագործման հետ: Տարեկան վարձատրության փոփոխական բաղադրիչը սահմանափակված է ֆիքսված բաղադրիչի առավելագույնը 200%-ով: Առանց Հայաստանի Հանրապետության պայմանագրային և աշխատանքային օրենսդրության ընդհա-

նուր սկզբունքներին վնաս հասցնելու, ընդհանուր փոփոխական վարձատրությունը կարող է զգալիորեն կրճատվել թույլ կամ բացասական ֆինանսական արդյունքների դեպքում՝ հաշվի առնելով ինչպես ընթացիկ վարձատրությունը, այնպես էլ նախկինում վաստակած վճարումների կրճատումները, այդ թվում՝ չվճարման կամ հետպահման դրույթների միջոցով: Նախորդ աշխատավայրի պայմանագրերից հրաժարվելու կամ դրանցից դուրս գալու հետ կապված փոխհատուցման փաթեթները պետք է համապատասխանեն բանկի երկարաժամկետ շահերին, ներառյալ՝ կադրերի պահպանման, հետաձգման, կատարողականի և հետպահման պայմանավորվածությունները:

Ավագ ղեկավարների վարձատրության քաղաքականությունը, որը կներառի կոնկրետ կայունության կատարողական ցուցանիշներ և կատարողական՝ կապված տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց վրա բանկի ունեցած ազդեցության կառավարման հետ, նախատեսվում է սահմանել 2026 թվականին, ինչպես շարադրված է մեր ԲՍԿ Քաղաքականության մեջ: Այս կապի հաստատման ուղղությամբ աշխատանքները սկսվել են 2025 թվականին. սակայն, մինչև այդ կապերի լիարժեք սահմանումը, փոփոխական վարձատրության բաղադրիչները կամ ֆոնդերը որոշելու համար օգտագործվում են կատարողականի այլ չափանիշներ: Այս չափանիշները հաշվի են առնում ընթացիկ և ապագա ռիսկերի ճշգրտումները, ինչպես նաև կապիտալի արժեքը և պահանջվող իրացվելիությունը: Ընդհանուր փոփոխական վարձատրության մինչև 100%-ը կարող է ենթակա լինել չվճարման կամ հետպահման պայմանավորվածությունների, ընդ որում Բանկը սահմանում է դրանց կիրառման կոնկրետ չափանիշներ, ներառյալ այնպիսի իրավիճակները, երբ աշխատակիցը.

- Մասնակցել է կամ պատասխանատու է եղել այնպիսի վարքագծի համար, որը հանգեցրել է բանկի զգալի կորուստների
- Չի համապատասխանել որակավորման և համապատասխանության պատշաճ չափանիշներին

Մեր Վարձատրության քաղաքականության իրականացումը ենթակա է կենտրոնացված և անկախ ներքին վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ՝ Խորհրդի կողմից ընդունված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխանությունն ապահովելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

(GRI 2-29)

Համաձայն Տնօրենների խորհրդի կանոնակարգի՝ Խորհուրդը պետք է ապահովի, որ բանկը պահպանի թափանցիկ, արդար և կառուցողական հարաբերություններ իր շահակիցների հետ՝ համահունչ իր կորպորատիվ արժեքներին և երկարաժամկետ նպատակներին:

Շահակիցների ներգրավվածությունը պետք է առաջնորդվի բարեխղճության, փոխադարձ հարգանքի, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքներով: Խորհուրդը պետք է վերահսկի, որ գործեն համապատասխան մեխանիզմներ՝ բացահայտելու հիմնական շահակիցների սպասումները և ժամանակին ու արդյունավետ կերպով արձագանքելու համապատասխան մտահոգություններին:

Շահակիցների հետ հարաբերությունները պետք է իրականացվեն գործող օրենսդրությանը, ներքին քաղաքականություններին և կորպորատիվ կառավարման ընդունված ստանդարտներին համապատասխան:

ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(GRI 2-12, GRI 2-13, GRI 2-14, GRI 2-17)

Տնօրենների խորհուրդը կրում է ընդհանուր պատասխանատվություն բանկի համար, ներառյալ՝ հաստատում և վերահսկում է ղեկավարության կողմից բանկի ռազմավարական նպատակների, կառավարման համակարգի և կորպորատիվ մշակույթի ներդրումը: Խորհուրդը պահպանում է վերջնական լիազորությունը ԲՍԿ Քաղաքականության, ԲՍԿ Ռազմավարության և Ռազմավարական կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան թարմացումների հաստատման հարցում:

Համաձայն հաստատված ԲՍԿ Քաղաքականության՝ Խորհուրդն իրականացնում է բանկի ԲՍԿ համակարգի վերջնական վերահսկողությունը, ներառյալ՝ ԲՍԿ Քաղաքականության և ռազմավարության հաստատումը, դրանց իրագործման վերահսկողությունը, ինչպես նաև ԲՍԿ արդյունքների, բացահայտումների և կիրառելի ԲՍԿ կանոնակարգերի ու ստանդարտների համապատասխանության վերանայումը: Խորհուրդը նաև ապահովում է, որ առկա լինեն համապատասխան ռեսուրսներ, կառուցվածքներ և կարողություններ՝ ԲՍԿ-ի արդյունավետ ներդրմանն աջակցելու համար:

Պատշաճ կերպով տեղեկացված լինելու նպատակով, Խորհուրդը պատասխանատու ստորաբաժանումից ստանում է թարմացումներ կլիմայական խնդիրների վերաբերյալ՝ ըստ պահանջի, բայց տարեկան առնվազն մեկ անգամ: Ըստ անհրաժեշտության կազմակերպվում են նաև Խորհրդի հատուկ նիստեր՝ նվիրված կլիմայական հարցերին (տարեկան նվազագույնը մեկ նիստ): 2025 թվականի սկզբից ի վեր անցկացվել է երկու նման նիստ, ինչն արտացոլում է բանկի աճող կենտրոնացումը կայուն զարգացման խնդիրների վրա:


2025 թվականին Ռազմավարական կոմիտեն զգալի ներդրում է ունեցել բանկի ԲՍԿ Ռազմավարության մշակման գործում, որին հաջորդել է ԲՍԿ Քաղաքականության մշակումը: ԲՍԿ Քաղաքականությունը նախապես հավանության է արժանացել Ռազմավարական կոմիտեի կողմից, այնուհետև հաստատվել Խորհրդի կողմից: Այն սահմանում է բանկի մոտեցումը բանկի և իր շահակիցների վրա ազդող ԲՍԿ հարցերի կառավարման վերաբերյալ:

Ռազմավարական կոմիտեն կենտրոնական դեր է խաղում այս ոլորտում Խորհրդին աջակցելու գործում: Գործելով Խորհրդի լիազորությամբ՝ այն վերահսկում է կայուն զարգացմանն առնչվող հարցերը և համակարգում ԲՍԿ նախաձեռնությունների իրականացումը ողջ բանկում: Դրա պարտականությունները ներառում են ԲՍԿ չափանիշների ինտեգրումը բանկի բիզնես ռազմավարության մեջ, բանկի ԲՍԿ ռազմավարության և համապատասխան նախաձեռնությունների վերանայումն ու Խորհրդի հաստատմանը ներկայացնելը, ԲՍԿ Քաղաքականության իրականացման մոնիթորինգը և Խորհրդին ԲՍԿ համապատասխանության վերաբերյալ տեղեկացված պահելը:

Գլխավոր գործադիր տնօրենը (CEO) պատասխանատու է բանկի ԲՍԿ Քաղաքականության և ԲՍԿ ռազմավարության իրականացման, ինչպես նաև ողջ բանկում դրանց արդյունավետ կիրառման ապահովման համար: Սա ներառում է ԲՍԿ կառավարման համար բավարար ռեսուրսների և վերահսկողական մեխանիզմների հատկացումը, ներքին ԲՍԿ ընթացակարգերի ու ուղեցույցների հաստատումը և Դուստր ընկերության Գլխավոր տնօրենին աջակցելը՝ բանկի ընդհանուր ԲՍԿ ռազմավարությանը

համահունչ միասնական ԲՍԿ գործելակերպեր հաստատելու հարցում:

Ղեկավարության պարտականությունները լրացնում են բանկի կառավարման գործառույթները: Բանկի ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի գծով տնօրենը (CSCO/DCEO) վերահսկում է ՓՄՁ և կորպորատիվ բիզնես գործառնությունները և համակարգում Կայուն զարգացման բաժնի աշխատանքը՝ գործելով ԲՍԿ Պատասխանատու անձի միջոցով, ով պաշտոնապես նշանակված է որպես Կայուն զարգացման բաժնի ղեկավար: Այս կառուցվածքի միջոցով ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի գծով տնօրենը վերահսկում է բանկի ԲՍԿ համակարգի և համապատասխան ընթացակարգերի մշակումն ու ներդրումը, ԲՍԿ տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, հաշվետվողականությունը Ռազմավարական կոմիտեին և համապատասխան գործադիր մարմիններին, ինչպես նաև բիզնես ու ֆունկցիոնալ ստորաբաժանումներին ԲՍԿ ինտեգրման վերաբերյալ ուղղորդումների տրամադրումը:



Կայուն զարգացման բաժին (Գործառնական մակարդակ)

Գործառնական մակարդակում աշխատող Կայուն զարգացման բաժինը պատասխանատու է բանկի կայուն զարգացման գործողությունների պլանի մշակման և իրականացման համար: Սա ներառում է.

- ԲՍԿ սկզբունքների ինտեգրումը բանկի գործառնություններում, արտադրատեսակներում, ծառայություններում և հաճախորդների գործունեության մեջ,
- Կայուն զարգացմանն առնչվող ռիսկերի և հնարավորությունների բացահայտումը,
- ԲՍԿ և կլիմայական ռիսկերի գնահատման գործիքների ու համակարգերի ներդրումը,
- Մեղմացման ջանքերի կառավարումը,
- ԲՍԿ քաղաքականության իրականացման գործընթացի վերահսկողությունը,
- Աջակցությունը կանաչ և կայուն զարգացմանն ուղղված վարկային պրոդուկտների կառավարմանը:

Բաժինը նաև համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ ԲՍԿ հարցերի շուրջ:

Հաշվետվողականություն և շահակիցների ներգրավում

Բանկը հրապարակում է Կայուն զարգացման հաշվետվությունը և Կորպորատիվ կառավարման հաշվետվությունը յուրաքանչյուր հաշվետու տարվա համար և շահակիցներին է տրամադրում տարեկան Ազդեցության մոնիթորինգի հաշվետվությունը, Բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի հաշվետվությունը, ինչպես նաև տեղեկատվություն ԲՍԿ-ի հետ կապված պահանջների և միջադեպերի վերաբերյալ:

Բացի այդ, բանկի ԲՍԿ պատասխանատու անձը, անհրաժեշտության դեպքում, միջազգային կամ տեղական ֆինանսական կազմակերպություններին է ներկայացնում ԲՍԿ-ին առնչվող հաշվետվություններ:

Սոցիալական և բնապահպանական պատասխանատվություն

Ուժեղ կառավարման և պատասխանատու առաջնորդության նկատմամբ բանկի հանձնառությունը հիմք է հանդիսանում մեր ռազմավարական նպատակների և ԲՍԿ հավակնությունների, այդ թվում՝ բնապահպանական պատասխանատվության իրագործման համար:

Սոցիալական պատասխանատվությունը բանկի ինքնության և առաքելության առանցքային մասն է: Ֆինանսական ծառայություններ մատուցելուց բացի, մենք հանձնառու ենք հասարակության համար երկարաժամկետ արժեք ստեղծելուն և Հայաստանի կայուն զարգացմանը նպաստելուն՝ համայնքային ներդրումների, շրջակա միջավայրի պահպանության, մշակութային ժառանգությանն աջակցելու և Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակներին համահունչ գործելու միջոցով:

Որպես ֆինանսական կազմակերպություն՝ բանկը գիտակցում է, որ իր գործունեությունն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ներառյալ՝ իր սեփական գործառնությունների բնապահպանական հետքը և իր կողմից ֆինանսավորվող բիզնեսների ու նախագծերի միջոցով առաջացող ազդեցությունները: Մենք ընդունում ենք շրջակա միջավայրը պաշտպանելու և պահպանելու մեր պատասխանատվությունը՝ որպես մեր համայնքների և ապագա սերունդների հանդեպ մեր հանձնառության մաս:

Գործառնական մակարդակի բնապահպանական հետքը

Գործառնական մակարդակում մենք նպատակ ունենք նվազեցնել մեր բնապահպանական հետքը՝ հետևյալ հիմնական գործողությունների միջոցով.

- թափոնների նվազեցում,
- էներգախնայողություն,
- վերամշակման խթանում,
- էկոլոգիապես մաքուր այլընտրանքների առաջնահերթություն:

Այս գործելակերպերն արտացոլում են ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կայուն գործառնությունների նկատմամբ մեր երկարաժամկետ հանձնառությունը:

Բնապահպանական պատասխանատվությունը ներդրված է նաև մեր հիմնական բիզնես գործունեության մեջ: Վարկային վերլուծության և բիզնես որոշումների կայացման այլ գործընթացներում մենք ուշադիր գնահատում ենք ֆի-

Նախնսավորվող նախագծերի և հաճախորդների հետ կապված բնապահպանական ռիսկերը: Բանկը կարող է մերժել ֆինանսավորումը կամ պահանջել հավելյալ համակողմանի ուսումնասիրություն այն նախագծերի համար, որոնք ունեն բարձր բնապահպանական ռիսկ: Համապատասխան դեպքերում մենք նաև աջակցում ենք էկոլոգիապես կայուն նախաձեռնություններին, ինչպիսիք են վերականգնվող էներգետիկան և այլ «կանաչ» նախագծերը:

Շրջակա միջավայրի խնայողաբար օգտագործման մեր նվիրվածությունը դուրս է գալիս ներքին գործառնությունների և վարկավորման պրակտիկայի սահմաններից: Մենք ակտիվորեն ներգրավվում ենք կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (CSR) նախաձեռնություններում, այդ թվում՝ համայնքային մաքրման աշխատանքներում, բնապահպանական արշավներում և հանրային իրազեկման միջոցառումներում, որոնք խթանում են կայուն զարգացումը: Այս նախաձեռնություններին մասնակցությունը խիստ խրախուսվում է, քանի որ դրանք հանդիսանում են մեր արժեքների և պատասխանատու քաղաքացի լինելու մեր երկարաժամկետ հանձնառության գործնական արտահայտությունը:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(GRI 2-15)

2025 թվականին Տնօրենների խորհուրդը հաստատել է Շահերի բախման քաղաքականությունը, որը սահմանում է Ակբա բանկում շահերի բախման բացահայտման, բացահայտման (disclosure) և կառավարման սկզբունքներն ու ընթացակարգերը:

Թափանցիկությունը պահպանելու և էթիկ չափանիշները պաշտպանելու համար Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հարցերի հետ կապված շահերի հնարավոր բախումների գնահատմամբ: Հետևյալ կառուցվածքներն ու ընթացակարգերն ուղղորդում են, թե ինչպես են բացահայտվում, ներկայացվում և կառավարվում շահերի բախումները ողջ բանկում.

- Տնօրենների խորհուրդը կրում է վերջնական վերահսկողական պատասխանատվություն շահերի բախման բացահայտման, կանխարգելման և մեղմացման համար: Խորհուրդը հաստատում է Շահերի բախման քաղաքականությունը, ապահովում է դրա ինտեգրումը կորպորատիվ կառավարման համակարգում և վերահսկում դրա իրականացումն ու արդյունավետությունը: Այս համակարգը տարածվում է Խորհրդի անդամների, ավագ ղեկավարների, աշխատակիցների և փոխկապակցված անձանց վրա:
- Այլ ընկերությունների խորհուրդներում համատեղ անդամակցությունը, փոխադարձ մասնակցությունը կապիտալում, վերահսկող կամ նշանակալից բաժնետերերի առկայությունը և փոխկապակցված անձանց հետ հարաբերությունները դիտարկվում են որպես շահերի բախման պոտենցիալ աղբյուրներ: Դրանք ենթակա են պարտադիր բացահայտման, պատշաճ վերահսկողության, ինչպես նաև օրենսդրական, կարգավորող և կորպորատիվ կառավարման կիրառելի պահանջների կատարմանը:
- Այն դեպքերում, երբ նման հարաբերությունները հանգեցնում են փաստացի, պոտենցիալ կամ թվացյալ շահերի բախման, համապատասխան անձին կամ կողմին ար-

գելվում է մասնակցել տվյալ հարցի շուրջ քննարկումներին կամ որոշումների կայացմանը:

- Խորհրդի անդամներից և ավագ ղեկավարությունից պահանջվում է բացահայտել իրենց արտաքին կառավարման դերերը, փոխկապակցվածությունը և ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցությունը: Փոխադարձ մասնակցությունը կապիտալում, ներառյալ՝ կապերը մատակարարների, կապալառուների կամ այլ գործընկերների հետ, ենթակա են հավելյալ համակողմանի ուսումնասիրության:
- Նման հարաբերություններ ներառող գործարքները դիտարկվում են որպես շահերի բախում առաջացնող գործարքներ և կառավարվում են «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքով (անկախ կողմերի միջև իրականացվող շուկայական գործարքների սկզբունքով), հավելյալ հաստատման ընթացակարգերով և Համապատասխանության վերահսկողության ներքո: Էական հարաբերություններն ու գործարքները բացահայտվում են գործող օրենքների, հաշվապահական ստանդարտների և կարգավորող պահանջների համաձայն:

Վերահսկող կամ նշանակալից բաժնետերերի առկայությունը բացահայտվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի և Կենտրոնական բանկի կանոնակարգերի համաձայն: Նշանակալից բաժնետերերի նկատմամբ կիրառվում են շահերի բախման ուժեղացված վերահսկողություն, փոխկապակցվածության պարտադիր բացահայտում և շահերի բախում առաջացնող որոշումների կայացմանը մասնակցելու սահմանափակումներ: Սեփականության և վերահսկողության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հասանելի է դառնում կարգավորող և կորպորատիվ կառավարման բացահայտումների միջոցով:

Փոխկապակցված անձինք բացահայտվում են օրենսդրական սահմանումների և ներքին չափանիշների հիման վրա՝ ներառյալ սեփականության իրավունքը, կառավարման դերերը և փոխկապակցվածությունը: Փոխկապակցված անձանց հետ հարաբերությունները, շահերի բախում առաջացնող գործարքները, հաստատման գործընթացները և մնացորդները բացահայտվում են կիրառելի հաշվապահական ստանդարտների, կարգավորող պահանջների և ներքին հաշվետվողականության կանոնների համաձայն: Փոխկապակցված անձանց հետ բոլոր գործարքներն իրականացվում են «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքով և ենթակա են ուժեղացված վերանայման, համապատասխանության կարծիքների տրամադրման, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Խորհրդի կամ Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:

Շահերի բախում ներառող գործարքների, այդ թվում՝ փոխկապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է բանկի տարեկան Կորպորատիվ կառավարման հաշվետվության մեջ՝ Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագրքի համաձայն:

Բանկը կիրառում է կառուցվածքային էսկալացիոն գործընթաց՝ ապահովելու, որ ցանկացած բացահայտված շահերի բախում հասցեագրվի համապատասխան որոշում կայացնող մարմնի կողմից.

- Եթե շահերի բախումը վերաբերում է Գլխավոր գործադիր տնօրենին (CEO) ուղղակիորեն հաշվետու անձին, ապա Համապատասխանության կարծիքը պետք է ներկայացվի CEO-ին՝ վերջնական որոշում կայացնելու համար:
- Եթե շահերի բախումը վերաբերում է Ավագ ղեկավարության անդամին, Խորհրդին ուղ-

ղակիորեն հաշվետու անձին կամ նրանցից որևէ մեկի հետ փոխկապակցված անձին, ապա Համապատասխանության կարծիքը պետք է ներկայացվի CEO-ին (պայմանով, որ CEO-ն չունի շահերի բախում տվյալ հարցում) և Խորհրդին՝ վերջնական որոշում կայացնելու համար:

- Եթե շահերի բախումը վերաբերում է Խորհրդի անդամին, հարցը պետք է լուծի Խորհուրդը: Շահերի բախում ունեցող Խորհրդի անդամից պահանջվում է բացահայտել այն, և նա չպետք է մասնակցի տվյալ հարցի շուրջ քննարկումներին կամ քվեարկությանը: Նման դեպքերում Համապատասխանության կարծիքը տրամադրվում է Խորհրդի բոլոր այն անդամներին, որոնք չունեն շահերի բախում, և վերջնական որոշումը կայացվում է բացառապես նրանց կողմից:
- Եթե Խորհրդի բոլոր անդամներն ունեն շահերի բախում, հարցը պետք է էսկալացվի Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Կիրառվող մեղմացնող միջոցառումները

Էսկալացիայից հետո, կախված շահերի բախման բնույթից և լրջությունից, կարող են կիրառվել հետևյալ մեղմացնող միջոցներից մեկը կամ մի քանիսը.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բացառում և սահմանափակում	Շահերի բախում ունեցող անձի դուրսբերում համապատասխան քննարկումներից կամ որոշումների կայացումից:
«Չինական պատեր» (Տեղեկատվական պատնեշներ)	Զգայուն տեղեկատվության հասանելիության սահմանափակում՝ անժամկետ կամ անհարկի ազդեցությունը կանխելու համար:
Պարտականությունների վերաբաշխում	Որոշումների կայացման լիազորության կամ գործընթացի պատասխանատվության հանձնում շահերի բախում չունեցող անձանց:
Մոնիթորինգ և հատուկ պայմաններ	Գործընթացի շարունակման թույլտվություն՝ ուժեղացված վերահսկողության ներքո, հաստատման հավելյալ փուլերի կամ տեղեկատվական պատնեշների կիրառմամբ:
Արգելք	Գործարքի կամ գործընթացի ամբողջական արգելում, եթե շահերի բախումն առաջացնում է անընդունելի ռիսկեր:

Բոլոր ընտրված միջոցները պետք է արձանագրվեն և հաղորդվեն համապատասխան կողմերին: Համապատասխանության վարչությունը վերահսկում է պահանջների կատարումը և ապահովում, որ բոլոր պայմաններն ու հետագա գործողություններն իրականացվեն համաձայնեցված եղանակով:


Այն դեպքերում, երբ շահերի բախումը չի բացահայտվել կամ պատշաճ կերպով չի կառավարվել դրա առաջացման պահին, բանկը կիրառում է նույն չափանիշներն ու ընթացակարգերը՝ անհապաղ շտկում և թափանցիկ լուծում ապահովում:

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

(GRI 2-16)

Ճգնաժամային մտահոգությունները հետևողականորեն փաստաթղթավորվում են և ներկայացվում Խորհրդին՝ պաշտպանության երկրորդ գծի գործառույթների կողմից պատրաստվող կարգավորող հաշվետվությունների միջոցով: Առանձնահատուկ կարևորություն ունեցող հարցերը, ինչպիսիք են նշանակալի խարդախության դեպքերը, հաղորդվում են անհապաղ:

Ստորև ներկայացված է կրիտիկական (առանցքային) մտահոգությունների հաղորդման քայլերի հաջորդականությունը.



Հաշվետու ժամանակահատվածում, այլ հարցերի թվում, կառավարման բարձրագույն մարմնին է հաղորդվել ընդհանուր առմամբ 20 ճգնաժամային մտահոգություն: Այս մտահոգություններն առնչվել են գործարքների մշակմանն ու իրականացմանը, գործարարության անընդհատությանը և արտաքին խարդախություններին:

2. Գործարար բարեխղճություն և էթիկա

(GRI 3-3, GRI 2-24, SASB FN-CB-510a.1)

Ակբա բանկում գործարար բարեխղճությունն ու էթիկան ներդրված են մեր գործունեության իրականացման, որոշումների կայացման և շահակիցների հետ փոխգործակցության հիմքում: Սա նշանակում է գործել պատասխանատու, թափանցիկ և մեր արժեքներին, քաղաքականություններին ու օրենսդրական պարտավորություններին համապատասխան:

Գործարար բարեխղճության և էթիկայի մոտեցումն արտահայտված է մի քանի հիմնական ներքին փաստաթղթերում, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է կոնկրետ սկզբունքներ, պարտավորություններ և վարքագծային չափանիշներ, որոնք ուղղորդում են կազմակերպության ամենօրյա գործունեությանը:

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Էթիկայի կանոնագիրք	Արտացոլում է բանկի հանձնառությունը՝ իր գործունեությունն իրականացնել բարեխղճորեն՝ առաջնորդվելով մեր արժեքներով ու սկզբունքներով: Բանկի էթիկայի և վարքագծի կանոնները սահմանում են մեր գործելակերպի սկզբունքները և ձևավորում ամենօրյա աշխատանքային փոխհարաբերությունների մշակույթը:
Վարքագծի կանոնագիրք	Նախագծված է որպես գործնական ուղեցույց՝ օգնելու աշխատակիցներին կայացնել էթիկ որոշումներ և հետևել սահմանված չափանիշներին ամենօրյա աշխատանքում: Այն սահմանում է վարքագծի հստակ կանոններ և ակնկալվող վարքագծի օրինակներ, որոնք արտացոլում են բանկի արժեքներն ու օրենսդրական պարտավորությունները:
Համապատասխանության քաղաքականություն	Սահմանում է Ակբա բանկի համապատասխանության գործառույթը՝ դրա առաքելությունը, լիազորությունները, գործունեության շրջանակը, պարտականություններն ու հաշվետվողականությունը:
Շահերի բախման քաղաքականություն	Սահմանում է Ակբա բանկում շահերի բախման բացահայտման, ներկայացման և կառավարման սկզբունքներն ու ընթացակարգերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) քաղաքականություն	Փաստաթուղթը սահմանում է Բանկի մոտեցումը բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) այն գործոնների հասցեագրման վերաբերյալ, որոնք ազդում են բանկային գործունեության և շահակիցների վրա: Քաղաքականության նպատակն է ապահովել ԲՍԿ գործոնների ինտեգրումը բանկի բոլոր գործառնություններում:
Ազդարարման քաղաքականություն	Սահմանում է Ակբա բանկում անօրինական վարքագծի, օրենքների ու կանոնակարգերի խախտումների կամ բանկի ներքին իրավական ակտերի անհամապատասխանությունների վերաբերյալ ազդարարման սկզբունքները, պատասխանատվությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև նման հաղորդումների ստացման և վերանայման գործընթացները:
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ՓԼ/ԱՖ) ու միջազգային պատժամիջոցների քաղաքականություն	Սահմանում է Ակբա բանկի ֆինանսական անվտանգության ապահովման սկզբունքները, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված գործողությունները և միջազգային պատժամիջոցների պահանջների կատարման մոտեցումները, այս գործընթացում պատասխանատու անձանց ու մարմիններին և ԱՄՆ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (FATCA) պահանջները:
Հակակոռուպցիոն քաղաքականություն	Նպատակն է բանկում ներդնել կոռուպցիայի դեմ պայքարի և ռիսկերի կանխարգելման միասնական համակարգ: Այն կապահովի լիարժեք համապատասխանություն ինչպես << օրենսդրությանը, այնպես էլ միջազգային կառույցների մշակած լավագույն փորձին, սկզբունքներին ու հանձնարարականներին

Մեր էթիկ չափանիշները սահմանող հիմնական ներքին փաստաթուղթը Վարքագծի կանոնագիրքն է, որին լրացնում են Էթիկայի կանոնագիրքը և Համապատասխանության քաղաքականությունը: Թեև Էթիկայի կանոնագիրքն ուրվագծում է բանկի համապարփակ էթիկ հանձնառությունները, Վարքագծի կանոնագիրքը թարգմանում է այդ հանձնառությունները ամենօրյա վարքագծի կոնկրետ ակնկալիքների: Միասին դրանք օգնում են ապահովել, որ մեր արժեքներն ու բարեխղճության չափանիշները հետևողականորեն կիրառվեն մեր բոլոր գործառնություններում և բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների, գործընկերների, կարգավորող մարմինների ու լայն հանրության հետ փոխգործակցություններում:

Վարքագծի կանոնագրքում սահմանված վարքագծային սկզբունքներն ուղղորդում են աշխատակիցներին և ղեկավարությանը իրենց ամենօրյա գործունեության մեջ՝ ապահովելով բարեխղճության, արդարության և հարգանքի վրա հիմնված վարքագիծ: Առանցքային սկզբունքները ներառում են համապատասխանությունը օրենքներին և կանոնակարգերին, շահերի բախումից խուսափումը, կոռուպցիայի դեմ պայքարի խստագույն կանոններն ու նվերների և հյուրընկալության վերահսկողությունը,

հարգալից աշխատանքային միջավայրը, բանկի ակտիվների ու գաղտնի տեղեկատվության պատասխանատու օգտագործումն ու պաշտպանությունը, հաճախորդների հանդեպ արդարացի վերաբերմունքը, կարգավորող մարմինների հետ թափանցիկ համագործակցությունը, բնապահպանական ազդեցությունների հաշվի առնումը և առանց հետապնդման վախի էթիկ մտահոգությունների բարձրաձայնման մեխանիզմները:

Ակբա բանկի կորպորատիվ մշակույթը, արժեքները, համոզմունքները և էթիկ հանձնառություններն ինտեգրված են բանկի ռազմավարության մեջ և հաղորդվում են քննարկումների, վերապատրաստման ծրագրերի և գլխամասային գրասենյակում ու մասնաճյուղերում տեղադրված տեսողական նյութերի միջոցով: Այս միջոցները շեշտադրում են ոչ միայն մեր հիմնարար արժեքները, այլև այն ոլորտները, որոնք մենք չենք ֆինանսավորում՝ ամրապնդելով պատասխանատու որոշումների կայացումը: Հիմնական արժեքները կարևորվում են հավաքագրման ու ինտեգրման փուլերում և արտացոլվում են արտադրատեսակների մշակման, ռազմավարական որոշումների կայացման ու ներքին գործընթացների մեջ: Աշխատակիցների հավատարմությունն այս արժեքներին պարբերաբար գնահատվում է հարցումների և մոնիթորինգի այլ մեխանիզմների միջոցով: Այս արժեքները կերտում են (կազմում են) բանկի մշակույթն ու ամենօրյա վարքագիծը՝ ուղեկցվելով վարքագծային և կարգապահական կանոններով, որոնք ուղղորդում են աշխատակիցներին հաճախորդների, գործընկերների և ղեկավարության հետ փոխհարաբերություններում:

Էթիկ համակարգի հիմքում ընկած է ուժեղ կառավարումը: Տնօրենների խորհուրդը և Ավագ ղեկավարությունը պատասխանատու են բարեխղճության մշակույթի խթանման և էթիկ չափանիշների հստակ հաղորդման, հետևողական կիրառման ու բիզնես գործընթացներում ներդրման համար: Թեև Խորհուրդը կրում է վերջնական պատասխանատվություն Էթիկայի կանոնագրքի ներդրման համար, ամենօրյա վերահսկողությունն իրականացվում է Համապատասխանության վարչության և Մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունների կողմից: Համապատասխանության վարչությունը պարբերաբար զեկուցում է CEO-ի մակարդակի կոմիտեին և Խորհրդին կամ դրա համապատասխան կոմիտեներին՝ Կանոնագրքի պահպանման և էական խախտումների վերաբերյալ:

2025 թվականի ընթացքում բանկի անձնակազմի համար իրականացվել են ինտենսիվ վերապատրաստումներ նոր ընդունված քաղաքականությունների վերաբերյալ, այդ թվում՝ Շահերի բախման քաղաքականության վերաբերյալ, որին մասնակցել է 1458 աշխատակից, ինչպես նաև Էթիկայի կանոնագրքի, Վարքագծի կանոնագրքի և Ազդարարման քաղաքականության թեմաներով: Վերջին երեք քաղաքականությունների գծով դասընթացները շարունակական բնույթ են կրում: Բացի այդ, բանկի ավագ ղեկավարությունը և Խորհրդի անդամները մասնակցել են հատուկ վերապատրաստման դասընթացի, որն իրականացվել է Համապատասխանության միջազգային ասոցիացիայի (ICA) կողմից և ընդգրկել է համապատասխանության համակարգերի միջազգային լավագույն փորձը, ներառյալ՝ համապատասխանության ռիսկերի գնահատումը, կարգավորող պահանջների համապատասխանությունը, կառավարման մշակույթը, էթիկան, շահերի բախման կառավարումը, ազդարարման համակարգերը և փոփոխությունների կառավարումը: Զուգահեռաբար, Իրավաբանական և համապատասխանության տնօրինությունը ներկայացրել է նույն թեմաներով Ակբա բանկի գործող համակարգն ու պրակտիկան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բանկի ազդարարման անկախ հարթակի գործարկմանը, որը տրամադրվել է եվրոպական առաջատար «Whispli» ընկերության կող-

մից: Այս նախաձեռնությունն ուղեկցվել է նաև բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրենների խորհրդի նախագահի և «Whispli»-ի համահիմնադիր ու CEO-ի ուղերձներով՝ շեշտադրելով թափանցիկության, վստահության և էթիկ վարքագծի կարևորությունը:

Էթիկ վարքագծի նկատմամբ մեր հանձնառությունը տարածվում է նաև հաճախորդների հետ մեր հարաբերությունների վրա: Գործարար վարքագիծն առաջնորդվում է հաճախորդամետ մոտեցմամբ՝ ապահովելով ընկերական, ուշադիր և պրոֆեսիոնալ սպասարկում: Ավանդների, բանկային հաշիվների և վարկային ծառայությունների գծով հաճախորդների իրավունքները ներառված են Գործարար վարքագծի քաղաքականության մեջ: Հաճախորդները կարող են բողոքներ ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Եթե հաճախորդի պահանջը չի գերազանցում 250,000 << դրամը, իսկ գործարքի գումարը չի գերազանցում 500,000 << դրամը, Հաշտարարի որոշումը պարտադիր է և բանկի կողմից չի կարող բողոքարկվել: Արբիտրաժային համաձայնագրեր պարունակող դեպքերում հաճախորդները ստանում են հստակ գրավոր տեղեկատվություն իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ ՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

(GRI 2-23, GRI 2-27, GRI 405-2)

Բանկը հանձնառու է համապատասխանել բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին: Ներքին իրավական և կարգավորող փաստաթղթերը շարունակաբար թարմացվում են՝ արտացոլելու գործող օրենսդրական պահանջները, իսկ ղեկավարությունն ապահովում է, որ աշխատակիցները տեղեկացված լինեն համապատասխան բանկային օրենսդրության, ներքին ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և այլ իրավասու մարմինների կողմից թողարկված կարգավորող շրջաբերականների մասին: Այս հաշվետվության մեջ ներառված բոլոր քաղաքականությունները հաստատվել են բանկի Տնօրենների խորհրդի նախագահի մակարդակով:

Համապատասխանության պարտավորությունների վերահսկողությունն ու կառավարումն իրականացնող մարմիններն ու պատասխանատուներն են.

- Տնօրենների խորհուրդը և Գործադիր ղեկավարությունը
- Խորհրդի մակարդակի կոմիտեները
- Իրավաբանական և համապատասխանության տնօրենը
- Համապատասխանության վարչությունը
- Համապատասխանության ղեկավարը

Բանկը որդեգրել է զրոյական հանդուրժողականության մոտեցում օրենքների, կանոնակարգերի կամ ներքին կանոնների խախտումների նկատմամբ: Բոլոր աշխատակիցներից պահանջվում է խստորեն պահպանել այս չափանիշները, և ցանկացած ներգրավվածություն անհամապատասխան վարքագծում խստիվ արգելվում է:

Համապատասխանության քաղաքականությունը համահունչ է միջազգային համակարգերին, ինչպիսիք են Տնտեսական համագործակ-

ցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) սկզբունքները, Բազելյան կոմիտեի ուղեցույցները, Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR), Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը (FATCA) և Համատեղ հաշվետվողականության ստանդարտը (CRS)։ Բանկն իրականացնում է հաճախորդների համակողմանի ուսումնասիրություն (KYC), ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների ստուգում, ինչպես նաև երրորդ կողմերի համակողմանի ուսումնասիրություն։ Բիզնես ստորաբաժանումները պատասխանատու են համապատասխանության ռիսկերի բացահայտման և էսկալացիայի համար՝ համապատասխանության գործառույթի վերահսկողության ներքո։ Չնայած զգուշության սկզբունքն ուղղակիորեն հղված չէ, բանկը կիրառում է կանխարգելիչ, ռիսկերի վրա հիմնված մոտեցում՝ օգնելու կանխել իրավական, էթիկ և հեղինակությանը հասցվող վնասները։

Մարդու իրավունքներ և բազմազանություն

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված հանձնառություններն ինտեգրված են Էթիկայի կանոնագրքում, Վարքագծի կանոնագրքում, Բազմազանության, հավասարության և ներառականության (DEI) քաղաքականության մեջ, ինչպես նաև ԲՍԿ Քաղաքականության մեջ։ Այս քաղաքականություններն ընդգրկում են արժանապատվությունն ու հարգալից վերաբերմունքը, խտրականության բացառումը, գենդերային հավասարությունը, հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը, անվտանգ աշխատանքային պայմանները, աշխատանքի և անձնական կյանքի հավասարակշռությունը, անձնական տվյալների գաղտնիությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև հաճախորդների և շահակիցների նկատմամբ արդարացի վերաբերմունքը։ Չնայած առանձին «Մարդու իրավունքների քաղաքականություն» առկա չէ, այս հանձնառությունները լիովին համապատասխանում են միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների ստանդարտներին։

Բանկի Բազմազանության, հավասարության և ներառականության (DEI) քաղաքականության նպատակն է ապահովել բանկի հանձնառությունը՝ ձևավորելու բազմազան, հավասար և ներառական աշխատատեղ, որտեղ յուրաքանչյուր անհատ գնահատված է, հարգված և ունի իր ողջ ներուժն իրացնելու հնարավորություն։

DEI սկզբունքները ներկայացնում են այն հիմնարար համոզմունքներն ու արժեքները, որոնք ուղղորդում են բանկի մոտեցումները ներդրման գործընթացում՝ ծառայելով որպես հիմք որոշումների կայացման համար և օգնելով ապահովել համապատասխանությունը բանկի նպատակներին, մշակույթին և կարգավորող միջավայրին։

DEI-ի ներդրման հիմնարար սկզբունքները

Բանկում DEI սկզբունքների կիրառումը հիմնված է հետևյալ ուղղությունների վրա.

- Արժանիքներ և արդարություն
- Հաշվետվողականություն բոլոր մակարդակներում
- Տվյալների վրա հիմնված մոտեցում
- Շարունակական ուսուցում և բարելավում
- Մշակութային զգայունություն և տեղական հարմարեցում
- Թափանցիկություն և հաղորդակցություն
- Գործընկերություն և համագործակցություն

Գենդերային հավասարություն և կանանց առաջխաղացում

Բանկի DEI համակարգի կարևորագույն սյուներից մեկը կազմակերպության բոլոր մակարդակներում Գենդերային հավասարության և կանանց առաջխաղացման կառուցվածքային մոտեցումն է: Այս հանձնառությունն աջակցելու համար բանկը սահմանել է հստակ երկարաժամկետ նպատակներ և չափելի գործողություններ.

- Ապահովել, որ Տնօրենների խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը լինի առնվազն 30%:
- Մինչև 2035 թվականը հասնել նրան, որ յուրաքանչյուր ղեկավար օղակում (ներառյալ՝ Թուփ մենեջմենթը, Տնօրենները, Վարչության պետերը և Մասնաճյուղերի կառավարիչները) կանանց ներկայացվածությունը կազմի առնվազն 25%:
- Ավելացնել կին մասնաճյուղերի կառավարիչների և այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնողների մասնաբաժինը՝ նպատակային մենթորության, հաջորդականության պլանավորման (և մասնագիտական զարգացման նախաձեռնությունների միջոցով:
- Տարեկան կտրվածքով իրականացնել աշխատավարձերի համապատասխանության վերլուծություն՝ բացառելու գենդերային կամ այլ խտրական գործոններով պայմանավորված տարբերությունները և երաշխավորելու համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը:
- Համակարգված կերպով մոնիթորինգի ենթարկել գենդերային վարձատրության ճեղքվածքը բոլոր հաստիքների մակարդակներում և գործառույթներում՝ կիրառելով շտկողական գործողություններ (օրինակ՝ աշխատավարձերի ճշգրտումներ, գործընթացների վերանայումներ կամ նպատակային միջամտություններ)՝ անհիմն վարձատրության տարբերությունները աստիճանաբար նվազեցնելու և ի վերջո վերացնելու համար:

Բանկի DEI նպատակներն ուղղված են ներառական միջավայրի զարգացմանը, որտեղ բոլոր աշխատակիցներն ունեն պատկանելության զգացում, կարող են արտահայտել իրենց ինքնությունը և նշանակալի ներդրում ունենալ կազմակերպության հաջողության մեջ: Բանկը նպատակ ունի ձևավորել բազմազան աշխատուժ, որն արտացոլում է այն համայնքները, որոնց սպասարկում է՝ միաժամանակ ապահովելով արդարացի վերաբերմունք և հավասար հնարավորություններ զբաղվածության բոլոր փուլերում՝ հավաքագրումից և մասնագիտական զարգացումից մինչև առաջխաղացում և թոշակի անցնելը:

Սրան համահունչ՝ բանկը հանձնառու է տրամադրել արդար և հավասար փոխհատուցում հավասարարժեք աշխատանքի դիմաց և ապահովել հավասար հասանելիություն վերապատրաստումների, կարիերայի աճի ու զարգացման հնարավորությունների համար:

Հանձնառությունների կառավարում և հաղորդակցում

Տնօրենների խորհրդի կողմից հաստատված Համապատասխանության քաղաքականությունը, Էթիկայի կանոնագիրքը և Վարքագծի կանոնագիրքը ներդրված են կազմակերպության բոլոր մակարդակներում և ամրապնդվում են պարտադիր դասընթացների, սեմինարների, էլեկտրոնային հաղորդագրությունների, ինչպես նաև կարճ կրթական կամ անիմացիոն բացատրական տեսանյութերի միջոցով:

Արդյունավետ ներդրումն ապահովելու նպատակով պատասխանատվությունները բաշխված են ողջ բանկում՝ պաշտպանության երեք գծերի մոդելին համապատասխան.

- Տնօրենների խորհուրդը տրամադրում է ռազմավարական վերահսկողություն,
- Ղեկավարությունը պատասխանատու է իրականացման համար,

- Համապատասխանության գործառույթը վերահսկում է պահպանումը,
- Բիզնես ստորաբաժանումները կիրառում են այս հանձնառություններն իրենց ամենօրյա գործունեության մեջ:

Այս փաստաթղթերում շարադրված հանձնառությունները ներառված են բանկի ռազմավարության, ներքին քաղաքականությունների և գործառնական ընթացակարգերի մեջ, այդ թվում՝ էթիկան, ռիսկերի կառավարումը, ներքին վերահսկողությունը և այլ առանցքային գործընթացները կարգավորող կանոններում: Դրանք արտացոլվում են նաև բանկի արտաքին հարաբերություններում՝ համակողմանի ուսումնասիրությունների, պայմանագրային պահանջների և բանկի անունից հանդես եկող երրորդ կողմերի շարունակական մոնիթորինգի միջոցով:

Որպես պաշտպանության երկրորդ գիծ՝ Համապատասխանության գործառույթը վերահսկում է օրենսդրական և կարգավորող պահանջների պահպանումը կառավարման ավելի լայն կառուցվածքի շրջանակներում, որը ներառում է Տնօրենների խորհուրդը, Խորհրդի համապատասխան կոմիտեները, Իրավաբանական և Համապատասխանության տնօրենին, Համապատասխանության վարչությունը և Համապատասխանության ղեկավարին:

Անհամապատասխանության նշանակալի դեպքերը գնահատվում են համապատասխանության ռիսկի ներքին գնահատման համակարգի միջոցով: Այս գնահատումը հաշվի է առնում անհամապատասխանության հնարավոր ազդեցությունը, այդ թվում՝ իրավական և ֆինանսական հետևանքները, գործառնական խափանումները, հեղինակությանը հասցվող վնասը, ազդեցությունը առողջության ու անվտանգության վրա, ինչպես նաև այն աստիճանը, որով կարող են վտանգվել ռազմավարական նպատակները:

Հաշվետու ժամանակահատվածում օրենքների կամ կանոնակարգերի խախտման համար որևէ տուգանք, տույժ կամ դրամական սանկցիա չի կիրառվել: Նշանակալի անհամապատասխանությունը գնահատվում է բանկի համապատասխանության ռիսկի ներքին համակարգի միջոցով, որը վերլուծում է իրավական, ֆինանսական, գործառնական, հեղինակության և ռազմավարական ազդեցությունները:

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՑՈՒՑԱՆԻՇ (Հիմնված այն ենթադրությունների վրա, որոնք ընկած են մեր եռամյա բյուջետավորման գործընթացի հիմքում)	NO.	ԱՐԺԵՔ << ԴՐԱՄ
Հաշվետու ժամանակաշրջանում օրենքների և այլ իրավական ակտերի անհամապատասխանության (խախտումների) դեպքերը		
Դեպքեր, որոնց համար կիրառվել (առաջադրվել) են տուգանքներ	0	0
Դեպքեր, որոնց համար կիրառվել (առաջադրվել) են դրամական պատժամիջոցներ	0	0
Հաշվետու ժամանակաշրջանում վճարված տուգանքները՝ օրենքների և այլ իրավական ակտերի անհամապատասխանության (խախտումների) դեպքերի համար		
Ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած օրենքների և այլ իրավական ակտերի անհամապատասխանության դեպքերի համար սահմանված տուգանքները	0	0
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած օրենքների և այլ իրավական ակտերի անհամապատասխանության դեպքերի համար սահմանված տուգանքները	0	0

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ (ՓԼ/ԱՖ)

Բանկը պահպանում է ՓԼ/ԱՖ ամուր համակարգ՝ կանխարգելելու, հայտնաբերելու և մեղմացնելու փողերի լվացման (ՓԼ), ահաբեկչության ֆինանսավորման (ԱՖ) և զանգվածային ոչնչացման զենքի (ՋՈՋ) տարածման ֆինանսավորման հետ կապված ռիսկերը: Բանկը մերժում է գործարար հարաբերությունների հաստատումը, եթե առկա է կասկած, որ դրամական միջոցները կամ գործարքները կապված են անօրինական գործունեության հետ, և կիրառում է Հայաստանի ՓԼ/ԱՖ կարգավորող համակարգով պահանջվող բոլոր իրավական միջոցները:

Այս քաղաքականությունը ներառում է համաշխարհային ստանդարտները, այդ թվում՝ FATF-ի հանձնարարականները և ԱՄՆ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (FATCA): Այն համապատասխանեցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդունված «Հաշվետվություն տրամադրող անձանց համար փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգին»: FATCA-ի պահանջների պահպանումն էլ ավելի է ամրապնդում միջազգային ֆինանսական բարեխղճության և թափանցիկության նկատմամբ բանկի հանձնառությունը:

Կառավարում և պատասխանատվություններ

ՓԼ/ԱՖ վերահսկողության հստակ պատասխանատվությունները բաշխված են հետևյալ մարմինների ու պատասխանատուների միջև.

- Տնօրենների խորհուրդ
- Գլխավոր գործադիր տնօրեն ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների գծով տնօրեն
- ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների դեպարտամենտ
- Ֆինանսական անվտանգության բաժին
- Միջազգային պատժամիջոցների կառավարման բաժին

Բանկն իրականացնում է ՓԼ/ԱՖ ուժեղ վերահսկողություն՝ պարբերաբար բացահայտելով և գնահատելով ՓԼ/ԱՖ/ռիսկերը, ներառյալ՝ տարեկան վերանայումները և նոր պրոդուկտների ուղիների ու տեխնոլոգիաների գնահատումները: Այն անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացնում է << կենտրոնական բանկ և զեկուցում կասկածելի գործարքների, ինչպես նաև պարտադիր հաշվետվության ենթակա գործարքների մասին (անկանխիկ՝ 20 միլիոն << դրամ և ավելի, կանխիկ՝ 5 միլիոն << դրամ և ավելի): Ռիսկերի բոլոր գնահատումները փաստաթղթավորվում են և պահպանվում առնվազն հինգ տարի:

Բանկն ապահովում է նաև համապատասխանություն ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի պատժամիջոցներին: Մասնավորապես, բանկն ապահովում է կիրառելի պատժամիջոցների ցուցակներում ներառված կամ ահաբեկչական ու զենքի տարածման գործունեության հետ կապված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դրամական միջոցների և ակտիվների անհապաղ սառեցումը՝ առանց նախնական ծանուցման, համաձայն ազգային օրենսդրության և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի:

Գործում են մեխանիզմներ՝ լիազոր մարմնի հրահանգներն անհապաղ կատարելու, սառեցված ակտիվների հասանելիությունը կամ փոխանցումը կանխելու և նման դեպքերը որպես կասկածելի դիտարկելու ու համապատասխանաբար զեկուցելու համար: Այս միջոցառումներն աջակցվում են շարունակական մոնիթորինգի համակարգերով և ներքին ընթացակարգերով, որոնք հնարավորություն են տալիս ժամանակին բացահայտել և արդյունավետորեն կիրառել ակտիվների սառեցման պահանջները: Ներքին աուդիտը ստուգում է ՓԼ/ԱՖ պահանջների պահպանումը, իսկ բացահայտումները հաստատվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում զեկուցվում են Կենտրոնական բանկին:

Ուսուցում և իրազեկվածություն

Պարբերական վերապատրաստումներ են տրամադրվում նոր աշխատակիցներին, Խորհրդի անդամներին, ղեկավարներին և ֆինանսական անվտանգության գործառույթներում ներգրավված անձնակազմին: Մասնագիտացված դասընթացներ են անցկացվում Ռիսկերի կառավարման, Համապատասխանության, Հաճախորդների սպասարկման և Ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատակիցների համար՝ ապահովելու ֆինանսական հանցագործությունների կանխարգելման գործում իրենց դերերի հստակ ընկալումը:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

(GRI 3-3, GRI 205-1, GRI 205-2, GRI 205-3, FNCB510a.2)

Բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտի վստահելիությունը կախված է նրանից, թե որքանով են ֆինանսական կազմակերպությունները գործում իրավական, մասնագիտական և էթիկ բարձր չափանիշներով: Ակբա բանկը պաշտպանում է այս սկզբունքը իր Հակակոռուպցիոն քաղաքականության ներդրման միջոցով:

Բանկի Հակակոռուպցիոն քաղաքականությունը սահմանում է միասնական համակարգ կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման և Հայաստանի օրենսդրության պահպանման համար՝ միաժամանակ համապատասխանելով միջազգային հիմնական կանոնակարգերի սկզբունքներին ու հանձնարարականներին և առաջատար գործարար պրակտիկային: Քաղաքականությունը սահմանում է աշխատակիցների պարտականությունները և ամրապնդում է Բանկի հանձնառությունը՝ պահպանելու էթիկ բարձր չափանիշներ, թափանցիկություն և բարեխղճություն բոլոր գործառնություններում: Դրա հիմնական նպատակները ներառում են.

- կոռուպցիայի և կաշառակերության կանխարգելումը,
- էթիկ գործարար վարքագծի խթանումը և բանկի հեղինակության պաշտպանությունը,
- օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության ապահովումը,
- արդար մրցակցությանը և շուկայի ամբողջականությանն աջակցելը,
- ռեսուրսների պատշաճ և պատասխանատու օգտագործման ապահովումը:

Այս նպատակներին հասնելու համար բանկը կիրառում է խիստ միջոցներ և սկզբունքներ իր ողջ գործունեության ընթացքում: Աշխատակիցներին, գործընկերներին, գործակալներին, խորհրդատուներին, կապալառուներին, մատակարարներին, միջնորդներին, ծառայություններ մատուցողներին և այլ երրորդ կողմերին արգելվում է ուղղակի կամ անուղղակիորեն, անձամբ կամ երրորդ անձանց միջոցով առաջարկել, տալ, խոստանալ, պահանջել կամ ստանալ կաշառք, կամ ընդունել որևէ չթույլատրված վճարում, որը նպատակ ունի ազդել կամ շրջանցել բնականոն ընթացակարգերը:

Այս սկզբունքներն աջակցվում են կոռուպցիոն ռիսկերի մեղմացման մեխանիզմներով, որոնք պարբերաբար վերանայվում և թարմացվում են՝ արտացոլելու զարգացող ռիսկերը և նոր ծառայությունների ու պրոդուկտների ներդրումը: Բանկի բոլոր գործընթացները ենթարկվում են հակակոռուպցիոն գնահատման:

> Հաշվետու ժամանակահատվածում նշանակալի ռիսկեր չեն հայտնաբերվել: Կոռուպցիայի հաստատված դեպքերի քանակը եղել է 0:

Հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացումն ապահովվում է այնպիսի հիմնական բաղադրիչներով, ինչպիսիք են բարձր ռիսկային ուղղությունների բացահայտումը, անձնակազմի պարբերական վերապատրաստումը, իրազեկվածության բարձրացման միջոցառումները և կազմակերպչական բոլոր մակարդակներում հաշվետվողականության ու պատասխանատվության խթանումը: Քաղաքականությունը շեշտադրում է շարունակական հետադարձ կապը, կանխարգելիչ միջոցառումները և անընդհատ բարելավումը՝ կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ դիմակայունությունն ամրապնդելու համար:

Վերապատրաստում և ուսուցում

Վերապատրաստումն առանցքային դեր է խաղում Քաղաքականության ներդրման գործում: ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների դեպարտամենտը՝ Մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպչական զարգացման վարչության հետ համատեղ, աշխատակիցներին տրամադրում է համապատասխանությանն առնչվող դասընթացներ՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ու միջազգային պատժամիջոցների պահպանման կարգի»:

Բացի պարտադիր վերապատրաստումներից, Համապատասխանության վարչությունը կարող է անցկացնել նպատակային քննարկումներ, հանդիպումներ և իրազեկման այլ նախաձեռնություններ՝ աջակցելու համապատասխանությանը և ամրապնդելու Քաղաքականության դրույթները: Բոլոր աշխատակիցներից պահանջվում է մասնակցել դասընթացներին, հետևել Քաղաքականության մեջ շարադրված սկզբունքներին և խուսափել ցանկացած գործողությունից, որը կարող է հանգեցնել խախտումների:

Բոլոր աշխատակիցները ենթակա են պարտադիր համապատասխանության վերապատրաստման առնվազն երկու տարին մեկ անգամ, իսկ նոր ընդունված աշխատակիցները ստանում են համապատասխան դասընթաց ինտեգրման գործընթացի շրջանակներում:

2025 թվականի վերապատրաստումների վիճակագրությունը

ՑՈՒՑԱՆԻՇ	ԱՐԴՅՈՒՆՔ
Նոր ընդունված աշխատակիցների մասնակցություն	2025 թվականին աշխատանքի ընդունված բոլոր նոր 255 աշխատակիցն անցել է հակակոռուպցիոն դասընթաց (ընդհանուր աշխատակիցների 13.6%-ը):
Ընդհանուր վերապատրաստված աշխատակիցներ	Հաշվետու տարում հակակոռուպցիոն դասընթաց է անցել 181 աշխատակից (ընդհանուր աշխատակիցների 10%-ը):

Վերապատրաստվածների բաշխվածությունն ըստ օղակների.

- Մասնագետներ: 62.9%
- Կրտսեր ղեկավարներ 1%
- Միջին օղակի ղեկավարներ 36%

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՈԼՈՐՏ	ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ 2025	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏՈՒԺ
Ուսուցում անցած աշխատակիցներ	**255**	**181**
Մասնաբաժինը ընդհանուր աշխատուժում	**13.6%**	**10%**
Վերապատրաստված մասնագետներ	–	62.9% of 181
Կրտսեր ղեկավարներ	–	1% of 181
Վերապատրաստված միջին օղակի ղեկավարներ	–	36% of 181

Բանկը խթանում է թափանցիկության, հաշվետվողականության և էթիկ վարքագծի մշակույթը կազմակերպության բոլոր մակարդակներում և բոլոր շահակիցների շրջանում, ներառյալ՝ աշխատակիցները, Խորհրդի անդամները, բաժնետերերը, հաճախորդները, կապալառուները, մատակարարները և այլ գործընկերները:

Որպես իր հակակոռուպցիոն համակարգի մաս՝ Խումբն ընդունում է, որ կաշառակերության, կոռուպցիայի, շահերի բախման, ոչ էթիկ վարքագծի և այլ խախտումների ժամանակին բացահայտումն ու զեկուցումը էական նշանակություն ունեն կայուն և պատասխանատու գործարար գործառնություններ ապահովելու համար: Այդ իսկ պատճառով Խումբը խրախուսում է աշխատակիցներին և շահակիցներին բարձրաձայնել մտահոգությունները և զեկուցել կասկածելի անօրինական վարքագծի մասին՝ առանց հետապնդման կամ վրեժխնդրության վախի:

Այս հանձնառությունն աջակցելու համար Խումբը ներդրել է անկախ ազդարարման համակարգ՝ համահունչ << Կորպորատիվ կառավարման կանոնագրքի սկզբունքներին և միջազգային լավագույն փորձին: Հարթակը շահագործվում է «Whispli» անկախ եվրոպական պրովայդերի կողմից և ապահովում է անվտանգ, գաղտնի և անանուն հաղորդումների ներկայացում:

Մտահոգությունները կարող են զեկուցվել հետևյալ անկախ և գաղտնի ուղիներով.

- ԱԿԲԱ ԲԱՆԿ ԽՄԲԻ Ազդարարման հարթակ (Whispli),
- Ազդարարման թեժ գիծ՝ +374 33 35 35 71:

Ազդարարման մեխանիզմը կարող է օգտագործվել հետևյալ խնդիրների (բայց չսահմանափակվելով դրանցով) վերաբերյալ զեկուցելու համար.

- Կոռուպցիա և կաշառակերություն,
- Շահերի բախում,
- Օրենսդրական կամ կարգավորող պահանջների խախտումներ,
- Խմբի ակտիվների կամ գաղտնի տեղեկատվության չարաշահում,
- Հետապնդումներ խտրականություն կամ աշխատավայրում անպատշաճ վարքագիծ,
- Հաճախորդների կամ կարգավորող մարմինների նկատմամբ անպատշաճ վարքագիծ,
- Բնապահպանական կամ սոցիալական պատասխանատվության ստանդարտների խախտումներ,
- Վրեժխնդրություն, թաքցնում կամ ակնհայտ խախտումների մասին չզեկուցում:

1. Գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն

Ազդարարման բոլոր հաղորդումները դիտարկվում են գաղտնիության ամենաբարձր աստիճանով: Զեկուցող անձի ինքնությունը և ցանկացած տեղեկատվություն, որը կարող է նույնականացնել նրան, պաշտպանվում են և կարող են բացահայտվել միայն ազդարարի հստակ համաձայնությամբ կամ կիրառելի օրենսդրությամբ սահմանված պահանջների դեպքում: Խումբն ապահովում է համապատասխանություն անձնական տվյալների պաշտպանության կիրառելի ստանդարտներին և սկզբունքներին՝ ազդարարման հաղորդումների մշակման ընթացքում:

2. Վրեժխնդրության բացառում և պաշտպանություն

Խումբը խստիվ արգելում է ցանկացած ձևի վրեժխնդրություն այն ազդարարների նկատմամբ, ովքեր մտահոգությունների մասին զեկուցել են բարեխղճորեն: Վրեժխնդրությունը, ներառյալ՝ աշխատանքից ազատումը, հալածանքները կամ այլ անբարենպաստ վերաբերմունքը, ինքնին հանդիսանում է սույն Քաղաքականության և Խմբի Վարքագծի կանոնագրքի խախտում և կհանգեցնի կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառմանը:

3. Բարեխղճություն և պատասխանատվություն

Հաղորդումները պետք է ներկայացվեն ազնվորեն և հիմնված լինեն ողջամիտ համոզմունքի վրա, որ բացահայտված տեղեկատվությունը հավաստի է կամ բարձրացնում է իրական մտահոգություն: Ազդարարներից չի պահանջվում ներկայացնել ապացույցներ, սակայն նրանցից պահանջվում է գործել պատասխանատու կերպով և բարեխղճորեն: Գիտակցաբար կեղծ կամ չարամիտ մեղադրանքներ ներկայացնելը հանդիսանում է սույն Քաղաքականության խախտում և կարող է հանգեցնել համապատասխան միջոցների կիրառմանը՝ համաձայն ներքին ընթացակարգերի:

Օժանդակող փաստաթղթեր

Հակակոռուպցիոն քաղաքականության ներդրումն ապահովող օժանդակող փաստաթղթերն են.

- Էթիկայի կանոնագիրք,
- Վարքագծի կանոնագիրք,
- Շահերի բախման քաղաքականություն,
- Ազդարարման քաղաքականություն,
- Վարչական միջոցառումների հաշվետվություն,
- Հակակոռուպցիոն հարցաթերթիկ,
- Նվերների և հյուրընկալության հայտարարագիր,
- ԱԿԲԱ ԲԱՆԿ ԽՄԲԻ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (ՓԼ/ԱՖ) ու միջազգային պատժամիջոցների քաղաքականություն,
- Եռամսյակային համապատասխանության հաշվետվություն,
- Անսովոր դեպքերի և միտումների հաշվետվություն:

3. Ռիսկերի կառավարում

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

(GRI 3-3)

Բանկը պահպանում է ռիսկերի կառավարման կառուցվածքային և հեռանկարային մոտեցում, որը նախագծված է աջակցելու հիմնավոր որոշումների կայացմանը և պաշտպանելու երկարաժամկետ կայունությունը:

Ռիսկերի կառավարման համակարգը հանդիսանում է այս մոտեցման հիմքը՝ սահմանելով հստակ չափանիշներ բոլոր հիմնական գործունեություններում ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման համար: Այս համակարգի միջոցով բանկն ապահովում է, որ ռիսկերը համակարգված կերպով ընկալվեն, մոնիթորինգի ենթարկվեն և հասցեագրվեն այնպիսի եղանակով, որը խթանում է գործառնական դիմակայունությունը և ռազմավարական հստակությունը:

Համահունչ լինելով բանկի ավելի լայն նպատակներին՝ սույն քաղաքականությունը շեշտադրում է մի քանի հիմնական թիրախներ.

- ուժեղ և թափանցիկ վերահսկողական մեխանիզմների պահպանումը,
- կապիտալի և իրացվելիության արդյունավետ պլանավորմանն աջակցելը,
- ռիսկերի և եկամտաբերության միջև օպտիմալ հավասարակշռության ապահովումը,
- ռիսկերի խելամիտ և պատասխանատու ստանձնման մշակույթի ամրապնդումը:

Որպես ռազմավարական պլանավորման անբաժանելի մաս՝ ռիսկերի կառավարումը հնարավորություն է տալիս բանկին վստահորեն հաղթահարել անորոշությունները և գործել կայուն կերպով երկարաժամկետ հեռանկարում:

Ռիսկերի կառավարման ռազմավարությունը սահմանվում է մի քանի հիմնական ներքին փաստաթղթերով, որոնք միասին արտահայտում են ռիսկերի ստանձնման գործունեությունն ուղղորդող սկզբունքները, ընթացակարգերն ու սահմանաչափերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ռիսկերի կառավարման համակարգ	Սահմանում է բանկի համապարփակ ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն ուրվագծում է հիմնական նպատակները, ուղղորդող սկզբունքները և նվազագույն պահանջները, որոնք սահմանում են բոլոր գործունեություններում ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման և մոնիթորինգի մոտեցումները: Այն նաև սահմանում է բանկին առնչվող հիմնական ներքին ռիսկերը, ինչպես նաև կառավարման կառուցվածքը՝ հստակորեն բաշխելով դերերը, պատասխանատվությունները և հաշվետու մարմինները ռիսկերի արդյունավետ կառավարման համար:
Վարկային ռիսկի կառավարման քաղաքականություն	Ծառայում է որպես հիմնական փաստաթուղթ, որն ուղղորդում է Տնօրենների խորհրդին և Գործադիր ղեկավարությանը վարկավորմանն առնչվող գործունեության վերահսկողության հարցում: Թեև այն սահմանում է կոնկրետ չափանիշներ և ստանդարտներ, այն նաև արտացոլում է բանկի հիմքում ընկած վարկավորման փիլիսոփայությունը: Քաղաքականությունը սահմանում է ակտիվների որակի և եկամտաբերության հիմնարար սկզբունքները՝ համապատասխանեցնելով Ռիսկի ախորժակի համակարգին ու ընդհանուր ռազմավարությանը, և հստակ ուղղություն է տրամադրում բանկի վարկային գործառնությունների համար:
Ազդարարման քաղաքականություն	Հիմնվելով բանկի Ռիսկերի կառավարման համակարգի և Ռիսկի ախորժակի համակարգի վրա՝ այս Քաղաքականությունը սահմանում է ռիսկի ախորժակի, հանդուրժողականության մակարդակների, կարողությունների, թիրախների և այլ ներքին սահմանաչափերի փաստացի կամ պոտենցիալ խախտումների բացահայտման և էսկալացիայի սկզբունքները: Այն ուրվագծում է ազդարարման գործընթացում ներգրավված բոլոր մարմինների դերերն ու պատասխանատվությունները և հստակեցնում պահանջվող մոնիթորինգի ու հաշվետվողականության պարբերականությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Ռիսկերի կառավարման դեպարտամենտն առաջնահերթություն է տվել այս փաստաթղթերի կատարելագործմանն ու համապատասխանեցմանը ռիսկերի կառավարման զարգացող ստանդարտներին և կարգավորող մարմինների սպասումներին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել համակարգի ամրապնդմանը՝ Վարկային ռիսկի կառավարման քաղաքականության վերանայման միջոցով, որը նախաձեռնվել էր դեռևս 2024 թվականին:
Երկու նախաձեռնություններն էլ հաջողությամբ ավարտվել են 2025 թվականին՝ հանգեցնելով թարմացված և լիովին ինտեգրված ռիսկերի կառավարման համակարգի ձևավորմանը: Այս բարելավումներն ամրապնդում են մեր գործելակերպի հուսալիությունն ու համապարփակությունը՝ ապահովելով համապատասխանություն կարգավորող պահանջներին և ոլորտի լավագույն ստանդարտներին:

Մեր ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչները՝ կիրառվող մեթոդաբանությունը, ռիսկերի պրոֆիլավորման գործընթացը, ռիսկերի ուժեղ մշակույթի զարգացումը և էական ռիսկերի դասակարգումը, սահմանում են կանոնակարգված և կայուն կառուցվածք, որն աջակցում է բանկի երկարաժամկետ ռազմավարական հավակնություններին և խթանում տեղեկացված ու պատասխանատու ռիսկերի ստանձնման մշակույթը:

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի ռիսկերի կառավարման գործունեությունը վերահսկում է Ռիսկերի կառավարման գծով տնօրենը՝ ապահովելով, որ ռիսկերի կառավարման գործելակերպերը լինեն հետևողական, թափանցիկ և համահունչ ինչպես կարգավորող մարմինների սպասումներին, այնպես էլ Բանկի ռազմավարական նպատակներին:

Բանկը կիրառում է համապարփակ, բազմափուլ ռիսկերի կառավարման գործընթաց, որը նախագծված է բոլոր բիզնես գործունեություններում ռիսկերի հետևողական բացահայտումը, գնահատումը, արձագանքումը և մոնիթորինգն ապահովելու համար: Այս գործընթացը հանդիսանում է հուսալի կառավարման և տեղեկացված որոշումների կայացման հիմքը.


Ռիսկերի բացահայտում. Գործընթացը սկսվում է ռիսկերի համակարգված բացահայտմամբ: Այս փուլում հայտնաբերվում, փաստաթղթավորվում և դասակարգվում են պոտենցիալ սպառնալիքները՝ գործունեության բոլոր ուղղություններում լիարժեք տեսանելիություն ապահովելու համար: Նպատակն է բացահայտել և նկարագրել ցանկացած ռիսկ, որը կարող է խոչընդոտել բանկին հասնել իր կարճաժամկետ կամ երկարաժամկետ նպատակներին:

Ռիսկերի գնահատում. Ռիսկերը բացահայտվելուց հետո դրանք գնահատվում են՝ հասկանալու համար դրանց հնարավոր ազդեցությունը: Սա ներառում է կորուստների վերաբերյալ տվյալների հավաքագրում, պահանջվող կապիտալի հաշվարկում, մանրամասն վերլուծությունների իրականացում և սթրես-թեստերի անցկացում: Այս գնահատման միջոցով բանկն ավելի հստակ պատկերացում է ստանում յուրաքանչյուր ռիսկի բնույթի և դրա հնարավոր քանակական ու որակական ազդեցությունների չափի մասին:

Ռիսկերին արձագանքում. Որոշումների կայացման գործընթաց՝ կապված ստորև նշված մեխանիզմների կիրառման հետ, որոնք ուղղված են բանկի գործառնություններին և ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը:

Ռիսկերի մոնիթորինգ և հաշվետվողականություն. Վերջնական փուլը ներառում է ռիսկերին առնչվող տեղեկատվության շարունակական դիտարկումը և համապատասխան շահակիցներին ժամանակին տեղեկացումը:

Սահմանված նպատակներին ու սկզբունքներին համահունչ ռիսկերի կառավարման համակարգի ստեղծումը և դրա ինտեգրումը բանկի ռազմավարական ու գործառնական կառավարման մեջ իրականացվում է Համակարգի հիմնասյուների արդյունավետ ներդրման միջոցով: Այս հիմնասյուներն ուրվագծված են ստորև, իսկ դրանց հիերարխիան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:


ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳ
ՌԻՍԿԻ ԱԽՈՐԺԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍԹՐԵՍ-ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ (ԿՀԳՆԳ)
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի ռիսկերի կառավարման համակարգը նախագծված է ապահովելու արդյունավետ վերահսկողություն, աջակցելու հիմնավոր որոշումների կայացմանը, համապատասխանեցնելու ռիսկերի կառավարումը ռազմավարական նպատակներին և ներդնելու ռիսկերի գիտակցումը ողջ կազմակերպությունում:

Կառուցվածքի գագաթնակետում Տնօրենների խորհուրդն ապահովում է ընդհանուր ուղղությունը, գնահատում է ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը, հաստատում է հիմնական քաղաքականությունները և երաշխավորում, որ ողջ հաշվետվողականությունը համապատասխանի կարգավորող մարմնի պահանջներին:

Խորհրդին աջակցելու նպատակով, Խորհրդի մակարդակի հատուկ կոմիտեները վերանայում են ռիսկերի պրոֆիլը, գնահատում կապիտալի համարժեքությունն ու սթրես-թեստավորման արդյունքները և ապահովում, որ գործադիր ղեկավարությունը գործի հաստատված ռիսկի ախորժակի սահմաններում:

Գլխավոր գործադիր տնօրենը ապահովում է ռիսկերի կառավարման համակարգի գործնական ներդրումը, բաշխում է պատասխանատվությունները և տրամադրում անհրաժեշտ ռեսուրսները: Գլխավոր գործադիր տնօրենը պահպանում է համապատասխանությունը ստանդարտներին, բացահայտում է էական ռիսկերը և ապահովում տեղական ճշգրիտ հաշվետվողականությունը:

Գործադիր մակարդակի կոմիտեներն աջակցում են՝ մոնիթորինգի ենթարկելով համապատասխանությունը ռիսկի ախորժակին, վերանայելով ցուցանիշներն ու ազդանշանները և ապահովելով ուժեղ համակարգում տարբեր գործառույթների միջև:

Վերահսկողական գործառույթներն իրականացնում են անկախ վերահսկողություն, մոնիթորինգ և հաշվետվողականություն՝ նպաստելով բանկի ռիսկերի պրոֆիլի ամբողջական պատկերացման ձևավորմանը և ամրապնդելով ռիսկերի մշակույթը ողջ կազմակերպությունում:

ՌԻՍԿԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԳԾԵՐԸ

Արդյունավետ ռիսկերի կառավարման հիմքը ողջ կազմակերպությունում հանդիսանում է ուժեղ ռիսկերի մշակույթը: Այն արտացոլում է ընդհանուր նորմերը, արժեքները և վարքագիծը, որոնք ուղղորդում են աշխատակիցներին իրենց ամենօրյա պարտականությունների շրջանակում ռիսկերի բացահայտման, ընկալման և կառավարման գործում: Կազմակերպությունը հանձնառու է ձևավորել ռիսկերի գիտակցմամբ օժտված միջավայր, որտեղ խելամիտ որոշումների կայացումն ու պատասխանատու վարքագիծը հետևողականորեն կիրառվում են բոլոր մակարդակներում:

Ղեկավարությունն ակտիվ դեր է խաղում այս մշակույթի զարգացման գործում՝ կազմակերպելով վերապատրաստման ծրագրեր, գնահատելով ռիսկերի գիտակցման մակարդակը, սահմանելով հստակ ակնկալիքներ և ապահովելով բաց հաղորդակցության ուղիներ տարբեր գործառույթների միջև: Նույնքան կարևոր է նաև ավագ անձնակազմի կողմից տրվող օրինակը, որն ամրապնդում է ինչպես կառավարման պաշտոնական ստանդարտները, այնպես էլ ոչ պաշտոնական վարքագծային ակնկալիքները: Այս մշակույթի շրջանակներում կորպորատիվ շահերը գերակայում են անհատական նկատառումների նկատմամբ՝ խթանելով բարեխղճությունն ու համապատասխանությունը երկարաժամկետ նպատակներում:

Ռիսկերի մշակույթի հիմնական տարրերը

Կազմակերպության ռիսկերի մշակույթի հիմքը կազմում են չորս հիմնական սյուները.

ՏԱՐՐ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ռիսկերի թափանցիկություն	Արտացոլում է, թե որքանով բաց է կազմակերպությունը հաղորդակցում ռիսկերը և որքանով հստակ են մարդիկ հասկանում դրանք՝ ապահովելով խնդիրների վաղ և առանց վարանելու ներկայացումը:
Ռիսկերի ճանաչում	Շեշտադրում է աշխատակիցների՝ ռիսկերը բացահայտելու և ընդունելու կարողությունը՝ խրախուսելով նրանց բարձրաձայնել և կասկածի տակ դնել կանխադրույթները, այլ ոչ թե անտեսել մտահոգությունները:
Ռիսկերին արձագանքում	Ցույց է տալիս, թե որքան արագ և ջանասիրաբար է կազմակերպությունը գործում ի հայտ եկող խնդիրները լուծելու համար՝ նախքան դրանց էսկալացիան և խորացումը:
Ռիսկերի նկատմամբ հարգանք	Ընդգծում է կազմակերպության շահերը հետևողականորեն առաջնահերթություն դարձնելու, թիմերի միջև համագործակցելու և սահմանված կանոններին հետևելու կարևորությունը՝ այդպիսով ամրապնդելով կանոնակարգված և հաշվետու ռիսկերի մշակույթը:

Ռիսկերի տիպաբանություն

Կազմակերպության Ռիսկերի տիպաբանությունն ուրվագծում է գործառնությունների ընթացքում կառավարվող ռիսկերի հիմնական կատեգորիաները, որոնք են՝

- Վարկային ռիսկ
- Վարկային կոնցենտրացիայի ռիսկ
- Ներխմբային գործարքների ռիսկ
- Գործառնական ռիսկ
- Իրավական ռիսկ
- Համապատասխանության ռիսկ

Պաշտպանության երեք գծերի մոդելը

Ռիսկերի կառավարման համակարգին աջակցում է ռիսկերի կառավարման և ներքին հսկողության 3 գծերի մոդելը, որն ապահովում է պատասխանատվությունների հստակ և կառուցվածքային բաշխում ռիսկերի բացահայտման, կառավարման, վերահսկողության և հավաստիացման համար: Այս մոդելը բարձրացնում է հաշվետվողականությունն ու թափանցիկությունը՝ երաշխավորելով, որ ռիսկերն արդյունավետորեն կառավարվում են ողջ կազմակերպությունում

Պաշտպանության առաջին գիծ.
Առաջին գիծը բաղկացած է գործառնական և բիզնես ստորաբաժանումներից, որոնք պատասխանատու են իրենց ամենօրյա գործունեությունից բխող ռիսկերի կառավարման համար: Այս ստորաբաժանումներն ապահովում են, որ գործընթացներն իրականացվեն ռիսկի հաստատված հանդուրժողականության և վերահսկողության պարամետրերի սահմաններում: Որպես ռիսկի հիմնական կրողներ նրանք հաշվետու են ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման համար՝ համաձայն հաստատված Ռիսկի ախորժակի համակարգի: Նրանց դերը հիմնարար է ռիսկերի գիտակցումն ուղղակիորեն բիզնես գործառնությունների մեջ ներդնելու գործում:

Պաշտպանության երկրորդ գիծ.
Երկրորդ գիծն ապահովում է վերահսկողություն, ուղղորդում և վերահսկողական մեխանիզմներ՝ ռիսկերի արդյունավետ կառավարմանն աջակցելու համար: Այն մշակում է ռիսկերի կառավարման և համապատասխանության համակարգերը, իրականացնում է դրանց ներդրման մոնիթորինգը և ապահովում համապատասխանությունը կարգավորող ու ներքին պահանջներին: Երկրորդ գծի հիմնական գործառույթները ներառում են ռիսկերի կառավարումը, համապատասխանությունը, տեղեկատվական և կիբեռանվտանգությունը, ՓԼ/ԱՖ-ն և պատժամիջոցները: Այս ստորաբաժանումները սահմանում են ռիսկի ախորժակի պարամետրերը, մշակում են քաղաքականություններն ու ընթացակարգերը և վերահսկում ռիսկերի վերահսկման համակարգերի շարունակական աշխատանքը՝ հետևողականությունն ու կարգավորող պահանջների պահպանումն ապահովելու համար:

Պաշտպանության երրորդ գիծ.
Երրորդ գիծն ապահովում է անկախ և օբյեկտիվ հավաստիացում կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման, համապատասխանության և ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության վերաբերյալ: Այս դերն իրականացվում է բանկի Ներքին աուդիտի կողմից: Երրորդ գիծը գործում է առաջին և երկրորդ գծերից լիովին անկախ՝ տրամադրելով կազմակերպության վերահսկողական միջավայրի կառուցվածքի և կատարողականի անկողմնակալ գնահատականներ:

ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ

(GRI 3-3, SASB FN-CB-550a.2)

Կապիտալի ներքին համարժեքության գնահատման գործընթաց

Բանկը կիրառում է կառուցվածքային Կապիտալի ներքին համարժեքության գնահատման գործընթաց (ICAAP)՝ ֆինանսական կայունությունն ու կարգավորող մարմնի պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար: ICAAP-ն ինտեգրված է ռազմավարական և գործառնական պլանավորման մեջ և հիմնված է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- Օրենսդրական համապատասխանություն,
- Ռիսկերի արժանահավատ գնահատում,
- Համապատասխանեցում ռիսկերի կառավարման և հաշվետվողականության համակարգերին,
- Գործընթացի ճկունություն,
- Շարունակական բարելավում:

Տնօրենների խորհուրդը, Ռիսկերի կառավարման կոմիտեները, ինչպես նաև ռիսկերի և ֆինանսների համապատասխան ստորաբաժանումները պատասխանատու են կապիտալի գնահատման համար: Օբյեկտիվությունն ու արժանահավատությունն ապահովելու նպատակով բանկը հիմնականում հիմնվում է քանակական մեթոդների վրա: ICAAP-ը սերտորեն կապված է ռազմավարական պլանավորման, ռիսկի ախորժակի սահմանման և սթրես-թեստավորման հետ:

ICAAP համակարգի բաղադրիչները

ICAAP համակարգը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- Բիզնես մոդելի վերլուծություն,
- Էական ռիսկերի բացահայտում և գնահատում,
- Կապիտալի ներքին բուֆերների սահմանում,
- Ռիսկի ախորժակի և հանդուրժողականության մակարդակների սահմանում,
- Սթրես-թեստավորում և արդյունքների ազդեցության գնահատում:

Բանկը չի ֆինանսավորում շրջակա միջավայրին վնաս հասցնող գործունեություն, զենքի արտադրություն կամ: Վիճակախաղերն ու խաղատները: Ֆինանսավորվող նախագծերի բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ենթարկվում են մանրակրկիտ գնահատման:

Կայուն զարգացումը
Ակբա բանկում

1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ **84**

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ **93**



Կայուն զարգացումը Ակբա բանկում

1. Բնապահպանական պատասխանատվություն

(GRI 3-3)

Հավատարիմ մնալով կայուն զարգացման մեր սկզբունքներին՝ մենք հետևրողականորեն ընդլայնում ենք շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված աշխատանքների ծավալները: Այս նախաձեռնությունները ուղղված են ածխածնային հետքի նվազեցմանը ինչպես նաև աշխատակիցների և շահակից կողմերի շրջանում բնապահպանական պատասխանատվության մշակույթի ամրապնդմանը :

Ակբա բանկում կայուն ապագայի կարևորագույն առաքելությունն է թղթի և էլեկտրաէներգիայի խնայողությունը՝ պատասխանատու և արդյունավետ օգտագործման միջոցով, ինչպես նաև պլաստիկի օգտագործման նվազեցումը: Այս ուղղությամբ մեր ջանքերը ներառում են.

- Թափոնների տեսակավորման աղբամանների տեղադրում բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում՝ վերամշակումը խթանելու համար:
- Անցում տպագիր տարեկան օրացույցներից ամբողջությամբ թվային ձևաչափի,ինչը զգալիորեն կրճատում է թղթի սպառումը:
- Սեզոնային ծառատունկերի կազմակերպում՝ նպաստելու անտառավերականգնմանը և կենսաբազմազանության պահպանմանը:
- Էկոլոգիապես մաքուր կորպորատիվ նվերների տրամադրում՝ կայուն ընտրությունը խթանելու համար:
- Բանկային քաղվածքների ձևաչափի փոփոխում, սպասարկմանն առնչվող փաստաթղթերի տպագրության կրճատում և տրամադրվող քարտերի հետ թղթե ներդիրների օգտագործման նվազեցում:
- Բանկային գաղտնի տեղեկատվության շրեդերացում և վերամշակում՝ անվտանգ և կայուն ուտիլիզացումն ապահովելու համար:
- Հոսանքի անջատիչների մոտ հիշեցնող նշանների տեղադրում ողջ բանկում՝ հորդորելով աշխատակիցներին անջատել լույսերը, երբ դրանք չեն օգտագործվում, ինչն աջակցում է էներգախնայողությանը և շեշտադրում մեր համապատասխանությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին (այսուհետ ԿԶՆ-ՆԵՐ):

Այս գործողությունները հաստատում են մեր հանձնառությունը կայուն ապագայի հանդեպ՝ կերտելով բանկային մի աշխարհ, որը զարգանում է բնության հետ ներդաշնակ:

Վերջին տարիների ընթացքում մենք իրականացրել ենք մի շարք միջոցառումներ՝ հաճախորդներին դեպի էլեկտրոնային ուղիներ ուղղորդելու և, հետևաբար, մեկանգամյա օգտագործման ռեսուրսների սպառումից խուսափելու նպատակով: Սա մի միտում է, որի արագացումը մենք ակնկալում ենք առաջիկա տարիներին:

2025 թվականին մենք շարունակեցինք զարգացրնել մեր թվային բանկինգը՝ ընդլայնելով հեռավար ծառայությունների հասանելիությունն ու ֆունկցիոնալությունը: Նոր ինտեգրումները հնարավորություն տվեցին հաճախորդներին անմիջապես բանկի թվային ուղիներով կատարել կոմունալ և այլ պարբերական վճարումներ, ինչպիսիք են ինտերնետի սպառման վճարները, դոմոֆոնի ծառայությունները և գույքահարկի վճարումները: Բացի այդ, մենք կատարելագործեցինք անհպում վճարումների հնարավորությունները՝ հետագա զարգացում տալով NFC տեխնոլոգիայի վրա հիմնված լուծումներին, ինչը հնարավորություն տվեց անխափան կերպով օգտագործել Google Pay և Apple Pay համակարգերը:

Մենք նաև գործարկեցինք մի շարք նորարարական և շրջակա միջավայրի համար բարենպաստ բանկային լուծումներ, որոնք ուղղված են հաճախորդների՝ բանկ այցելելու անհրաժեշտության նվազեցմանը և թղթի օգտագործման կրճատմանը: Դրանք ներառում են.

- Հաճախորդների հեռավար գրանցում կենսաչափական նույնականացման միջոցով,
- Հաճախորդների կոնտակտային տվյալների հեռավար թարմացում,
- Maxchatbot վիրտուալ օգնականի ինտեգրում՝ հաճախորդների հետ փոխգործակցությունը բարելավելու և պարզեցնելու նպատակով:

Այս նախաձեռնությունների միջոցով բանկը ձգտում է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունները դարձնել ավելի արագ և հարմարավետ, միաժամանակ նվազեցնելով թղթի օգտագործումը և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Թվային լուծումների կիրառման, դրանցից օգտվող հաճախորդների և իրականացվող գործարքների վերաբերյալ առավել մանրամասն տվյալները ներկայացված են «Հարաբերություններ հաճախորդների հետ և պատասխանատվություն» բաժնում:

ԱԾԽԱԾՆԱՅԻՆ ՀԵՏՔԸ. ՍԵՓԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(GRI 3-3, GRI 305-1, GRI 305-2, GRI 305-4, GRI 305-5)

Ակբա բանկում մենք իրականացրել ենք ջերմոցային գազերի (այսուհետ՝ ՋԳ) արտանետումների 1-ին մակարդակի (Scope 1) և 2-րդ մակարդակի (Scope 2) գույքագրում՝ համաձայն Ջերմոցային գազերի արձանագրության (GHG Protocol) ուղեցույցի:


Ստորև ներկայացված գծապատկերն արտացոլում է մեր գործառնությունների ածխածնային հետքի ձևավորմանը նպաստող տարբեր գործողությունները, ներառյալ՝ գլխամասային գրասենյակի շենքերի և մասնաճյուղերի ցանցի արտանետումները: Ներկայացված են արտանետումների հետևյալ տեսակները.

Scope 1 – Ուղղակի արտանետումներ

- Տրանսպորտային միջոցների, պահուստային էլեկտրագեներատորների կամ ջեռուցման համակարգերի համար վառելիքի օգտագործումից առաջացած արտանետումներ:
- Օդորակման, օդափոխության և ջեռուցման (HVAC) համակարգերի սառնագենտների տարեկան լիցքավորումից առաջացած անկանխատեսելի արտանետումներ:

Scope 2 – Անուղղակի արտանետումներ

- Ազգային էլեկտրական ցանցից գնված էլեկտրաէներգիայի օգտագործումից առաջացած արտանետումներ:



Գծապատկեր 5. Սեփական գործառնություններում Scope 1 և Scope 2 ջերմոցային գազերի արտանետումների աղբյուրները

Որպես արտանետումների հաշվարկման բազային տարի մենք ընտրել ենք 2025 թվականը, քանի որ այն տրամադրում է առկա ամենաթարմ և համապարփակ տվյալների բազան: Մեր արտանետումների հաշվետվողականությունը հիմնված է համախմբված մոտեցման վրա՝ կիրառելով 100% վերահսկողության մեթոդը Ակբա բանկի և «Ակբա Լիզինգի» նկատմամբ, որը գտնվում է բանկի լիարժեք գործառնական վերահսկողության ներքո:

Այս փուլում 3-րդ մակարդակի (Scope 3) արտանետումները չեն ներառվել մեր հաշվարկներում: Ուշադրությունը կենտրոնացած է եղել 1-ին (Scope 1) և 2-րդ (Scope 2) մակարդակների արտանետումների վրա, որոնք ներկայացվում են ածխաթթու գազի համարժեքի տոննաներով (տCO2հ):

Բացի այդ, մենք հաշվարկել ենք ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունը մեր ընդհանուր եկամտի նկատմամբ՝ արտա-

հայտված եկամտի մեկ հայկական դրամի դիմաց CO2 համարժեքի կիլոգրամներով (կգCO2հ/<< դրամ)։ Այս ցուցանիշն օգնել է մեզ գնահատել մեր գործառնությունների արդյունավետությունը՝ ֆինանսական արդյունքի միավորի հաշվով արտանետումների տեսանկյունից՝ ամրապնդելով թափանցիկ և պատասխանատու կայուն զարգացման գործելակերպի նկատմամբ մեր հանձնառությունը։

ԱԿԲԱ ԲԱՆԿՈՒՄ ՄԵՆՔ ՍԱՀՄԱՆԵԼ ԵՆՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ SCOPE 1 ԵՎ SCOPE 2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ.

Ակբա բանկի Scope 1 և Scope 2 արտանետումների հաշվարկը կենտրոնանում է այն աղբյուրներից արտանետումների վրա, որոնք ուղղակիորեն պատկանում և լիովին վերահսկվում են մեր կողմից։ Երրորդ կողմերի կողմից կառավարվող օբյեկտներից կամ գործառնություններից արտանետումները բացառվել են, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործառնությունները գտնվում են մեր 100% գործառնական վերահսկողության ներքո։ Օրինակ՝ վարձակալվածշենքերից արտանետումները, որոնք զբաղեցված են այլ վարձակալների կողմից, ներառված են Scope 1 և Scope 2-ի շրջանակներում։

ՄԵՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(GRI 302 -1)

Մեր Scope1 և Scope2 գույքագրումը պատրաստելու համար հավաքագրվել են համապատասխան տվյալներ՝ ապահովելով այս մակարդակներում ներառված յուրաքանչյուր բնագավառի մանրակրկիտ ուսումնասիրությունը։ Ջերմոցային գազերի արձանագրության համաձայն՝ հավաքագրվել են գործունեության վերաբերյալ տվյալները և գնահատվել են արտանետումների համապատասխան գործակիցները։

Կիրառվել է տարածքային հիմքով մոտեցումը, որն արտացոլում է տեղական էլեկտրական ցանցերի արտանետումների միջին ինտենսիվությունը՝ օբյեկտներում օգտագործված գնված էլեկտրաէներգիայի համար։ Մեթոդաբանությունը մշակվել է էլեկտրաէներգիայի սպառումից առաջացող արտանետումները էլեկտրական ցանցի արտանետումների միջին ինտենսիվության հիման վրա մոդելավորելու համար։

Մենք հավաքագրել ենք համապարփակ տվյալներ մեր գործառնական օբյեկտների և «Ակբա Լիզինգի» օբյեկտների գույքագրման համար։ Արտանետումների ճշգրտորեն չափումն ու հաշվետվողականությունն ապահովելու նպատակով սահմանվել են հստակ սահմաններ, որոնք ընդգրկում են ստորև ներկայացված երեք հիմնական կատեգորիաները։ Այս սահմանները հիմք են հանդիսանում Scope 1 արտանետումների հաշվարկման համար, որոնք ներառում են ուղղակի արտանետումները ինչպես մեր գործառնական օբյեկտներից, այնպես էլ 100% գործառնական վերահսկողության ներքո գտնվող «Ակբա Լիզինգի» օբյեկտներից։ Ներկայացված տվյալները վերաբերում են 2025 թվականի հաշվետու ժամանակահատվածին։

Scope 1-ի հաշվարկման համար սահմանված սահմանները

Շարժական աղբյուրներ (ընկերության սեփական տրանսպորտային միջոցներ). Ակբա բանկը շահագործում է տրանսպորտային միջոցների սեփական պարկ՝ դաշտային և գրասենյակային աշխատանքների, այդ թվում՝ տեխնիկական սպասարկման իրականացման համար: Հետևաբար, այս մեքենաներից արտանետումները հանդիսանում են Scope 1 գույքագրման մաս: Որպես վառելիքի աղբյուր օգտագործվում են դիզելային վառելիքը, բենզինը, սեղմված բնական գազը և հեղուկացված բնական գազը:

Ստացիոնար աղբյուրներ (ընկերության սեփական գեներատորներ). Ակբա բանկին են պատկանում և նրա կողմից շահագործվում են սեփական էլեկտրակայաններ (օրինակ՝ դիզելային վառելիքով և բնական գազով աշխատող պահուստային գեներատորներ): Այս գեներատորներից արտանետումները ներառված են Scope 1-ի հաշվարկում, որտեղ օգտագործվում են բենզին և սեղմված բնական գազ:

Անկանխատեսելի (ցրված արտանետումներ. Ակբա բանկն իր օբյեկտների սառեցման համակարգերում օգտագործում է սառնագենտներ: Ներկայացված տվյալները ներառում են սառեցման համակարգերի արտահոսքի փոխարինման համար լիցքավորված սառնագենտների քանակը չորս տեսակի սառնագենտների համար՝ R-410A, R-22, R-407C և R-32:

ԱՂՅՈՒՍԱԿ 7. SCOPE 1-Ի ՏՎՅԱԼՆԵՐԸ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)

ՆԿԱՐԱԳԻՐ	ԱԿԲԱ ԲԱՆԿ	ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ
Ավտոպարկ		
Diesel	29,000 L	154 L
Petrol / Gasoline	35,162 L	2,640 L
CNG	29,986 SCM (Standard Cubic Meters)	-
LPG	26,872 kg	-
Ստացիոնար այրում		
LPGl	-	1,819 kg
Natural Gas	224,700 SCM	-
Ցնդող արտանետումներ		
R-410A	155 kg	-
R-22	40 kg	-
R-407C	15 kg	-
R-32	8 kg	-

Մենք հավաքագրել ենք անհրաժեշտ տվյալները Scope 2 արտանետումների համար, որոնք ընդգրկում են անուղղակի արտանետումները ինչպես մեր գործառնական, այնպես էլ լիզինգային օբյեկտներից: Ճշգրիտ գնահատումն ապահովելու նպատակով սահմանվել են հստակ սահմաններ բոլոր կատեգորիաներում:

Յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված սահմանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Ներկայացված տվյալները վերաբերում են 2025 թվականի հաշվետու ժամանակահատվածին:


Scope 2-ի հաշվարկման համար սահմանված սահմանները

Էլեկտրական ցանցի էլեկտրաէներգիա. Ընկերությունը շահագործում է բազմաթիվ գրասենյակային շենքեր և օբյեկտներ, որտեղ աշխատում են աշխատակիցները: Իրականացվելու է ազգային ցանցից գնված էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառման և տեղական էլեկտրական ցանցի արտանետումների գործակիցների հիման վրա արտանետումների հաշվարկը:

ԱՂՅՈՒՍԱԿ 8: SCOPE 2-Ի ՏՎՅԱԼՆԵՐԸ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)

ՆԿԱՐԱԳԻՐ	ԱԿԲԱ ԲԱՆԿ	ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ
Էլեկտրաէներգիա՝ ընդհանուր ցանցից	**4,656,760 kWh**	**133,600 kWh**

Ակբա Բանկի և Ակբա Լիզինգի տարածքների էներգիայի սպառման մասնաբաժինը՝ Scope 2 (2025թ. հաշվետու ժամանակաշրջան)



Գծապատկեր 6. Ակբա Բանկի և Ակբա Լիզինգի տարածքների էներգիայի սպառման մասնաբաժինը՝ Scope 2 (2025թ. հաշվետու ժամանակաշրջան)

Մեր օբյեկտների Scope 1 և Scope 2 արտանետումների վերլուծությունը բացահայտում է մի քանի հիմնական արդյունքներ:

Scope 1 արտանետումները կազմում են ընդհանուրի ընդամենը 41%-ը, մինչդեռ Scope 2 արտանետումներն ունեն շատ ավելի մեծ մասնաբաժին՝ կազմելով ընդհանուր արտանետումների 59%-ը:


Տարբեր աղբյուրների թվում ամենամեծ ազդեցությունն ունի գրասենյակներում և օբյեկտներում սպառված էլեկտրական ցանցի էլեկտրաէներգիան, որը ձևավորում է Scope 2 արտանետումների ամբողջությունը և կազմում ընդհանուր արտանետումների 60%-ը:

Scope 1 կատեգորիայի արտանետումների այլ աղբյուրները, ինչպիսիք են տրանսպորտային միջոցներում և գեներատորներում վառելիքի օգտագործումը, կազմում են ընդհանուր արտանետումների 26%-ը, մինչդեռ սառնագենտների տարեկան լիցքավորումից առաջացած արտանետումներին բաժին է ընկնում մնացած 14%-ը:

ԱՂՅՈՒՍԱԿ 9. SCOPE 1 ԵՎ SCOPE 2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ - ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)

ՑՈՒՑԱՆԻՇ	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ (TCO_{2E})	ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆ
Scope 1		
Վառելիքի սպառում ստացիոնար աղբյուրներից	431.2	15%
Վառելիքի սպառում տրանսպորտային միջոցների կողմից	305.4	11%
Սառնագենտների (ֆրեոնի) տարեկան լիցքավորում	398.3	14%
Scope 2		
Էլեկտրաէներգիա հանրային (ընդհանուր) ցանցից	**1665.7**	**59%**
Ընդամենը	**2,800.7**	**100.00%**

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ - ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)



Գծապատկեր 7. Արտանետումները Ակբա Բանկի տարածքներից


Հաշվարկվել են նաև «Ակբա Լիզինգի» օբյեկտների Scope 1 և Scope 2 արտանետումները: Scope 1 և Scope 2 գույքագրման հիմնական արդյունքներն են.

- Լիզինգային օբյեկտների ընդհանուր արտանետումները կազմում են ~60.1 տCO_2հ:
- Scope 1 արտանետումները կազմում են ընդհանուր արտանետումների ընդամենը 20%-ը:
- Scope 2 արտանետումները (ցանցային էլեկտրաէներգիա) հանդիսանում են գերիշխող աղբյուրը՝ կազմելով 47.8 տCO_2հ և ընդհանուր արտանետումների մոտավորապես 80%-ը:
- Scope 1-ի շրջանակներում տրանսպորտային միջոցների վառելիքի օգտագործումը (6.7 տCO_2հ) չնչին չափով գերազանցում է ստացիոնար աղբյուրների վառելիքի օգտագործմանը (5.6 տCO_2հ):

ԱՂՅՈՒՍԱԿ 10. SCOPE 1 ԵՎ SCOPE 2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ - ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)

ՑՈՒՑԱՆԻՇ	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ (tCO_{2E})	ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆ
Scope 1		
Վառելիքի սպառում ստացիոնար աղբյուրներից	5.6	9%
Վառելիքի սպառում տրանսպորտային միջոցների կողմից	6.7	11%
Սառնագենտների (ֆրեոնի) տարեկան լիցքավորում	-	-
Scope 2		
Էլեկտրաէներգիա հանրային ցանցից	**47.8**	**80%**
Ընդամենը	**60.1**	**100.00%**

ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ - ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)



Գծապատկեր 8. Արտանետումները Ակբա Լիզինգի տարածքներից

Հաշվարկվել են Scope 1-ի և Scope 2-ի համակցված ընդհանուր արտանետումները, որոնց վերլուծությունից բխում են մի քանի հիմնական արդյունքներ.

- Ակբա բանկի և «Ակբա Լիզինգի» Scope 1 և Scope 2 ընդհանուր արտանետումները կազմում են 2,860.7 տCO_2հ:
- Scope 1 արտանետումները միասին կազմում են 1,147.2 տCO_2հ կամ Ակբա բանկի և «Ակբա Լիզինգի» օբյեկտների ընդհանուր արտանետումների մոտ 40%-ը:
- Scope 2-ը (ցանցային էլեկտրաէներգիա) կազմում է 1,713.5 տCO_2հ, ինչը սեփական և լիզինգային օբյեկտների ընդհանուր արտանետումների մոտավորապես 60%-ն է:
- Արտանետումներում զգալիորեն գերակշռում է Scope 2-ը:

Ֆինանսական արդյունքների տեսանկյունից՝ բանկային համախմբված ընդհանուր եկամուտը, որը ներառում է 66,355,590 հազար << դրամ զուտ տոկոսային եկամուտ և 18,691,033 հազար << դրամ ոչ տոկոսային եկամուտ, կազմում է 85,046,623 հազար << դրամ: Այս ցուցանիշի կիրառմամբ՝ տարվա ընթացքում ջերմոցային գազերի արտանետումների ինտենսիվությունը հաշվարկվել է 0.0336 կգCO_2Հ՝ եկամտի հազար << դրամի հաշվով:


Սա ջերմոցային գազերի հաշվառման և արտանետումների ինտենսիվության բազային ցուցանիշի սահմանման առաջին տարին է, որը հիմք կծառայի հետագա համեմատությունների և արտանետումների կրճատման թիրախների սահմանման համար:

Քանի որ սա ջերմոցային գազերի արտաներտումների հաշվառման մեկնարկային տարին է, հաշվարկները սահմանափակվել են Scope 1 և Scope 2 արտանետումներով, իսկ Scope 3 արտանետումները չեն ներառվել: Հաջորդ տարիներին, մեր ջերմոցային գազերիարտանետումների հաշվառման գործընթացների զարգացմանը զուգընթաց, մենք նպատակ ունենք ներդնել լրացուցիչ ցուցանիշներ, ինչպիսին է Ածխածնի կշռված միջին ինտենսիվությունը (WACI)՝ մեր արտանետումների ինտենսիվության հաշվարկներն էլ ավելի կատարելագործելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ - SCOPE 1 ԵՎ SCOPE 2 (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)

ՑՈՒՑԱՆԻՇ	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ (tCO_{2E})	ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՍՆԱԲԱԺԻՆ
Scope 1		
Վառելիքի սպառում ստացիոնար աղբյուրներից	436.8	15%
Վառելիքի սպառում տրանսպորտային միջոցների կողմից	312.1	11%
Սառնագենտների տարեկան լիցքավորում	398.3	14%
Scope 2		
Էլեկտրաէներգիա ընդհանուր ցանցից	**1,713.5**	**60%**
Ընդամենը	**2,860.7**	**100.0%**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ - (Scope 1 և Scope 2)



2. Կլիմայական ռիսկեր

ԱՋԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արագորեն զարգացող բնապահպանական կանոնակարգերը, ցածր ածխածնային տնտեսությանն անցնելու հրատապությունը և տնտեսության մեջ կայուն զարգացման գործոնների ինտեգրումը գնալով ավելի մեծ կարևորություն են ստանում բանկի համար: Սպասվում է, որ այս գործոնները ժամանակի ընթացքում կազդեն ինչպես բանկի գործառնական միջավայրի, այնպես էլ նրա հաճախորդների գործարար վարքագծի և գործունեության վրա:

Կլիմայական ռիսկերի կառավարումը բանկի ռիսկերի կառավարման համակարգի զարգացող ուղղություններից է: Բանկն ընդունում է կլիմայի փոփոխության՝ իր ռիսկերի պրոֆիլի և երկարաժամկետ կայունության վրա հնարավոր ազդեցության ընկալման կարևորությունը: Այս համատեքստում, ռիսկերի կառավարման գործող գործընթացները ծառայում են որպես մեկնարկային կետ՝ ի հայտ եկող պոտենցիալ կլիմայական ռիսկերի գործոնների բացահայտման և մոնիթորինգի համար:

Մի շարք ազգային կանոնակարգեր և միջազգային հանձնառություններ ձևավորում են տնտեսության մեջ, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի համար, կլիմայական ռիսկերի հասցեագրման համակարգը: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (<< ԿԲ) 2023 թվականի հոկտեմբերին ընդունել է «Կայուն ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը»՝ հատուկ շեշտադրելով կլիմայական ռիսկերը և ֆինանսական կազմակերպությունների ու վերահսկողների կողմից կայունությանն առնչվող ռիսկերի գնահատման ու կառավարման մոտեցումների ամրապնդման անհրաժեշտությունը:

Հայաստանի՝ 2021-2030 թվականների համար թարմացված «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» (NDC) նախատեսում են տնտեսության մասշտաբով մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի արտանետումների կրճատում 40%-ով՝ 1990 թվականի մակարդակի համեմատ: Ըստ << ԿԲ վերլուծության՝ բանկային հատվածի վարկային պորտֆելի մոտավորապես 29 տոկոսը բաշխված է կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ոլորտներին:

Այս համակարգն էլ ավելի ամրապնդելով՝ 2026 թվականի հունվարի 20-ին ընդունված «Կլիմայի մասին օրենքը» սահմանում է արտանետումների կրճատման և կլիմայի հարմարվողականության պլանավորման իրավական հիմքերը: Այս համատեքստում, Կայուն ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզի վերահսկողական ուղեցույցը կենտրոնանում է կորպորատիվ կառավարման, ռազմավարության և ռիսկերի կառավարման վրա և նախատեսում է առևտրային բանկերի համար կլիմայական սթրես-տեստավորման սցենարների և համապատասխան ուղեցույցի մշակում:


Համաձայն ճանապարհային քարտեզի պահանջների՝ 2025 թվականին բանկը պատրաստել և << կենտրոնական բանկ է ներկայացրել կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվության նպատակն էր գնահատել ֆինանսական հատվածում որոշումների


կայացման գործընթացում կլիմայական ռիսկերի գնահատման գծով առկա կարողություններն ու հավակնությունների մակարդակը: Այն միտված էր փաստաթղթավորելու կլիմայական ռիսկերի գնահատման ուղղությամբ ներկայիս բանկային գործելակերպը և մոնիթորինգի ենթարկելու դրանց համապատասխանության աստիճանը << ԿԲ սպասումներին:

Այս հաշվետվության շրջանակներում բանկն իրականացրել է կլիմայական ֆիզիկական և անցումային այն ռիսկերի բարձր մակարդակի վերանայում, որոնք պոտենցիալ կերպով կարող են ազդել իր հեղինակության, շուկայական դիրքի, գործառնությունների, կարգավորող պահանջների պահպանման և ֆինանսական արդյունքների վրա: Այս ռիսկերը կարող են բանկի վրա ազդել նաև անուղղակիորեն՝ գործընկերների, հաճախորդների և գրավի առարկայի վրա ունեցած ազդեցության միջոցով՝ այդպիսով ազդելով վարկային ռիսկի և պորտֆելի ընդհանուր որակի վրա:

Այս հաշվետվության մեջ պոտենցիալ կլիմայական ռիսկերի բացահայտումը հիմնված է որակական գնահատման վրա, որն իրականացվել է երկրի մակարդակով կլիմայական և տնտեսական հետազոտությունների, տեղական ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համեմատական վերլուծությունների, ինչպես նաև բանկի առանձնահատկությունների ու ռիսկերին ենթարկվածության հաշվառման միջոցով: Հաշվի առնելով կլիմայական ռիսկերի ինտեգրման սկզբնական փուլը՝ այս գնահատումը նպատակ ունի տրամադրել նախնական ակնարկ, այլ ոչ թե բոլոր հնարավոր կլիմայական ազդեցությունների սպառիչ կամ քանակական գնահատում:

Կախված վարկի տեսակից՝ որոշակի պարտավորություններ ապահովված են անշարժ գույքի գրավով: Կլիմայական, աշխարհաքաղաքական կամ աշխարհագրական վտանգների նկատմամբ ավելի խոցելի տարածաշրջաններում գտնվող գրավի առարկաները բախվում են ֆիզիկական ռիսկերի (ինչպիսիք են ծայրահեղ եղանակային պայմանները կամ շրջակա միջավայրի դեգրադացիան) ավելի մեծ հավանականության հետ: Այս ակտիվների ֆիզիկական ռիսկի պրոֆիլի բարձրացումը կարող է բացասաբար անդրադառնալ դրանց արժեքի և, հետևաբար, վարկառուի ֆինանսական դիմակայունության վրա: Սա կարող է խաթարել հաճախորդի՝ պարտավորությունները կատարելու կարողությունը՝ պոտենցիալ կերպով հանգեցնելով դեֆոլտի հավանականության մեծացմանը և բանկի համար վարկային ռիսկի աճին: Ըստ տարածաշրջանների անշարժ գույքի գրավի ընդհանուր արժեքը լրացուցիչ պատկերացում է տալիս բանկի ռիսկերի կենտրոնացվածության վերաբերյալ:


5,487
Շիրակ
8,796
Լոռի
12,292
Տավուշ
11,626
Կոտայք
13,603
Արագածոտն
6,232
Գեղարքունիք
12,806
Արմավիր
3,573
Վայոց ձոր
168,845
Երևան
20,987
Արարատ
7,539
Սյունիք
Շիրակ
Լոռի
Տավուշ
Արագածոտն
Կոտայք
Գեղարքունիք
Արմավիր
Երևան
Արարատ
Վայոց ձոր
Սյունիք


մլն. ՀՀ դրամ
200,000
160,000
120,000
80,000
40,000
0
13,603
20,987
12,806
6,232
11,626
8,796
5,487
7,539
12,292
3,573
168,845
Արագածոտն
Արարատ
Արմավիր
Գեղարքունիք
Կոտայք
Լոռի
Շիրակ
Սյունիք
Տավուշ
Վայոց ձոր
Երևան

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻՆ

Կլիմայական ռիսկերի և հնարավորությունների բացահայտումն ու կառավարումը գնալով ավելի մեծ կարևորություն են ստանում բանկի երկարաժամկետ կայունության և հուսալիության տեսանկյունից: Որպես ֆինանսական կառույց՝ կլիմայական գործոններով պայմանավորված մեր հիմնական ռիսկերն ու ազդեցությունները ձևավորվում են վարկավորման և ներդրումային պորտֆելների միջոցով: Դրանց վրա ուղղակիորեն ազդում են շրջակա միջավայրի փոփոխությունները, խստացող կարգավորումները, շուկայի դինամիկան և կլիմայական օրակարգով պայմանավորված հաճախորդների վարքագծի տրանսֆորմացիան:

Կլիմայական ռիսկը վերաբերում է հեղինակության կորստի, ֆինանսական վնասի կամ այլ վնասների ռիսկին, որոնք բխում են կլիմայի փոփոխության ֆիզիկական և անցումային ռիսկերից և ազդում են բանկի, նրա հաճախորդների կամ այն համայնքների վրա, որտեղ այն գործում է:

Ներկայումս կլիմայական ռիսկերի նկատմամբ բանկի մոտեցումը կենտրոնանում է իրազեկվածության բարձրացման, ներքին ընկալման ձևավորման և գոյություն ունեցող ռիսկերի գնահատման ու որոշումների կայացման գործընթացներում կլիմայական գործոնների աստիճանական ներառման վրա: Ռիսկերի կառավարումն աջակցում է այս գործընթացին՝ օգնելով բացահայտել այն ուղղությունները, որտեղ կլիմայական գործոնները կարող են ուժգնացնել ավանդական ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, միաժամանակ հնարավորություն տալով բանկին կանխատեսել արտաքին միջավայրի փոփոխությունները՝ կապված կլիմայական և անցումային դինամիկայի հետ: Այս զարգացող մոտեցումն աջակցում է նաև բանկի բիզնես մոդելին և հաճախորդների բազային առնչվող կլիմայական հնարավորությունների բացահայտմանը:

Բնապահպանական և սոցիալական (Բ&Ս) ռիսկերը, ներառյալ՝ կլիմայական ասպեկտները, դիտարկվում են բանկի ռիսկերի կառավարման և վարկավորման գործելակերպի ավելի լայն համատեքստում, թեև կլիմայական ռիսկերի գծով առանձնացված համակարգ դեռևս պաշտոնապես չի ներդրվել: Կլիմայի փոփոխությունն ընկալվում է որպես համապարփակ խնդիր, որը կարող է ազդել բանկի վրա ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ բնապահպանական և կլիմայական ռիսկերի նկատմամբ զգայուն հաճախորդների, ոլորտների ու տարածաշրջանների նկատմամբ ռիսկերի ենթարկվածության միջոցով: Այս ռիսկերի վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորումը բանկին հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ պոտենցիալ խոցելիությունները և հիմքեր ստեղծել ռիսկերի կառավարման գործելակերպի հետագա կատարելագործման համար:

Բանկի 2025–2028 թվականների ԲՍԿ ռազմավարությունն արտացոլում է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ուղղված աճող հանձնառությունը: Բանկի ռազմավարական նպատակն է մինչև 2035 թվականը հասնել կլիմայական չեզոքության և սեփական գործունեությամբ նպաստել Հայաստանի անցմանը ցածր ածխածնային տնտեսության :Այս ուղղությանն աջակցելու համար սահմանվել են կլիմայական ռիսկերի հետ կապված դերերն ու պարտականությունները, նախաձեռնվել է կլիմայական տվյալների հավաքագրումը և նախապատրաստվել է պարբերական ներքին հաշվետվողականության հիմքը: Բանկը նպատակ

ունի աստիճանաբար մշակել կլիմայական ռիսկերի կառավարման ավելի համակարգված մոտեցում:

Ներկայումս Ակբա բանկն իրականացնում է ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների մոնիթորինգ Scope 1 և Scope 2 շրջանակներում և կտրամադրի տարեկան հանրային հաշվետվություն այս արտանետումների վերաբերյալ (տես «Բնապահպանական պատասխանատվություն» բաժինը):

Վարկավորման գործընթացում, կախված հաճախորդից և վարկի տեսակից, բանկը հաշվի է առնում կլիմայական ռիսկերի գործոնների հնարավոր ազդեցությունը վարկային ռիսկի վրա: Նախկինում Ակբա բանկն իրականացրել է բերքատվության կանխատեսումներ այն գյուղատնտեսական ռիսկերի ենթարկվածության համար, որոնք կարող են տուժել կլիմայի փոփոխությունից: Իրականացվել է գնահատում այն մասին, թե ինչպես կարող է կլիմայի փոփոխությունն ազդել բանկի գյուղատնտեսական պորտֆելի որակական ցուցանիշների վրա՝ հիմնվելով արտանետումների չմեղմացվող սցենարի դեպքում Հայաստանում ջերմաստիճանի, տեղումների և խոնավության սպասվող փոփոխությունների վերաբերյալ հիմնական բացահայտումների վրա: Ստացված որակական վերլուծությունն ուղղորդում է նաև առանձին դեպքերում պահանջվող մոնիթորինգի և վերանայման մակարդակը:

: Վարկային ռիսկերի տիրույթում կլիմայական գործոնների գնահատումը դինամիկ զարգացող գործընթաց է, որը միտված է դառնալու Բանկի ռիսկերի կառավարման համակարգի առանցքային բաղադրիչներից մեկը: Բացի այդ, հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ կապված ֆիզիկական և անցումային ռիսկերի բացահայտման աճող կարևորությունը՝ դիտարկվում է կլիմայական սթրես-տեստերի պարբերական անցկացման հնարավորությունը:

Կայուն
ֆինանսավորում

1. ԲՍԿ ՌԻՍԿԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ **101**

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՆԵՐԱԶԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ **104**

Կայուն
ֆինանսավորում

Կայուն ֆինանսավորումը հանդիսանում է Ակբա բանկի երկարաժամկետ ռազմավարության կարևորագույն մասը, որն ուղղորդում է, թե ինչպես են ֆինանսական ռեսուրսներն ուղղվում Հայաստանում բնապահպանական պատասխանատվություն ունեցող, սոցիալապես ներառական և տնտեսապես դիմակայուն զարգացմանը: Այն ներառում է ֆինանսական արտադրատեսակներ, քաղաքականություններ և գործելակերպեր, որոնք ինտեգրում են բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ԲՍԿ) գործոնները բանկի վարկավորման, ներդրումների և ռիսկերի կառավարման գործընթացներում:

Մենք ներկայումս գտնվում ենք մեր «Կանաչ պարտատոմսերի համակարգի» և «Կանաչ վարկավորման համակարգի» մշակման գործընթացում, ինչը հետագայում էլ ավելի կընդլայնի բանկի կարողությունները՝ ֆինանսավորելու շրջակա միջավայրի համար օգտակար նախագծեր և ներգրավելու միջազգային կայուն զարգացման ստանդարտներին համահունչ կապիտալ: Ակնկալվում է, որ այս համակարգերը կաջակցեն կլիմայական նպատակներին համապատասխանող ֆինանսական գործիքների ներդրմանը և կբարձրացնեն բանկի կայուն ֆինանսավորման գործունեության թափանցիկությունը:

Ակբա բանկում կայուն ֆինանսավորման կարևոր ուղղություններից է բնապահպանական և սոցիալական ռիսկերի նախնական գնահատման (սկրինինգի), բացառման ցուցակների, ոլորտային հատուկ պաշտպանիչ միջոցների և պատշաճ ուսումնասիրության գործընթացների համակարգված կիրառումը: Սա օգնում է երաշխավորել, որ ֆինանսավորվող գործունեությունը զերծ մնա վնասակար ազդեցություններից և համահունչ լինի բանկի պատասխանատու ֆինանսավորման մոտեցմանը:

Կայուն ֆինանսավորումը ներառում է նաև նպատակային վարկավորման ծրագրեր, որոնք ընդլայնում են տնտեսական հնարավորությունների հասանելիությունը, հատկապես՝ թերսպասարկվող խմբերի համար: Այս ծրագրերն աջակցում են միկրո և փոքր ձեռնարկություններին, գյուղատնտեսական արտադրողներին, կրթական և առողջապահական հաստատություններին, ինչպես նաև այն տնային տնտեսություններին ու ձեռնարկություններին, որոնք ներդրումներ են կատարում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ուղղությամբ: Այս գործունեության միջոցով բանկն աջակցում է աշխատատեղերի ստեղծմանը, գյուղական համայնքների զարգացմանը և կլիմայական տեսանկյունից առավել արդյունավետ լուծումների ներդրմանը:

Կարողությունների զարգացումը բանկի կայուն ֆինանսավորման մոտեցման մեկ այլ կարևոր բաղադրիչ է: Ֆինանսական գրագիտության ծրագրերի, կայուն զարգացման վերապատրաստումների, խորհրդատվական ծառայությունների և ՓՄՁ-ների համար նախատեսված կրթական հարթակների միջոցով բանկն օգնում է հաճախորդներին հասկանալ ԲՍԿ ռիսկերը, որդեգրել պատասխանատու գործարար գործելակերպ և հաջողությամբ հաղթահարել կայունությանն առնչվող ի հայտ եկող մարտահրավերները:

Իր կայուն ֆինանսավորման գործունեության, այդ թվում՝ «Կանաչ պարտատոմսերի» և «Կանաչ վարկավորման» համակարգերի մշակման միջոցով, Ակբա բանկը նպատակ ունի աջակցել Հայաստանի անցմանը դեպի ավելի կանաչ, ներառական և կլիմայի նկատմամբ դիմակայուն տնտեսություն:

1. ԲՍԿ ռիսկերի ինտեգրումը վարկային վերլուծության մեջ

(GRI 3-3, SASB FN-CB-410a.2)

Բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ԲՍԿ) գործոնները ձևավորում են բանկի ընդհանուր ռիսկերի միջավայրի կարևոր մասը: Հաշվետու տարում ընդունված Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունը ծառայում է որպես հիմնական համակարգ, որն ուղղորդում է Տնօրենների խորհրդին և Գործադիր ղեկավարությանը բանկի վարկավորման գործունեության մեջ: Այն սահմանում է քանակական ու որակական չափանիշներ վարկային գործառնությունների համար և արտացոլում է պատասխանատու ֆինանսավորման գործելակերպի նկատմամբ բանկի հանձնառությունը:

Տնօրենների խորհուրդը և Գործադիր ղեկավարությունը կրում են վերջնական պատասխանատվություն վարկային ռիսկի կառավարման համար: Քաղաքականությունը շեշտադրում է վարկային ուժեղ մշակույթը, որն աջակցվում է ընդհանուր արժեքներով, վարքագծային ակնկալիքներով և ներքին զարգացումների ու արտաքին շուկայական միտումների շարունակական մոնիթորինգով՝ պորտֆելի որակի հեռանկարային գնահատմանն աջակցելու համար:

Իր վարկավորման գործունեության միջոցով բանկը ձգտում է աջակցել հաճախորդներին՝ միաժամանակ նպաստելով ավելի լայն տնտեսական զարգացմանը: Վարկային որոշումների համապատասխանությունն էթիկ, բնապահպանական և սոցիալական ստանդարտներին երաշխավորելու նպատակով բանկը կիրառում է ԲՍԿ-ի հետ կապված իրավասության չափանիշներ: Մասնավորապես, այն հաճախորդները, որոնց գործունեությունը դասվում է բանկի ԲՍԿ Բացառման ցանկին, չեն կարող ֆինանսավորվել: Այս ցանկը ներառում է նաև << օրենսդրությամբ և կենսաբազմազանության ու մշակութային ժառանգության պաշտպանությանն առնչվող միջազգային համաձայնագրերով արգելված գործառնությունները, ինչպես նաև տրոպիկական անտառներում իրականացվող առևտրային անտառահատումները:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարումը կարևոր դեր է խաղում բանկի վարկային գործառնությունների բացասական ազդեցությունների մեղմացման գործում: Այս ռիսկերի բացահայտման և հասցեագրման նպատակով իրականացվում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատում ու մոնիթորինգ: Յուրաքանչյուր վարկի ռիսկայնության մակարդակը գնահատվում է «Սոցիալական և բնապահպանական ռիսկերի գնահատման հարցաթերթիկի» միջոցով, որը վերլուծում է վարկի հետ կապված բնապահպանական և սոցիալական հիմնական գործոնները, այդ թվում՝ ջրօգտագործումը, պեստիցիդների կառավարումը, կենսաբազմազանության պաշտպանությունը և համապատասխան սոցիալական ասպեկտները: Այս գործիքն օգնում է համապատասխանեցնել վարկային գործառնությունները կայուն զարգացման ստանդարտներին:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումների առջև խնդիր է դրված ներդնել ռիսկերի կառավարման համապատասխան ընթացակարգերը: Բանկի ԲՍԿ ռիսկերի կառավարման մեջ ներգրավված հիմնական անձնակազմը ներառում է՝ Գլխավոր գործադիր տնօրենին, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալներին, Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության պետին, Իրավաբանական և համապատասխանության տնօրինությունը, ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի տնօրինությունը, Մանրածախ բիզնեսի տնօրինությունը, Ֆինանսական տնօրինությունը, Մոնիթորինգի բաժինը, Վարկային վերլուծության դեպարտամենտի աշխատակիցներին, Բիզնես խորհրդատուներին և Բեք-օֆիսի աշխատակիցներին:

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի մոնիթորինգի պարբերականությունը որոշվում է վարկին տրված ռիսկի դասի հիման վրա՝ ցածր, միջին կամ բարձր: Միջին և բարձր ռիսկային վարկերը ենթարկվում են ավելի հաճախակի մոնիթորինգի, ներառյալ՝ տարեկան վերանայումները և տեղերում (այցելությամբ) ստուգումները, մինչդեռ ցածր ռիսկային վարկերը կարող են ազատվել մոնիթորինգից:

ԱՂՅՈՒՍԱԿ 12. ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

Բացառման ցանկի ձևավորման հիմքում ընկած միջազգային կանոնակարգերն ու համաձայնագրերը.
ԵՄ թարմացված թիվ 2455/92 կանոնակարգը
Կառավարությունների կողմից արգելված կամ խիստ սահմանափակված նյութերի ՄԱԿ-ի ցուցակը
Միջազգային առևտրում վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ Ռոտերդամի կոնվենցիան
Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիան
Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պեստիցիդների վտանգավորության դասակարգումները
Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիան (CITES)
Թափոնների տեղափոխման վերաբերյալ ԵՄ թիվ 1013/2006 կանոնակարգը
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Խորհրդի C (2001)107 որոշումը
Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և դրանց հեռացման հսկողության մասին Բազելյան կոնվենցիան
Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին Բոննի կոնվենցիան
Միջազգային նշանակության խոնավ տարածքների մասին Ռամսարի կոնվենցիան
Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիան
Համաշխարհային ժառանգության կոնվենցիան
Կենսաբազմազանության մասին կոնվենցիան

Մեր մոնիթորինգի հարցաթերթիկները հասցեագրում են հետևյալ բնապահպանական և սոցիալական ասպեկտները.

- Բնապահպանական քաղաքականության ներդրումը և աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը,
- Համապատասխանությունն աշխատանքային օրենսդրությանը, աշխատանքային պայմաններին և հակախտրականության քաղաքականությանը,
- Աղտոտման կանխարգելումը, ռեսուրսների խնայողությունը և թափոնների կառավարումը,
- Կենսաբազմազանության պահպանումը և մշակութային ժառանգությանը վնաս հասցնելու կանխարգելումը:

Մեր Բացառման ցանկը, որը ձևավորվել է միջազգային համաձայնագրերի և կանոնակարգերի հիման վրա, ներառում է այնպիսի գործունեություններ, որոնք ենթակա չեն ֆինանսավորման, մասնավորապես՝

- Միջազգային կոնվենցիաներով արգելված վտանգավոր նյութերի օգտագործմամբ նախագծեր,
- Գործունեություններ, որոնք շահագործում են վայրի բնությունը կամ կիրառում են ձկնորսության ոչ կայուն մեթոդներ,
- Գործառնություններ, որոնք վնասում են կենսաբազմազանությանը կամ մշակութային ժառանգությանը:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

Ջուրը կենսական նշանակություն ունեցող ռեսուրս է Հայաստանի Հանրապետության համար, հատկապես՝ գյուղատնտեսության և գյուղական տնտեսությունների համար: Բանկը հանձնառու է խթանել ջրի պատասխանատու օգտագործումը, աջակցել կլիմայի նկատմամբ դիմակայուն գյուղատնտեսական գործելակերպին և նպաստել ազգային ջրային ռեսուրսների կայուն կառավարմանը: Այս նպատակներն առաջ մղելու համար բանկը ձգտում է.

- Վարկային պորտֆելում սահմանել հստակ թիրախներ՝ ջրի կայուն և պատասխանատու օգտագործմամբ նախագծերի մասնաբաժինը մեծացնելու համար:
- Իրականացնել իրազեկվածության բարձրացման դասընթացներ ՓՄՁ-ների և գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների համար՝ ջրային հիմնախնդիրների, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և կլիմայական ռիսկերի վերաբերյալ:
- Աջակցել գյուղատնտեսության զարգացմանը՝ ֆինանսավորելով նախաձեռնություններ ոռոգման համակարգերի բարելավման պետական աջակցության ծրագրերի շրջանակներում և, հնարավորության դեպքում, նպաստելով այդ ծրագրերի կատարելագործմանը:

Բացի այդ, հատուկ պահանջներ են կիրառվում, երբ վարկի գումարը գերազանցում է 18 միլիոն << դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նման դեպքերում վարկը ենթարկվում է համապարփակ գնահատման՝ ըստ երեք ռիսկայնության դասերի՝ ցածր, միջին և բարձր:

Կառավարության հետ համագործակցության միջոցով մենք աջակցում ենք գյուղատնտեսական կայուն գործելակերպին, ինչպիսին է կաթիլային ոռոգման համակարգերի ներդրումը: Այս նախաձեռնությունները օգնում են խնայել ջրի զգալի ծավալներ և հնարավորություն են տալիս հիմնել պտղատու այգիներ դեգրադացված հողերի վրա՝ դրանք վերածելով արդյունավետ գյուղատնտեսական տարածքների: Մենք նաև աջակցում ենք ջրամբարների կառուցմանը՝ ոռոգման համակարգը և երկարաժամկետ կայունությունը բարելավելու նպատակով:

2025 թվականին տրամադրվել է ընդհանուր առմամբ 26 գյուղատնտեսական վարկ, որոնց պորտֆելը կազմել է 834,261,424 << դրամ: Այս վարկերն ուղղվել են 59.677 հեկտար հողատարածքի մշակմանը՝ շեշտը դնելով կայուն գործելակերպի վրա: Այս ընդհանուր քանակից 2 վարկ՝ 74,530,480 << դրամ գումարով և 23.015 հեկտար տարածքով, ուղղվել է հատուկ կաթիլային ոռոգման համակարգերի ներդրմանը, որը հայտնի է ջրի խնայողության իր բարձր արդյունավետությամբ: Բացի այդ, 44.377 հեկտար տարածք մշակվել է մինչև 35 տարեկան ֆերմերների կողմից՝ աջակցելով կայուն գյուղատնտեսությամբ զբաղվող հաջորդ սերնդին:

2. Սոցիալական և ներառական ֆինանսավորում

ՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(GRI 201-1)

2025 թվականին Ակբա բանկը շարունակել է զգալի ներդրում ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման գործում՝ իր գործառնությունների միջոցով ստեղծված և բաշխված արժեքի շնորհիվ: Բանկի ֆինանսական արդյունքները վկայում են ինչպես ուժեղ գործառնական գործունեության, այնպես էլ աշխատակիցների, պետության, բաժնետերերի և լայն հասարակության նկատմամբ շարունակական հանձնառության մասին:

Հաշվետու տարվա ընթացքում բանկը ստեղծել է 71,857,168 հազար << դրամի ուղղակի տնտեսական արժեք: Այս ցուցանիշն արտացոլում է բանկի հիմնական ֆինանսական գործունեությունից ստացված զուտ եկամուտները, ներառյալ՝ զուտ տոկոսային եկամուտը՝ վարկային կորուստների գծով ծախսերի պահումից հետո, զուտ միջնորդավճարների տեսքով եկամուտները և այլ ոչ գործառնական եկամուտների հոսքերը: Վարկային կորուստների պահումից հետո զուտ տոկոսային եկամուտը մնացել է արժեքի ստեղծման հիմնական աղբյուրը՝ կազմելով 53,667,206 հազար << դրամ: Լրացուցիչ արժեք է ստեղծվել զուտ միջնորդավճարների տեսքով եկամուտների (9,101,729 հազար << դրամ) և այլ ոչ գործառնական եկամուտների (9,088,233 հազար << դրամ) հաշվին:

Ստեղծված արժեքից Ակբա բանկը տնտեսությանը հետ է բաշխել 50,356,496 հազար << դրամ տարբեր ուղիներով, որոնք աջակցում են նրա շահակիցներին և ազգային սոցիալ-տնտեսական միջավայրին:

Այս բաշխման զգալի մասն ուղղվել է գործառնական և վարչական ծախսերին՝ ընդհանուր 12,121,408 հազար << դրամ, ինչն արտացոլում է բանկի շարունակական ներդրումները ծառայությունների մատուցման, ենթակառուցվածքների և գործառնական արդյունավետության մեջ: Աշխատակիցների աշխատավարձերն ու արտոնությունները կազմել են բաշխված արժեքի զգալի մասը՝ 22,510,884 հազար << դրամ, ինչը դրսևորում է բանկի շարունակական հանձնառությունը իր անձնակազմի նկատմամբ:

Բանկն իր ներդրումն է ունեցել նաև պետական զարգացման գործում՝ պետությանը կատարվող վճարումների միջոցով, ներառյալ՝ տարվա ընթացքում ընդհանուր 9,140,704 հազար << դրամի շահութահարկը: Բացի այդ, կապիտալ տրամադրողներին կատարված վճարումները, ներառյալ՝ բաժնետերերին վճարված շահաբաժինները, կազմել են 6,583,500 հազար << դրամ:

Մնացած տնտեսական արժեքը՝ 21,500,672 հազար << դրամ, պահվել է բանկում՝ ապագա աճին աջակցելու, ֆինանսական դիրքն ամրապնդելու և երկարաժամկետ կայունությունն ապահովելու նպատակով:

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ — ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ ԲԱՇԽՎԱԾ ԱՐԺԵՔ

Տնտեսական ազդեցություն. ստեղծված և բաշխված արժեք	
	հազար << դրամ
Զուտ տոկոսային եկամուտ	53,667,206
Զուտ կոմիսիոն եկամուտ	9,101,729
Ոչ գործառնական եկամուտ	9,088,233
Ստեղծված ընդհանուր տնտեսական արժեք	**71,857,168**
Ընդհանուր գործառնական ծախսեր	12,121,408
Աշխատակիցների աշխատավարձեր և պարգևավճարներ	22,510,884
Վճարումներ կապիտալի մատակարարներին	6,583,500
Վճարումներ պետական բյուջե	9,140,704
Ներդրումներ համայնքներում	-
Բաշխված տնտեսական արժեք	**50,356,496**
Կուտակված տնտեսական արժեք	**21,500,672**



ԱՆՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(GRI 3-3, GRI 203-1, GRI 203-2)

Բանկի հիմնական գործառույթներից է արդյունավետ ներդրումային հնարավորությունների բացահայտումը և ավանդատուների ռեսուրսների ուղղումն այն ոլորտներին, որտեղ դրանք կարող են օգտագործվել առավել արդյունավետ կերպով: Ակբա բանկն ակտիվորեն աճեցրել է իր վարկային պորտֆելը վերջին երկու տարիների ընթացքում՝ արձանագրելով 18% տարեկան աճ 2024 թվականին և 19%՝ 2025 թվականին: Այս վարկերի ազդեցությունը տնտեսության մասշտաբով զգալի է, քանի որ դրանք ուղղվում են առավել արդյունավետ ոլորտներին և գերակշռող չափով գյուղատնտեսության ոլորտին՝ այդպիսով դրականորեն ազդելով համայնքների վրա:

2025 թվականին Ակբա բանկն իրականացրել է բազմաթիվ Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) և կորպորատիվ բարեգործական ծրագրեր՝ նպաստելով Հայաստանում համայնքային ենթակառուցվածքների բարելավմանը, կրթության զարգացմանը, մշակույթի պահպանմանն ու հանրահռչակմանը, ինչպես նաև աջակցելով բնության պահպանությանն ու շրջակա միջավայրի զարգացմանը:

Կրթության և տեխնոլոգիաների զարգացման ոլորտում բանկն աջակցել է Հայկաձոր և Լեռնապատ համայնքներում «Վրմաթ» ինժեներական լաբորատորիաների հիմնման և արդիականացման նախագծերին:

Մշակութային ժառանգության պահպանման և արժևորման նպատակով բանկն աջակցել է հետևյալ նախաձեռնություններին. AR (իրականություն) և VR (վիրտուալ իրականություն) տեխնոլոգիաների ներդրմանը Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում,

- «Սիմֆոնիկ օրորոցայիններ» նախագծի ձայնագրմանը (Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ հայ կոմպոզիտորների օրորոցայինների սիմֆոնիկ կատարումներ),
- Ուրարտական թագավորության պատմության, մշակույթի, տնտեսական և սոցիալական կյանքի մասին 100 կարճ տեսահոլովակների արտադրությանը՝ նպաստելով ազգային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը,
- Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճի բարելավմանն ու կատարելագործմանը:





Համայնքային ենթակառուցվածքների զարգացմանն աջակցելու նպատակով բանկն իր ներդրումն է ունեցել Սպանդարյանի ոռոգման ջրանցքի վերակառուցման գործում: Այս ջրանցքի վերակառուցումը կենսական նշանակություն ունի Սյունիքի մարզի Սառնակունք, Իշխանասար, Ծղուկ, Սպանդարյան, Անգեղակոթ և Շաքի բնակավայրերի համար:

Բացի այդ, բանկի աջակցությամբ Գորիս քաղաքի «Հաղթանակ» զբոսայգում կառուցվել և ցանկապատվել է մարզահրապարակ:

Բանկը շարունակել է 2015 թվականին մեկնարկած համագործակցությունը Գերմանիայի բնության և կենսաբազմազանության պահպանության միության (NABU) հետ՝ աջակցելու օրգանական գյուղատնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում 2025 թվականին մոտ 15 արտադրող ստացել է օրգանական սերտիֆիկացում՝ ընդլայնելով իրենց արտահանման հնարավորությունները և նպաստելով կայուն գյուղատնտեսության զարգացմանը:





2025 թվականին բանկն աջակցել է նաև անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող երեխաների առողջությամբ զբաղվող կազմակերպություններին, կազմակերպել և իրականացրել է ծառատունկի նախաձեռնություններ ու շրջակա միջավայրի մաքրման միջոցառումներ՝ ուղղված պլաստիկի և այլ թափոնների հեռացմանը, ինչն իր ներդրումն է ունեցել շրջակա միջավայրի բարելավման և զարգացման գործում:





Վերոնշյալ ծրագրերի իրականացման նպատակով՝ 2025 թվականին Բանկը համագործակցել է ավելի քան 20 կազմակերպությունների հետ՝ տրամադրելով շուրջ 210 միլիոն << դրամ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(GRI 3-3, GRI 413-1, SASB FN-CB-240a.1, SASB FN-CB-240a.2, FN-CB-240a.4.)


Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ) մնում են Հայաստանի տնտեսական զարգացման անկյունաքարը՝ զգալի ներդրում ունենալով ազգային արտադրողականության և աշխատատեղերի ստեղծման գործում: 2024 թվականին ՓՄՁ-ներին բաժին է ընկել երկրի ՀՆԱ-ի համախառն ավելացված արժեքի 34.3%-ը՝ ընդգծելով նրանց էական դերը տնտեսության ամրապնդման գործում: Միևնույն ժամանակ, ֆինանսների հասանելիությունը շարունակում է մնալ ՓՄՁ-ների աճի ամենահրատապ խոչընդոտներից մեկը՝ մեծացնելով ֆինանսական կազմակերպությունների պատասխանատվությունն այս սեգմենտին աջակցելու գործում:

Խորապես հասկանալով ՄՓՄՁ-ների (Միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ) ուրույն կարիքներն ու սահմանափակումները՝ Ակբա բանկը շարունակում է առաջնահերթություն տալ նրանց հզորացմանը: Հարմարեցված ֆինանսական լուծումների, խորհրդատվական ծառայությունների և երկարաժամկետ գործընկերու-

թյան միջոցով բանկն օգնում է ՄՓՄՁ-ներին կայուն կերպով զարգանալ և նպաստել երկրի բարգավաճմանը:

2025 թվականի դրությամբ ՄՓՄՁ ակտիվ հաճախորդների թիվը հասել է 48,421-ի՝ 2024 թվականի 45,050-ի համեմատ, ինչը վկայում է ծածկույթի ընդլայնման և ՄՓՄՁ բիզնեսի ֆինանսավորման նկատմամբ աճող պահանջարկի մասին:

Ակբա բանկը պահպանում է խոշոր և դիվերսիֆիկացված ՄՓՄՁ վարկային պորտֆել, որտեղ միկրո և փոքր վարկավորումը ՓՄՁ ֆինանսավորման անբաժանելի մասն է՝ ընդհանուր գործունեության անբաժանելի մասը: Վարկավորման այս գործունեությունը վճռորոշ դեր է խաղում ֆինանսական ներառականության խթանման գործում, հատկապես՝ թերսպասարկվող և գյուղական համայնքներում գործող փոքր բիզնեսի և ձեռնարկատերերի համար: Միկրո և փոքր ձեռնարկություններին հասանելի ֆինանսավորում տրամադրելով՝ բանկն աջակցում է տեղական զբաղվածությանը, ձեռնարկատիրությանը և համայնքային մակարդակով տնտեսական զարգացմանը:



2025 թվականին ՄՓՄՁ վարկերի ընդհանուր տրամադրումները կազմել են 198,572,471,966 << դրամ՝ ներկայացնելով տարվա ընթացքում տրամադրված բոլոր վարկերի 42.56%-ը: Սա արտացոլում է շարունակական աճ՝ 2024 թվականի 149,062,271,534 << դրամի (ընդհանուր տրամադրումների 40.3%-ը) և 2023 թվականի 122,899,414,361 << դրամի (ընդհանուր տրամադրումների 43.79%-ը) համեմատ:

Այս ՓՄՁ վարկերի զգալի մասն ուղղվել է միկրոձեռնարկություններին, որոնք հանդիսանում են ներառական աճի կարևորագույն շարժիչներից մեկը: 2025 թվականին ՓՄՁ վարկերից 23,950,113,264 << դրամը (12.1%) ուղղվել է միկրոձեռնարկություններին՝ 2024 թվականի 19,027,703,967 << դրամի (12.76%) և 2023 թվականի 13,841,435,932 << դրամի (11.26%) համեմատ:

Գյուղատնտեսությունը մնում է ռազմավարական ոլորտ Հայաստանի համար, և գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում Ակբա բանկի բազմամյա փորձը շարունակում է աջակցել ինչպես գյուղատնտեսական կազմակերպություններին, այնպես էլ փոքր ֆերմերային տնտեսություններին:

Աղյուսակում ներկայացված է գյուղատնտեսական վարկերի մնացորդային պորտֆելն ըստ հաճախորդների սեգմենտների 2024 և 2025 թվականների համար.

ԱՂՅՈՒՍԱԿ 14. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՆ ԸՍՏ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍԵԳՄԵՆՏՆԵՐԻ (ՀԱՋ. ԴՐԱՄ)

Տարի	Մանրածախ հաճախորդներ	Կորպորատիվ հաճախորդներ	Ընդհանուր գյուղատնտեսական վարկերի պորտֆել
2024	69,491,921	16,722,264	86,214,185
2025	70,593,249	20,387,429	90,980,678

Մատչելի բնակարանային ապահովում

Ի հավելումն ֆինանսական ներառականության խթանման՝ մենք նաև ակտիվորեն մասնակցում ենք պետական աջակցության ծրագրերին, ինչը երաշխավորում է խոցելի համայնքների տնտեսական ներառումը: Պետական աջակցության այս ծրագրերը վճռորոշ դեր են խաղում համայնքների վրա դրական ազդեցություն ունենալու գործում՝ ինչպես ֆինանսների հասանելիության մեծացման, այնպես էլ սոցիալական ու տնտեսական զարգացման հնարավորությունների ստեղծման տեսանկյունից:

Այդպիսի ծրագրերից է «Սահմանամերձ բնակավայրերում բնակարանային ապահովության ծրագիրը»՝ համաձայն սահմանամերձ և առանձին բնակավայրերում բնակարանային շինարարության պետական աջակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման (2022 թվականի հունիսի 9, N 842-Լ): Այս նախաձեռնության միջոցով մենք տրամադրել ենք հիփոթեքային վարկեր 5,576 հաճախորդի՝ այդ տարածքներում տներ կառուցելու համար: Այս նախաձեռնության ընդհանուր պորտֆելը կազմել է 20,881,155 հազար << դրամ՝ նպաստելով Հայաստանի հինգ մարզերի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը և կայունությանը:

Ֆինանսական գրագիտություն

ՓՄՁ-ների կարողությունների զարգացումը, ներառյալ նրանց ֆինանսական գրագիտության բարձրացումը, մեր գործունեության կարևորագույն մասն է: Մենք հանձնառու ենք նպաստել ՓՄՁ-ների տնտեսական հզորացմանը և ստեղծել ավելի շատ հնարավորություններ նրանց ֆինանսական գրագիտության բարձրացման ու ֆինանսական ներառականության համար: Մենք կիրառում ենք տարբեր գործիքներ և մեխանիզմներ ՓՄՁ-ների ֆինանսական գրագիտության բարձրացմանն ու բիզնեսի աճին նպաստելու համար, որոնք իրականացվում են ինչպես դասընթացների, «Ակբա Բիզնես ակումբի» (Acba Business Club) գործունեության շրջանակներում կազմակերպվող միջոցառումների, այնպես էլ առցանց գիտելիքների փոխանակման հարթակների միջոցով:





Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ-ների համար կազմակերպվել է ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված ընդհանուր առմամբ 27 միջոցառում: Այս միջոցառումներից 20-ը եղել են անվճար դասընթացներ: Դասընթացներին մասնակցել է ընդհանուր առմամբ 381 անհատ (ներառյալ՝ 206 կին և 175 տղամարդ), որոնք ներկայացրել են 251 ՓՄՁ:

ԲՍԿ-ն և կայուն զարգացմանն առնչվող դասընթացները մեզ համար առաջնահերթություն են: Սկսած 2024 թվականից՝ մենք մեկնարկել ենք ԲՍԿ և կայուն զարգացման դասընթացների շարքը: Այս դասընթացներն ընդգրկել են ընդհանուր կայուն զարգացմանը և ԲՍԿ-ին վերաբերող թեմաներ, ԲՍԿ-ի և բիզնեսի փոխհարաբերությունները, ԲՍԿ ռիսկերն ու գլոբալ մարտահրավերները, կայուն զարգացման հաշվետվողականությունը և կայուն ֆինանսավորումը: ՓՄՁ-ների շրջանում այս թեմաների նկատմամբ հետաքրքրությունը գնալով աճում է, ուստի ուսումնական նյութերը շարունակաբար զարգացվում են, իսկ բուն դասընթացներն արդեն ընթացքի մեջ են:

Այս թեմայի շուրջ մեր հաճախորդների աճող հետաքրքրությանն ի պատասխան՝ մենք նախատեսում ենք մշակել նոր մասնագիտացված դասընթաց՝ ուղղված գյուղատնտեսության ոլորտում կլիմայական ռիսկերի գնահատմանը, ինչպես նաև մեղմացման և հարմարվողականության գործիքակազմերին: Ջուգահեռաբար, նոր էլեկտրոնային ուսուցման մոդուլներ կմշակվեն և կհրապարակվեն sme.acba.am հարթակում՝ գործնական և արդիական գիտելիքների ավելի լայն հասանելիություն ապահովելու համար: Այս նախաձեռնությունների միջոցով մենք ոչ միայն արձագանքում ենք շուկայի զարգացող պահանջներին, այլև վերահաստատում ենք մեր ռազմավարական հանձնառությունը ԲՍԿ սկզբունքներին՝ խթանելով պատասխանատու, կայուն և դեպի ապագան ուղղված գործարար գործելակերպ:

Հաշվետու ժամանակահատվածում մատուցված բազմազան թեմաների թվում էին «Բիզնեսի զարգացումը անկայուն ժամանակներում», «Ռազմավարական մարքեթինգ», ինչպես նաև ոլորտային հատուկ դասընթացներ, ինչպիսիք են «Հյուրատների անձնակազմի մոտիվացիան և պահպանումը» և «Հոգատարություն հյուրերի հանդեպ»: Մնացած թեմաները հատուկ ուղղված են եղել ՓՄՁ-ների ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԱՂՅՈՒՍԱԿ 15. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Թեմա	Դասընթացների քանակ	Մասնակիցների քանակ	ՓՄՁ-ների քանակ
Շրջանառու միջոցների ավելացում	**2**	**44**	**44**
Ֆինանսական որոշումների կայացում	**2**	**49**	**44**
Ծախսերի վերահսկողություն	**2**	**34**	**33**
Բիզնեսի զարգացում անորոշության պայմաններում	**2**	**38**	**38**
Դրամական հոսքերի կառավարում	**2**	**39**	**37**

Բացի դասընթացներից, բիզնեսի խթանման և փորձի փոխանակման տեսանկյունից մեր գործունեության մյուս կարևոր ուղղությունը «Ակբա Բիզնես ակումբի» (Acba Business Club) միջոցառումներն են, որոնք անցկացվում են անվճար հիմունքներով՝ մասնակիցների շրջանում խթանելով կայուն գործարար գործելակերպը: Հաշվետու ժամանակահատվածում Բիզնես ակումբի գործունեության շրջանակներում կազմակերպվել է 7 թեմատիկ միջոցառում: Այս հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝ հաճախորդների հաշիվների կառավարում, շուկայի ընդլայնում, հաջողակ բանակցությունների վարում և անձնական բրենդինգ: Այս նախաձեռնությունները միտված են աջակցելու Բիզնես ակումբի անդամների մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև նրանց հմտությունների ու գիտելիքների կատարելագործմանը՝ բիզնեսի աճն ապահովելու նպատակով:

Մենք կազմակերպել ենք «Կլիմայական մարտահրավերներից դեպի գյուղատնտեսության նոր հնարավորություններ» խորագրով միջոցառումը, որը նախատեսված էր գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ ներկայացուցիչների համար և իրականացվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ: Այն նպատակ ուներ մասնակիցներին փոխանցել արդիական գիտելիքներ և գործնական լուծումներ: Միջոցառման ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները՝ «Կլիմայի փոփոխությունը Հայաստանում. ռիսկերից դեպի հնարավորություններ»՝ անդրադառնալով ազդեցություններին ու հարմարվողականության մոտեցումներին, և «Կայուն ապագայի կառուցումը Հայաստանի գյուղատնտեսության համար»՝ կենտրոնանալով կլիմայական ռիսկերի գնահատման, մեղմացման գործիքների և կայուն գյուղատնտեսության զարգացման հեռանկարների վրա:

Մեր առցանց հարթակը՝ sme.acba.am-ը, տրամադրում է տեղեկատվության, գործիքների և ծառայությունների համապարփակ հավաքածու՝ ուղղված բիզնեսի կառավարմանն ու աջակցմանը: Հարթակի հիմնական նպատակն է օգնել ՓՄՁ ղեկավարներին ձեռք բերել նոր գիտելիքներ և կառավարման անհրաժեշտ գործիքներ՝ միաժամանակ ստեղծելով նոր համագործակցությունների և գործընկերության հնարավորություններ: Այն առաջարկում է

կրթական հոդվածներ, տեսանյութեր, ձևանմուշներ, հաշվիչներ և առցանց ուսուցման գործիքներ, որոնք կարող են օգտակար լինել ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու ձեռնարկատերերի համար: Հարթակը նաև արդյունավետ գործիք է գիտելիքների և փորձի փոխանակման համար՝ աջակցելու ՄՓՄՁ հատվածին և օգնելու մեր բիզնես հաճախորդներին հաջողության հասնել համապարփակ աջակցության ծրագրի միջոցով, որը ներառում է sme.acba.am հարթակում հասանելի կրթական հոդվածներն ու դասընթացները՝ ամեն ինչ դարձնելով հասանելի մեկ հարթակում: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 36 հոդված՝ նվիրված մարքեթինգին, կառավարմանը, ֆինանսներին, ներդրումներին և բիզնեսի զարգացման համար կարևոր այլ թեմաների:

Sme.acba.am հարթակում հասանելի առցանց դասընթացների շարքում հարկ է նշել հաշվետու տարում գործարկված կայուն զարգացմանն առնչվող հետևյալ առցանց դասընթացը՝ «Կլիմայական ռիսկերի դասակարգումը և դրանց ազդեցությունը գյուղատնտեսության տարբեր ճյուղերի վրա»: Այս ուսումնական դասընթացը մշակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ համագործակցությամբ: Դասընթացն ընդգծում է հողի, ջրի և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևորությունը՝ միաժամանակ շեշտադրելով վնասակար արտանետումների կրճատման առաջնահերթությունը:

Սոցիալական

1. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ **116**

2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ **121**

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ **127**

4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ **131**

Սոցիալական

1. Զբաղվածություն և աշխատանքային հարաբերություններ

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

(GRI 3-3, GRI 2-7, GRI 2-8, GRI 401-1, 402-1, GRI 405-1)

Ակբա բանկում մեր աշխատակիցները մեր բոլոր Նախաձեռնությունների և հաջողությունների առանցքն են: Մեր երկարաժամկետ հաջողությունը հիմնված է մեր գործընկերների՝ մեր հաճախորդներին և համայնքներին նշանակալի արժեք փոխանցելու կարողության վրա: Ավելի քան 1800 աշխատակցով, ովքեր սպասարկում են հաճախորդներին բանկի ողջ ցանցում, մենք հասկանում ենք, որ մեր ազդեցությունը տարածվում է ֆինանսական գործարքներից շատ այն կողմ. այն հյուսված է մեզ հետ աշխատող յուրաքանչյուր անհատի կյանքի, ձգտումների և բարեկեցության հետ: Մենք ձգտում ենք ստեղծել մի միջավայր, որտեղ անհատներն իրենց կապված կզգան ընդհանուր նպատակին, կկարողանան զարգացնել իրենց ներուժը և հնարավորություն կունենան իրենց անկեղծ ներդրումն ունենալ: Որպես վստահության և ծառայության վրա խորապես հիմնված կառույց՝ Ակբա բանկն ընդունում է, որ կայուն աճը սկսվում է նվիրված, մոտիվացված և հարգված աշխատուժից:


Մեր Տնօրենների խորհուրդը խաղում է առանցքային կառավարչական դեր՝ երաշխավորելով, որ մեր կադրային քաղաքականությունն աջակցում է երկարաժամկետ արժեքի ստեղծմանը և արտացոլում է արդարության, ներառականության ու էթիկ գործելակերպի նկատմամբ բանկի հանձնառությունը: Այս համատեքստում բանկը մշակել է Անձնակազմի կառավարման համապարփակ քաղաքականություն, որն անդրադառնում է անձնակազմի կառավարման կազմակերպմանը, հավաքագրմանը, վարձատրությանը, մոտիվացմանը, ազատման ընթացակարգերին, Վարքագծի կանոնագրքին, վերապատրաստումներին, մասնագիտական զարգացմանը և հմտությունների կատարելագործմանը, ինչպես նաև Քաղաքականության իրականացման գործում բանկի կառավարման մարմինների ու ղեկավարների դերերին և լիազորություններին:

Մեր աշխատուժի բնորոշ առանձնահատկությունը բազմազանությունն է: Կանայք կազմում են մեր աշխատակիցների 65%-ը, իսկ տղամարդիկ՝ 35%-ը, ինչը վկայում է ինչպես բանկում հնարավորությունների հասանելիության, այնպես էլ այնպիսի թիմերի ձևավորման մեր հանձնառության մասին, որտեղ տարբեր տեսակետները համակցվում և լրացնում են միմյանց: Այս բազմազանությունն իր արտացոլումն է գտնում մեր մասնաճյուղերում և գրասենյակներում՝ ձևավորելով մի մշակույթ, որտեղ համագործակցությունն ու էմպատիան ուղղորդում են ամենօրյա որոշումների կայացումը: 2025 թվականին մենք ողջունել ենք 255 նոր աշխատակցի, որոնցից յուրաքանչյուրն իր հետ բերել է ուրույն փորձ և ձգտումներ: Նրանց մուտքն ավելին է, քան պարզապես թիվ. այն արտացոլում է նորացման, ուսուցման և տրանսֆորմացիայի կենսական շրջափուլը: Միևնույն ժամանակ, մեր կադրերի հոսունության 6.3% ցուցանիշը վկայում է աշխատուժի հավասարակշռված դինամիկայի մասին. այն բավականաչափ կայուն է կորպորատիվ գիտելիքները պահպանելու համար, բայց նաև՝ բավականաչափ ճկուն՝ նոր տաղանդներ և գաղափարներ ինտեգրելու համար:

ԱՂՅՈՒՍԱԿ 16. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՍԵՌԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ (2025Թ. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ)


Տեսակ (Աշխատակիցների փաստացի թվաքանակ / Լրիվ դրույքի համարժեք)	Կին	Տղամարդ	Ընդամենը
Աշխատակիցների ընդհանուր քանակ	1,223	653	**1,876**
Մշտական աշխատակիցներ	1,117	639	**1,756**
Պայմանագրային աշխատակիցներ	107	13	**120**
Ըստ պահանջի աշխատողներ*	-	-	**-**
Լրիվ դրույքով աշխատակիցներ	1,202	652	**1,854**
Կես դրույքով աշխատակիցներ	21	1	**22**

ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



Գծապատկեր 9. Մշտական աշխատակիցների բաշխվածությունն ըստ սեռի


ԼՐԻՎ ԴՐՈՒՅՔՈՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



Գծապատկեր 10. Մշտական աշխատակիցների բաշխվածությունն ըստ սեռի


* Աշխատակից, ում չի երաշխավորվում օրական, շաբաթական կամ ամսական աշխատանքային ժամերի նվազագույն կամ ֆիքսված քանակ, սակայն ով կարող է կարիք ունենալ հասանելի լինել աշխատանքի համար՝ ըստ պահանջի: Օրինակներ՝ ոչ կանոնավոր աշխատակիցներ, զրոյական ժամերով պայմանագրով աշխատողներ, ըստ կանչի աշխատողներ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



Գծապատկեր 11. Պայմանագրային աշխատակիցների բաշխվածությունն ըստ սեռի

ԿԵՍ ԴՐՈՒՅՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ



Գծապատկեր 12. Կես դրույքով աշխատակիցների բաշխվածությունն ըստ սեռի

Ակբա բանկի աշխատուժն արտացոլում է ոչ միայն մեր գործունեության մասշտաբները, այլև մեր խորը ներկայությունը ողջ Հայաստանում: Աշխատակիցների 67%-ը կենտրոնացած է Երևանում, իսկ մնացած 33%-ը բաշխված է բոլոր մարզերում, ինչի շնորհիվ բանկը պահպանում է ուժեղ և կայուն ներկայություն ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում: Աշխարհագրական այս սփռվածությունը երաշխավորում է, որ երկրի ողջ տարածքում հաճախորդներն ունենան անհատականացված ֆինանսական ծառայությունների հասանելիություն, որոնք մատուցվում են տեղական համատեքստն ու կարիքները հասկացող պրոֆեսիոնալների կողմից:

Թեև մայրաքաղաքը մնում է զբաղվածության ամենամեծ կենտրոնը, մարզերի զարգացման նկատմամբ բանկի հանձնառությունը հստակորեն տեսանելի է: Լոռու, Արարատի, Արմավիրի, Սյունիքի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում աշխատում են տարբեր մասնագետներ, ովքեր իրենց աշխատանքում ներդնում են տեղական պատկերացումներն ու համայնքային կապերը: Հատկանշական է, որ հաստիքային (մշտական) աշխատակիցների բաշխվածությունը կրկնում է զբաղվածության ընդհանուր պատկերը՝ ապահովելով կայուն և երկարաժամկետ հաստիքներ Ակբա բանկի տեղական գործառնությունների համար:

Բոլոր տարածաշրջաններում գրեթե բացառապես լրիվ դրույքով աշխատատեղերի առկայությունն ընդգծում է կայուն և արժանապատիվ աշխատանքային հարաբերություններին մեր նախապատվությունը: Ոչ լրիվ աշխատանքային օրով (կես դրույքով) աշխատանքը նվազագույն է և հանդիպում է միայն Երևանում՝ արտացոլելով կոնկրետ գործառնական կարիքներ, այլ ոչ թե զբաղվածության ընդհանուր միտում:

Այս տարածքային բաշխվածությունը սոսկ գործառնական մանրամասն չէ. այն վկայում է Ակբա բանկի՝ որպես համազգային կառույցի ինքնության մասին: Բոլոր մարզերում աշխատուժի ուժեղ ներկայության պահպանմամբ բանկն աջակցում է տեղական տնտեսություններին, ընդլայնում ֆինանսական ծառայությունների հասանելիությունը և նպաստում տարածաշրջանային անհամաչափությունների կրճատմանը: Այսպիսով, բանկի մարդկային կապիտալի ռազմավարությունն ուղղակիորեն համահունչ է համաչափ, ներառական և կայուն զարգացման Հայաստանի ավելի լայն նպատակներին:

ԱՂՅՈՒՍԱԿ 17. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ

(Աշխատակիցների փաստացի թվաքանակ / Լրիվ դրույքի համարժեք)	Լոռի	Արագածոտն	Վայոց ձոր	Սյունիք	Տավուշ	Կոտայք	Գեղարքունիք	Շիրակ	Արմավիր	Արարատ	Երևան	Ընդամենը
Աշխատակիցներ	**69**	**62**	**21**	**51**	**64**	**63**	**67**	**71**	**79**	**80**	**1,249**	**1,876**
Մշտական աշխատակիցներ	64	58	20	47	60	58	58	67	67	74	1,183	**1,756**
Պայմանագրային աշխատակիցներ	5	4	1	4	4	5	9	4	12	6	66	**120**
Լրիվ դրույք աշխատակիցներ	69	62	21	51	64	63	67	71	79	80	1,227	**1,854**
Կես դրույք աշխատակիցներ	0	0	0	0	0	0	0	0	0	0	22	**22**

ԱՂՅՈՒՍԱԿ 18. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՍԵՌԻ

Տարիքային խումբ	Կին	Տղամարդ
Մինչև 30	367	147
30 – 50	845	474
50 և ավել	11	32
Ընդամենը	**1223**	**653**

Ակբա բանկի աշխատուժն աչքի է ընկնում փորձառության, նոր տաղանդների և գենդերային ներկայացվածության առողջ հավասարակշռությամբ: Կանայք շարունակում են կազմել աշխատուժի մեծամասնությունը՝ 1,223 կին աշխատակից՝ 653 տղամարդ աշխատակցի համեմատ, ինչն ամրապնդում է Ակբա բանկի դիրքը՝ որպես ֆինանսական հատվածում գենդերային ներառականություն ապահովող գործատու:

Բանկն օգտվում է նաև սերունդների դինամիկ համադրությունից: Ակբա բանկի կին աշխատակիցների 19.56%-ը և տղամարդ աշխատակիցների 7.84%-ը մինչև 30 տարեկան են, ինչն արտացոլում է բանկի գրավչությունը երիտասարդ մասնագետների համար, ովքեր Ակբա բանկը դիտարկում են որպես կարիերա կառուցելու և կարևոր աշխատանքում ներդրում ունենալու վայր: Երիտասարդների այս ուժեղ ներկայացվածությունը խթանում է նորարարությունը, հարմարվողականությունը և թվային տրանսֆորմացիան, որոնք ժամանակակից բանկային համակարգում կայունության հիմնական շարժիչներն են:

Միևնույն ժամանակ, աշխատակիցների մեծ մասը գտնվում է 30-ից 50 տարիքային խմբում (կա-

նանց 45.04%-ը և տղամարդկանց 25.27%-ը)։ Այս սեգմենտն ապահովում է կայունություն, հասունություն և մասնագիտական խորը փորձ՝ ձևավորելով հաճախորդների սպասարկման բարձր որակի և գործառնական հուսալիության ամուր հիմքը։ Նրանց ներկայությունը երաշխավորում է հաջորդականությունն ու ուժեղ առաջնորդությունը Ակբա բանկի զարգացմանը զուգընթաց։

50-ից բարձր տարիքի աշխատակիցները ներկայացնում են աշխատուժի ավելի փոքր, բայց բարձր գնահատված մասը (կանանց 0.59%-ը և տղամարդկանց 1.70%-ը)։ Այս խումբն իր ներդրումն է ունենում տասնամյակների փորձառության, մենթորության և կորպորատիվ գիտելիքների միջոցով։ Նրանց պատկերացումները հարստացնում են որոշումների կայացման գործընթացը և աջակցում երիտասարդ գործընկերների մասնագիտական աճին։

Այս ժողովրդագրական տվյալները միասին ստեղծում են հավասարակշռված, բազմասերունդ աշխատուժ, որտեղ համատեղվում են նոր էներգիան և փորձառու մասնագիտացումը։ Այս բազմազանությունն ամրապնդում է Ակբա բանկի դիմակայունությունը, հարստացնում համագործակցությունը և երաշխավորում, որ որոշումներն ու նորարարությունները արտացոլեն տեսակետների լայն շրջանակ։

Բացի այդ, մենք հիմնվել ենք զգալի թվով աշխատողների վրա, ովքեր ուղղակիորեն չեն հանդիսացել մեր աշխատակիցները, սակայն նրանց աշխատանքը կառավարվել և վերահսկվել է բանկի կողմից։ Նրանք ներառում են.

- **Անվտանգության աշխատակիցներ՝** 80 անվտանգության աշխատակից, ովքեր ապահովում են մեր տարածքների և գործառնությունների անվտանգությունն ու պաշտպանությունը,
- **Մաքրման ծառայություններ՝** մաքրման ծառայության 100 աշխատակից, ովքեր ապահովում են մեր մասնաճյուղերի և գրասենյակների հիգիենան և մաքրությունը,
- **Ոչ հաստիքային աշխատողների ընդհանուր թիվը՝** 180։

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան՝ աշխատանքի և արտադրության կազմակերպման փոփոխություններով պայմանավորված նշանակալի գործառնական փոփոխությունների մասին աշխատակիցները սովորաբար տեղեկացվում են դրանց իրականացումից ոչ ուշ, քան երկու ամիս (մոտավորապես ութ շաբաթ) առաջ։ Բանկում կոլեկտիվ պայմանագիր չկա, հետևաբար՝ ծանուցման ժամկետները և խորհրդակցությունների կամ բանակցությունների վերաբերյալ դրույթները կոլեկտիվ պայմանագրերով սահմանված չեն։

2. Աշխատակիցների առողջություն և անվտանգություն

(GRI 3-3, GRI 403-1, GRI 403-2, GRI 403-4, GRI 403-5, GRI 403-6, GRI 403-8)

Ակբա բանկն ընդունում է, որ աշխատակիցների առողջությունը կայուն գործունեության հիմնարար նախապայմանն է: Աշխատակիցների բարեկեցությանն աջակցելու համար բանկը տրամադրում է առողջության ապահովագրություն, ինչպես նաև դժբախտ պատահարներից, ծանր հիվանդություններից և կյանքի ապահովագրության ծածկույթ՝ ապահովելով աշխատակիցների և նրանց ընտանիքների համար կենսական խնամքի հասանելիությունը, երբ դրա կարիքը կա: Մասնավորապես, ծանր հիվանդությունների ապահովագրությունն ապահովում է ֆինանսական պաշտպանություն առողջական լուրջ խնդիրների դեպքում՝ թույլ տալով աշխատակիցներին կենտրոնանալ ապաքինման վրա՝ առանց ֆինանսական սթրեսի հավելյալ բեռի:

Ակբա բանկի համար աշխատակիցների առողջության պահպանումն ու անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովումն ունեն ռազմավարական նշանակություն: Մենք հետևողականորեն բարելավում ենք մեր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի և բոլոր գործառնական տարածքների պայմանները՝ ապահովելու անվտանգ ու պաշտպանված միջավայր մեր թիմի, հաճախորդների և այցելուների համար: Բանկը կառավարում է այս ուղղությունը ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կանխարգելիչ միջոցառումների միջոցով, որոնք կենտրոնացած են ֆիզիկական անվտանգության, հակահրդեհային անվտանգության, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության, անձնակազմի իրազեկվածության և պարբերական վերապատրաստումների վրա:

Առողջության և անվտանգության հետ կապված պարտականությունները հստակորեն սահմանված են ինչպես կենտրոնական, այնպես էլ մասնաճյուղերի մակարդակներում: Նշանակված պատասխանատու անձինք հսկում են հակահրդեհային պաշտպանության և ֆիզիկական անվտանգության պահանջների պահպանումը բանկի բոլոր տարածքներում: Կիրառվում են կանխարգելիչ հսկողություն, պարբերական ստուգումներ և աշխատակիցների հրահանգավորում՝ արտակարգ իրավիճակների, չարտոնված մուտքի և գործառնական անվտանգության այլ սպառնալիքների հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար: Աշխատակազմի անվտանգության ապահովման գործում Բանկն առաջնային է համարում ռիսկերի կանխարգելումը, պատրաստվածությունը և շարունակական իրազեկումը: Առաջնագծում ամենօրյա աշխատանք իրականացնող անձնակազմը կարող է բախվել աշխատանքային առողջության և անվտանգության ավելի մեծ ռիսկերի՝ կապված ագրեսիվ վարքագծի, հարձակումների կամ կողոպուտների հետ: Այս ռիսկերին անդրադառնալու համար բանկն իրականացնում է նպատակային անվտանգության իրազեկման և վերապատրաստման միջոցառումներ սպասարկող անձնակազմի համար: Յուրաքանչյուր մասնաճյուղում աշխատում են անվտանգության ադմինիստրատորներ, ովքեր պատասխանատու են անվտանգությանն առնչվող ռիսկերի ժամանակին բացահայտման և կանխարգելման համար: Անվտանգության խստացված ստանդարտներ են կիրառվում այնտեղ, որտեղ հայտնաբերվում են ավելի բարձր ռիսկեր՝ առանձնակի ուշադրություն դարձնելով աշխատավայրում բռնության կանխարգելմանը: Այս կանխարգելիչ ռազմավարության հիմքում ընկած են ներքին քաղաքականությունները, աշխատակազմի վերապատրաստումները, անվտանգության համապատասխան միջոցառումները և միջադեպերի մասին ահազանգումը խրախուսող կորպորատիվ մշակույթը:

Բանկի բոլոր տարածքներում ֆիզիկական անվտանգությունը և հակահրդեհային պաշտպանությունը կարգավորվում են ««ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ տարածքների ֆիզիկական պաշտպանության ուղեցույցով», որը սահմանում է մուտքի հսկողության, տեսահսկման, ազդանշանային համակարգերի, հրդեհի հայտնաբերման և մարման համակարգերի, ինչպես նաև անխափան էլեկտրասնուցման պահանջները: Բանկի օբյեկտները դասակարգվում են անվտանգության գոտիների՝ ըստ դրանց կարևորության և պահպանվող տեղեկատվության կամ համակարգերի զգայունության, և համապատասխանաբար կիրառվում են անվտանգության և պաշտպանության համապատասխան միջոցառումներ: Յուրաքանչյուր օբյեկտի համար նշանակվում են պատասխանատու անձինք՝ հակահրդեհային անվտանգության և ֆիզիկական անվտանգության պահանջների պահպանումն ապահովելու համար:

Հնարավոր ռիսկերի բացահայտումն ու մեղմումն իրականացվում է ֆիզիկական և հակահրդեհային պաշտպանության ժամանակակից համակարգերի միջոցով, որոնք ներառում են տեսահսկում, մուտքի հսկողություն, ազդանշանային և հրդեհաշիջման սարքավորումներ: Պարբերաբար իրականացվում են ստուգումներ՝ ֆիզիկական անվտանգության և հրդեհային ռիսկերի հետ կապված պոտենցիալ վտանգները բացահայտելու համար:

Աշխատակիցները տեղեկացվում են կիրառելի առողջության և անվտանգության կանոնների, արտակարգ իրավիճակների ընթացակարգերի և ազդանշանների, հրդեհների կամ բանկի տարածք չարտոնված մուտքի դեպքում ակնկալվող գործողությունների մասին: Աշխատակիցները պարբերաբար՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ստանում են տեղեկատվական և իրազեկման նյութեր SAP SuccessFactors համակարգի միջոցով՝ համահունչ բանկի ներքին իրավական ակտերին, ֆիզիկական անվտանգության կանոններին և տեղեկատվական անվտանգության իրազեկման ու վերապատրաստման մեթոդաբանությանը:

2025 թվականին Ակբա բանկը մասնաճյուղերի աշխատակիցների համար անցկացրել է արտակարգ իրավիճակների պատրաստվածության և քաղաքացիական պաշտպանության 10 ուսումնական վարժանք: Վարժանքները կենտրոնացած են եղել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման դեպքում աշխատակիցների և այցելուների պաշտպանության կազմակերպման վրա: Այս վարժանքներն անցկացվել են Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի և Լոռու մարզերում, և դրանցում ներգրավվել է այն մասնաճյուղերի ողջ անձնակազմը, որտեղ տեղի են ունեցել վարժանքները: Քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի ներկայացուցիչները մասնակցել են՝ օգտագործելով ներքին ռեսուրսներն ու կարողությունները: Վարժանքների ընդհանուր պատասխանատվությունը վերապահված էր գործառնական կառավարման գծով փոխտնօրենին և համապատասխան մասնաճյուղերի կառավարիչներին:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(GRI 3-3, GRI 401-2, GRI 401-3)

Ակբա բանկում մենք գիտակցում ենք, որ ֆինանսական բարեկեցությունը լիարժեք կյանքի կարևորագույն հիմնասյուներից է: Երբ աշխատակիցներն իրենց պաշտպանված են զգում թե՛ առօրյա ֆինանսներում, թե՛ իրենց երկարաժամկետ ծրագրերում, նրանք ավելի լավ են կարողանում կենտրոնանալ իրենց մասնագիտական նպատակների վրա, ձգտել անհատական աճի և վստահությամբ աջակցել իրենց ընտանիքներին: Մեզ համար ֆինանսական բարեկեցության խթանումը սոսկ զբաղվածության գործելակերպ չէ. այն մեր արժեքների արտահայտությունն է և ուղղակի ներդրում սոցիալական կայունության գործում: Աշխատակիցներին տրամադրվող արտոնությունները կոչված են նպաստելու նրանց կայունությանը, թեթևացնելու ֆինանսական ծանրաբեռնվածությունը և նշանավորելու կյանքի կարևորագույն ձեռքբերումները: Սրանով մենք հավաստիացնում ենք, որ Բանկն իր թիմի կողքին է համատեղ աշխատանքային ճանապարհի յուրաքանչյուր փուլում:

Աշխատանքային ստաժի վրա հիմնված բոնուսներ. Գնահատելով մեր երկարամյա աշխատակիցների հավատարմությունն ու նվիրվածությունը՝ Ակբա բանկն առաջարկում է աշխատանքային ստաժի վրա հիմնված աճողական բոնուսներ, որոնք ավելանում են աշխատած տարիներին զուգընթաց: Այս բոնուսները խրախուսում են նվիրվածությունը և ամրապնդում մեր այն համոզմունքը, որ երկարաժամկետ ներդրումներն ուժեղացնում են բանկի հաջորդականությունը, մշակույթն ու հավաքական հիշողությունը: Դրանք նաև օգնում են աշխատակիցներին ավելի մեծ պաշտպանվածությամբ պլանավորել անձնական կարիքները, սեզոնային ծախսերն ու ընտանեկան պարտավորությունները:

Կախված աշխատանքային ստաժից՝ մենք տրամադրում ենք արձակուրդային և տոնական բոնուսներ հետևյալ համամասնությամբ.

Աշխատանքային ստաժ	Բոնուսի չափը (%)
մինչև 2 տարի	30%
2 - 5 տարի	50%
5 - 8 տարի	70%
8 - 10 տարի	100%
10 - 15 տարի	110%
15 տարուց ավելի	120%

Կյանքի կարևոր իրադարձություններին ուղղված վճարներ. Ակբա բանկն ընդունում է, որ կյանքի կարևոր իրադարձությունները հաճախ անձնական ուրախության հետ մեկտեղ բերում են նաև մեծացած ֆինանսական պարտավորություններ: Այս կարևոր պահերին աշխատակիցներին աջակցելու համար բանկը տրամադրում է նպատակային ֆինանսական օգնություն այնպիսի իրադարձությունների դեպքում, ինչպիսիք են ամուսնությունը և երեխայի ծնունդը: Այս վճարները արտացոլում են աջակցող աշխատանքային միջավայր ձևավորելու մեր հանձնառությունը, վերահաստատում են ընտանիքի բարեկեցությանը մեր կողմից տրվող կարևորությունը և երաշխավորում, որ աշխատակիցները կարող են անցնել կյանքի այս կարևոր փուլերը ավելի մեծ ֆինանսական կայունությամբ:

Աշխատակիցները ստանում են հատուկ բոնուսներ, օրինակ՝ 350,000 << դրամ (ներառյալ հարկերը) ամուսնության և երեխայի ծննդյան դեպքում:

Ի հավելումն պետական նպաստի՝ մենք առաջարկում ենք տարբեր չափերի ֆինանսական արտոնություններ երեխայի ծննդյան կապակցությամբ՝ կախված երեխաների թվից.

Երեխաների հերթականություն	Արտոնության չափը (<< դրամ)
Առաջին և երկրորդ երեխա	350,000 << դրամ
Երրորդ երեխա	775,000 << դրամ
Չորրորդ երեխա	1,160,000 << դրամ
Հինգերորդ երեխա	1,520,000 << դրամ

Այս արտոնությունը ծնողներին հնարավորություն է տալիս վերցնել անհրաժեշտ ժամանակը իրենց երեխաներին խնամելու համար՝ միաժամանակ ամրապնդելով ընտանիքի համար հարմարավետ աշխատավայր ստեղծելու մեր հանձնառությունը, որը գնահատում է թե՛ մասնագիտական, թե՛ անձնական պարտականությունները:

Բանկն առաջնահերթություն է տալիս ընտանիքին աջակցող քաղաքականությանը՝ երաշխավորելով, որ աշխատակիցները ստանում են համարժեք աջակցություն կյանքի նշանակալի իրադարձությունների ընթացքում: Մենք նաև գիտակցում ենք աշխատանք-կյանք հավասարակշռության կարևորությունը և աջակցում ենք մեր աշխատակիցներին խնամքի արձակուրդի հարցում: Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակահատվածի համար խնամքի արձակուրդի տվյալների ամփոփագիրը:

ԱՂՅՈՒՍԱԿ 19. ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ

Ոլորտ	Տղամարդ	Կին
Խնամքի արձակուրդի իրավունք ունեցող աշխատակիցներ	653	1,223
Խնամքի արձակուրդից օգտված աշխատակիցներ	35	142
Խնամքի արձակուրդի ավարտից հետո հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքի վերադարձած աշխատակիցներ	35	N/A
Խնամքի արձակուրդի ավարտից հետո աշխատանքի վերադարձած այն աշխատակիցները, որոնք շարունակել են աշխատել վերադառնալուց հետո 12 ամիս անց	N/A	N/A
Խնամքի արձակուրդից օգտված աշխատակիցների աշխատանքի վերադարձի և պահպանման գործակիցները	N/A	N/A

* ներառյալ նրանք, ում նախնական 140-օրյա հղիության և ծննդաբերության արձակուրդն սկսվել է նախորդ տարում

** ներառյալ նրանք, ում խնամքի արձակուրդն սկսվել է նախորդ տարիների

*** Միայն 11%-ն է տարբեր պատճառներով հեռացել Բանկից

Կրթություն, ժամանց և առողջություն Մեր գործընկերների համակողմանի զարգացմանն աջակցելու համար Ակբա բանկը տրամադրում է միանվագ գումարի չափով առաջարկվող սոցիալական փաթեթից, որն աշխատակիցները կարող են ներդնել իրենց բարեկեցության մեջ: Անկախ նրանից, թե այն կօգտագործվի անձնական կրթության, մշակութային միջոցառումների, առողջության և սպորտի, թե ընտանեկան հանգստի համար, այս արտոնությունը խրախուսում է աշխատակիցներին ձգտել ինքնազարգացման աշխատավայրից դուրս:

- Մենք տրամադրում ենք 175,000 << դրամի չափով անկանխիկ արտոնություն, որը կարող է օգտագործվել աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների կրթության, ժամանցի կամ առողջ ապրելակերպի համար:

- Այն աշխատակիցներին աջակցելու համար, ում երեխաները հաճախում են առաջին դասարան, տրամադրում ենք միանվագ 55,000 << դրամ օգնություն (ներառյալ հարկերը)

Բացի այդ, մենք առաջարկում ենք արդյունքների վրա հիմնված բոնուսներ և վճարովի լրացուցիչ արձակուրդ՝ կախված տարեկան կատարողականից և արդյունքներից:

- **Վճարովի լրացուցիչ հանգստյան օրեր**. Տրամադրում ենք հինգ վճարովի հանգստյան օր՝ 2 օր ընտանեկան բարեկեցության համար, 1 օր կրթական նպատակներով, 1 օր ԲՍԿ ծրագրերին մասնակցելու համար և 1 օր ծննդյան օրվա առթիվ արձակուրդ:

- **Կորպորատիվ միջոցառումներ և հատուկ առաջարկներ**. Կազմակերպում ենք տարբեր կորպորատիվ միջոցառումներ, այդ թվում՝ մարզական, թիմային ոգու ամրապնդման, կրթական և ժամանցային միջոցառումներ: Մեր աշխատակիցներն ունեն նաև բացառիկ կորպորատիվ առաջարկների հասանելիություն բազմաթիվ մարզական ակումբներից, խանութներից և կրթական կենտրոններից:

- **Ապահովագրություն**. Տրամադրում ենք համապարփակ առողջության ապահովագրություն և հատուկ ապահովագրական ծածկույթ դժբախտ պատահարների ու ծանր հիվանդությունների համար:

- **Կրճատված աշխատանքային գրաֆիկ**. Աշխատակիցների բարեկեցությունը խթանելու և աշխատանք-կյանք հավասարակշռությանն աջակցելու նպատակով բանկը կիրառում է շաբաթական կրճատված՝ 37.5 ժամ աշխատանքային գրաֆիկ (օրական 7.5 աշխատանքային ժամ՝ ստանդարտ 8-ի փոխարեն):

- **Արտոնյալ բանկային պայմաններ**. Որպես Ակբա բանկի համայնքի անդամներ՝ աշխատակիցները ստանում են արտոնյալ պայմաններ բազմաթիվ բանկային պրոդուկտների և ծառայությունների համար: Այս արտոնությունները գործընկերներին օգնում են իրագործել կարևոր նպատակներ՝ սկսած բնակարանի ձեռքբերումից մինչև կրթություն ստանալը կամ անձնական զարգացման մեջ ներդրումներ կատարելը՝ միաժամանակ խրախուսելով պատասխանատու ֆինանսական պլանավորումը:

- **Աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր**. Աշխատակիցների ֆինանսական բարեկեցությանն ուղղված ամենաազդեցիկ նախաձեռնություններից մեկը Բաժնետիրացման ծրագիրն է, որը հնարավորություն է տալիս աշխատակիցներին դառնալ բաժնետեր և ուղղակիորեն օգտվել Բանկի երկարաժամկետ հաջողություններից: Այս ծրագիրը խորացնում է աշխատակիցների պատկանելության զգացումը, ուժեղացնում է համահունչությունը ռազմավարական նպատակներին և ձևավորում համատեղ տեսլական կայուն աճի վերաբերյալ: Այն հնարավորություն է տալիս գործընկերներին մասնակիցը դառնալ այն արժեքի,

ներին մասնակիցը դառնալ այն արժեքի, որն իրենք ստեղծում են ամեն օր՝ վերածելով նրանց աշխատակիցներից Ակբա բանկի ապագայի շահակիցների: Շարունակական մասնագիտական զարգացում. մենք բարձր ենք գնահատում մեր աշխատակիցների շարունակական ուսուցումն ու մասնագիտական զարգացումը: Սրան աջակցելու համար առաջարկում ենք լիարժեք կամ մասնակի փոխհատուցում միջազգային մասնագիտական որակավորումներ ստանալու համար: Աշխատակիցները խրախուսվում են մասնակցել նաև տարբեր կրթական ծրագրերի՝ ապահովելով շարունակական ուսուցման, աճի և զարգացման հնարավորություններ: Բացի այդ, մենք ունենք մասնագիտական գրադարան, որը հասանելի է բոլոր աշխատակիցների համար: Փորձի փոխանակման նպատակով առաջարկում ենք նաև ներքին և միջազգային գործուղումներ, ինչպես նաև աշխատատեղերի ռոտացիայի և ներքին տեղափոխումների հնարավորություններ՝ խթանելով հմտությունների ձեռքբերումն ու կարիերայի առաջընթացը:

Հարկ է նշել, որ բոլոր արտոնությունները տարածվում են բոլոր տեսակի աշխատակիցների վրա գործունեության բոլոր վայրերում, ներառյալ՝ ինչպես լրիվ, այնպես էլ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատողների վրա: Այս արտոնությունները միտված են բարձրացնելու մեր աշխատակիցների ընդհանուր բարեկեցությունը, աշխատանքից բավարարվածությունը և արտադրողականությունը՝ դրսևորելով մեր հանձնառությունը աջակցող և ներառական աշխատանքային միջավայր ստեղծելու գործում:

3. Վերապատրաստում և զարգացում

(GRI 3-3, GRI 404-1, GRI 404-2, GRI 404-3)

Ակբա բանկում շարունակական ուսուցումը հանդիսանում է աշխատակիցների զարգացման և կազմակերպության երկարաժամկետ հաջողության կարևորագույն մասը: Մենք տրամադրում ենք վերապատրաստման լայն հնարավորություններ, որոնք նախագծված են աշխատակիցների հմտությունները, կարողություններն ու գիտելիքներն ամրապնդելու համար՝ ինչպես տեղում, այնպես էլ առցանց ձևաչափերով:

Մենք ձգտում ենք ներգրավել այնպիսի անհատների, ովքեր հավատում են պատասխանատու ֆինանսավորմանը, հաճախորդամետությանը և հասարակության մեջ բանկային համակարգի փոխակերպող դերին: Ընտրվելուց հետո նորեկներն անցնում են կառուցվածքային ադապտացիոն գործընթաց, որը նպատակ ունի նրանց ծանոթացնել Բանկի քաղաքականություններին, ընթացակարգերին, մշակույթին և աշխատանքային միջավայրին: Սա օգնում է նոր աշխատակիցներին արդյունավետորեն ինտեգրվել հենց սկզբից:

Որպես մեր կառուցվածքային ինտեգրման ճանապարհի մաս՝ յուրաքանչյուր նոր գործընկեր անցնում է հստակ չորս փուլից բաղկացած ադապտացիոն գործընթաց, որը նախագծված է նախապատրաստվածություն, կողմնորոշում և վաղ հաջողություն երաշխավորելու համար.

Փուլ	Նկարագրություն
1. Նախապատրաստական փուլ	Բոլոր անհրաժեշտ գործիքները, համակարգային մուտքերը և գործնական տեղեկատվությունը պատրաստվում են նախապես, որպեսզի նորեկներն իրենց առաջին աշխատանքային օրը սկսեն սահուն և վստահ:
2. Պաշտոնական կողմնորոշում	Աշխատակիցները լրացնում են պահանջվող փաստաթղթերը, ծանոթանում ներքին քաղաքականություններին, ստանում ողջույնի փաթեթը և հասանելիություն ստանում իրենց թվային ադապտացիոն պլանին:
3. 30-60-90 օրերի ծրագիր	Ներառում է ուղղորդված ծանոթություններ, կոնկրետ հաստիքին վերաբերող վերապատրաստումներ, պարբերական հանդիպումներ ղեկավարների հետ և ուսումնական սեսիաներ Բանկի ռազմավարության, մշակույթի ու պարտականությունների վերաբերյալ:
4. Գնահատում և հետադարձ կապ	Այս փուլն ամփոփում է աշխատակցի ադապտացիոն փորձը և մատնանշում հետագա զարգացման հաջորդ քայլերը:

Ինտեգրմանը և վաղ շրջանի զարգացմանն աջակցելու համար բանկը կիրառում է մի շարք գործիքներ, ներառյալ՝

Մենթորություն	Ուսումնական ծրագրեր	Աշխատանքներ	Անհատական զրույցներ	Թիմային ոգու ամրապնդում	Քոուչինգ	Տեղեկատվական պոդքաստներ

Մենք դիտարկում ենք ուսուցումը որպես ցմահ գործընկերություն մեր աշխատակիցների հետ, որը նրանց զինում է արագ զարգացող ֆինանսական միջավայրին արձագանքելու համար անհրաժեշտ հմտություններով, գիտելիքներով և վստահությամբ: Ակբա բանկում շարունակական ուսուցումն առանձին նախաձեռնություն չէ. այն մեր մշակույթի անբաժանելի մասն է և մեր երկարաժամկետ կայունության ռազմավարության անկյունաքարը:

Մեր մասնագիտական կատարելագործման էկոհամակարգն ի սկզբանե կառուցված է բազմազանության և ներառականության սկզբունքներով: Այն առաջարկում է զարգացման լայն հնարավորություններ՝ ներառելով գործնական սեմինարներ, թվային ուսուցման հարթակներ և անհատական տեմպով անցնող ծրագրեր, որոնք յուրաքանչյուր աշխատակից կարող է հարմարեցնել իր անձնական նպատակներին: Այս ճկուն մոտեցումն ապահովում է մասնագիտական աճի հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար՝ անկախ նրանց պաշտոնից, տարածաշրջանից կամ կարիերայի փուլից:

2025 թվականին բոլոր նոր աշխատակիցները ստացել են ադապտացիոն և կոնկրետ հաստիքին ուղղված վերապատրաստումներ՝ զուգահեռաբար մասնակցելով այլ համապատասխան ուսումնական ծրագրերի: Այս վերապատրաստումներն իրականացվել են ներառական սկզբունքով՝ երաշխավորելով հավասար հասանելիություն՝ անկախ սեռից կամ տարածաշրջանից:

ԱՂՅՈՒՍԱԿ 20. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԻՆ ԺԱՄԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԻ

Կազմակերպության կին աշխատակիցների անցած ուսուցման միջին ժամերը	16.58 ժամ
Կազմակերպության տղամարդ աշխատակիցների անցած ուսուցման միջին ժամերը	18.87 ժամ
Կազմակերպության ղեկավարների անցած ուսուցման միջին ժամերը	18.22 ժամ
Կազմակերպության մասնագետների անցած ուսուցման միջին ժամերը	17.66 ժամ

Այս ցուցանիշներն արտացոլում են բանկի շարունակական ներդրումները աշխատակիցների ուսուցման և զարգացման գործում:

2025 թվականին արձանագրվել է արտաքին վերապատրաստման ծրագրերին մասնակցության ընդհանուր 1,795 դեպք: Այս թիվն արտահայտում է մասնակցությունների քանակը, այլ ոչ թե եզակի մասնակիցներին (այսինքն՝ որոշ աշխատակիցներ մասնակցել են մեկից ավելի դասընթացների): Այս մասնակցությունների 56.4%-ը բաժին է ընկել կին աշխատակիցներին, իսկ մնացածը՝ տղամարդկանց:

Զարգացմանն ուղղված մեր ներդրումները սերտորեն համահունչ են բանկի ռազմավարական կարիքներին: Քանի որ ֆինանսական հատվածն անցնում է արագ փոխակերպումների փուլ, Ակբա բանկը երաշխավորում է, որ իր աշխատակիցները մնան հարմարվողական և պատրաստ՝ ապագայի մարտահրավերներին: Նպատակային զարգացման նախաձեռնությունների միջոցով մենք նախապատրաստում ենք մեր աշխատուժին՝ ներդնելու նոր տեխնոլոգիաներ, մատուցելու բարձրորակ ծառայություններ, աջակցելու պատասխանատու բանկային գործելակերպին և պահպանելու էթիկ այն ստանդարտները, որոնք բնորոշում են Ակբայի դերը հասարակության մեջ:

Մեր կրթական ծրագրերի վերջնական նպատակն է հզորացնել մարդկանց՝ ոչ միայն իրենց ընթացիկ պաշտոններում լավագույնս դրսևորվելու, այլև բանկի ներսում նոր հնարավորություններ բացահայտելու համար: Այսօր ամրապնդելով մասնագիտական կարողությունները՝ մենք հիմք ենք ստեղծում վաղվա առաջնորդների համար և նպաստում Ակբայի երկարաժամկետ դիմակայունությանն ու կայունությանը:

Կարիերայի զարգացում և մասնագիտական աճ

Ակբա բանկը հանձնառու է ձևավորել այնպիսի աշխատուժ, որն ունակ է աջակցել բանկի երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրագործմանը: Կարիերայի զարգացման մեր մոտեցումը կառուցվածքային է, նպատակաուղղված և հիմնված է աշխատակիցներին իրենց կարողություններն ընդլայնելու, նոր պարտականություններ ստանձնելու և կազմակերպության ներսում առաջընթաց գրանցելու հնարավորություններ ընձեռելու վրա:

Մասնագիտական աճն ապահովելու համար բանկն առաջարկում է զարգացման գործիքների համապարփակ հավաքածու, այդ թվում՝

- **Աշխատատեղերի ռոտացիա.** Հնարավորություն է տալիս աշխատակիցներին ծանոթանալ տարբեր գործառույթների հետ և ընդլայնել իրենց գործառնական պատկերացումները:
- **Ներքին շարժունակություն.** Թույլ է տալիս որակավորված աշխատակիցներին ստանձնել նոր դերեր, որոնք համապատասխանում են իրենց զարգացող հմտություններին և կարիերայի հավակնություններին:
- **Տեղական և միջազգային ճանաչողական այցեր**. Նպաստում է գիտելիքների փոխանակմանը և ֆինանսական հատվածի առաջավոր փորձի ներդրմանը:
- **Մասնագիտական որակավորումների փոխհատուցում**. Աջակցում է աշխատակիցներին միջազգայնորեն ճանաչված հավաստագրեր ստանալու հարցում, ինչը բարձրացնում է նրանց փորձառությունն ու աշխատանքի արդյունավետությունը:
- **Մասնագիտական գրադարան**. Տրամադրում է ռեսուրսներ շարունակական ուսուցման և հետազոտությունների համար:

Կատարողականի գնահատման գործընթաց

Ակբա բանկում կարիերայի զարգացման կենտրոնական բաղադրիչը կատարողականի գնահատման գործընթացն է, որն աջակցում է ձեռքբերումների վերլուծությանը, զարգացման կարիքների բացահայտմանը և հետագա կարիերայի առաջընթացի պլանավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում այս գործընթացին մասնակցել է 1,876 աշխատակցից 1,557-ը՝ կազմելով ընդհանուր աշխատուժի 83%-ը: Մասնակցության այս ցուցանիշում ներառված չեն ֆիզիկական արձակուրդում (մայրության արձակուրդ) գտնվողները, հուլիսի 1-ից հետո ընդունված նոր աշխատակիցները և SS (IT) անձնակազմը, որպեսզի գնահատման գործընթացը կիրառելի լինի բացառապես համապատասխան պայմաններին բավարարող անձնակազմի համար:

Աշխատուժի 83%-ը մասնակցել է կատարողականի գնահատման գործընթացին

ԱՂՅՈՒՍԱԿ 21. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

	Կշիռ
Ըստ սեռի	
Կին	62.3%
Տղամարդ	37.7%
Ըստ աշխատակիցների կատեգորիաների	
Բարձրագույն ղեկավարություն	0.4%
Տնօրինություն	0.6%
Ավագ ղեկավարություն	1.5%
Միջին օղակի ղեկավարություն	10.0%
Կրտսեր օղակի ղեկավարություն	4.1%
Մասնագետ	83.4%

Գնահատման համակարգը խթանում է կառուցողական երկխոսություն աշխատակիցների և ղեկավարների միջև, համապատասխանեցնում է անհատական նպատակները կազմակերպության առաջնահերթություններին և աջակցում է նպատակային զարգացման պլանավորմանը: Կենտրոնանալով թե՛ կատարողականի, թե՛ ներուժի վրա՝ այս գործընթացն ամրապնդում է պատասխանատվության, շարունակական կատարելագործման և արժանիքների վրա հիմնված առաջընթացի մշակույթը: Զարգացման այս մեխանիզմները միասին նպաստում են աշխատակիցների աճին, ամրապնդում են կազմակերպչական կարողությունները և իրենց ներդրումն ունենում Բանկի երկարաժամկետ կայունության գործում:

4. Հաճախորդների հետ հարաբերություններ և պատասխանատվություն

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ակբա բանկը շարունակաբար կատարելագործում է իր թվային կարողությունները՝ հաճախորդներին հարմարավետ, արդյունավետ և անվտանգ ֆինանսական ծառայություններ մատուցելու համար ողջ Հայաստանի տարածքում: 2025 թվականին բանկը մշակել է 54.2 միլիոն գործարք, որոնցից 89.4%-ն իրականացվել է թվային եղանակով (acba digital բջջային հավելված / վեբ, acbaMax, API հաբ)՝ փաստելով դեպի ժամանակակից, ցածրարժեք սպասարկման ուղիներ շարունակական անցման և մասնաճյուղային գործառնություններից կախվածության նվազեցման մասին: Բոլոր գործարքների միայն 10.6%-ն է եղել ոչ թվային:

Արտացոլելով բիզնեսի խորը ինտեգրումը՝ թվային բանկինգից օգտվողների թիվն այժմ հասել է 700,999-ի: Այս թիվը գերազանցում է հաճախորդների ընդհանուր բազան՝ պայմանավորված կորպորատիվ հաշիվների համար առաջարկվող բազմաօգտատեր գործառույթով: Թվային ծառայությունների օգտագործումը լայնորեն տարածված է ողջ Հայաստանում. ամենամեծ կենտրոնացումը գրանցվել է Գեղարքունիք-Տավուշ-Կոտայք համախմբում (134,639 օգտատեր), որին հաջորդում են Երևանի երկու սպասարկման ցանցերը և խոշոր մարզերը, ինչպիսիք են Արարատը, Լոռին, Արմավիրը և Շիրակը: Բանկի թվային հարթակներն օգտագործվում են բոլոր տարիքային խմբերում. ամենաակտիվ հաճախորդները 30-44 տարեկան անձինք են, սակայն օգտագործման կայուն աճ է նկատվում նաև ավագ սերնդի, այդ թվում՝ 60-ից բարձր տարիքի հաճախորդների շրջանում:

Ընդլայնելով պարզ և ներառական թվային պրոդուկտները՝ Ակբա բանկը բարձրացնում է ֆինանսական հասանելիությունը ինքնազբաղված անձանց, գյուղական համայնքների և այն հաճախորդների համար, ովքեր ունեն ֆիզիկական մասնաճյուղեր այցելելու սահմանափակ հնարավորություններ: Օգտատերերի համար հարմար համակարգերում, վճարային անվտանգ գործիքներում և հեռավար սպասարկման ուղիներում բանկի շարունակական ներդրումներն ապահովում են ավելի բարձր արդյունավետություն, գործարքների ցածր ծախսեր և շրջակա միջավայրի վրա նվազեցված ազդեցություն՝ ուղղակիորեն համահունչ լինելով Ակբա բանկի ավելի լայն կայունության նպատակներին:

Բացի թվային հասանելիությունից և արդյունավետությունից, Ակբա բանկը մեծ շեշտադրում է կատարում հաճախորդների հետ պատասխանատու հարաբերությունների և սպասարկման ընդհանուր որակի վրա: Հաճախորդների սպասարկման գործելակերպը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու շարունակական ջանքերի շրջանակներում բանկն անցել է անկախ գնահատում MFR գլոբալ վարկանիշային գործակալության կողմից և 2025 թվականին արժանացել է Հաճախորդների պաշտպանության ոսկե մակարդակի սերտիֆիկատի (Հավելված 4): Այս սերտիֆիկացումը հաստատում է Ակբա բանկի համապատասխանությունը հաճախորդների պաշտպանության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին, ներառյալ՝ թափանցիկությունը, արդարացի վերաբերմունքը, պատասխանատու գնագոյացումը, տվյալների պաշտպանությունը և բողոքների լուծման արդյունավետ մեխանիզմները: Սերտիֆիկացման գործընթացն ամրապնդում է բանկի հանձնառությունը՝ ձևավորելու երկարաժամկետ վստահություն հաճախորդների հետ և երաշխավորելու, որ թվային ու հեռավար ծառայությունների ընդլայնումն ուղեկցվում է սպառողների պաշտպանության և պատասխանատվության բարձր ստանդարտներով:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՔԵԹԻՆԳ

Մենք մեծ կարևորություն ենք տալիս էթիկ և պատասխանատու մարքեթինգային գործելակերպին՝ առաջնորդվելով թափանցիկության, ազնվության և մեր հաճախորդների նկատմամբ հարգանքի սկզբունքներով: Համոզված ենք, որ մեր բանկի բարձր հեղինակությունը և հաճախորդների վստահությունը կառուցվում են բացառապես արդար ու ազնիվ հաղորդակցության վրա:

Ակբա բանկի մարքեթինգային գործունեության բոլոր փուլերում մենք հավատարիմ ենք հետևյալ սկզբունքներին.

Թափանցիկություն և ազնվություն Մարքեթինգային նյութերը ճշգրիտ են, փաստացի և զերծ ապակողմնորոշիչ տեղեկատվությունից:	**Հարգանք անհատների և հասարակության հանդեպ** Մեր ուղերձները հարգալից են տարբեր մշակույթների, խմբերի և արժեքների նկատմամբ:
Պատասխանատվություն հաճախորդների հանդեպ Տեղեկատվությունը նախագծված է այնպես, որ օգնի հաճախորդներին կայացնել կշռադատված որոշումներ:	**Հավասար հնարավորություններ և ներառականություն** Արշավները բացառում են խտրականությունը և արտացոլում են ներառական հաղորդակցություն:
Ազնիվ հաղորդակցություն Մենք խուսափում ենք չափազանցված պնդումներից և արժեքը ներկայացնում ենք պատասխանատու կերպով:	**Հարգանք շրջակա միջավայրի նկատմամբ** Մենք կրճատում ենք թղթի օգտագործումը և հնարավորության դեպքում խթանում ենք թվային ուղիները:
Մրցակցային էթիկա Հաղորդակցությունը չի վարկաբեկում մրցակիցներին և կենտրոնանում է բացառապես մեր սեփական ծառայությունների արժեքի վրա:	

Ակբա բանկի համար հաճախորդների հետ երկարաժամկետ և վստահելի հարաբերությունների կառուցումն առանցքային է, ինչը հնարավոր է իրագործել միայն էթիկ և պատասխանատու մարքեթինգային գործելակերպի միջոցով:

ԲՈՂՈՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(GRI 2-25, GRI 2-26)

Ակբա բանկի համար հաճախորդների բավարարվածության երաշխավորումը սոսկ նպատակ չէ, այլ մեր գործունեության անկյունաքարը: 2018 թվականից ի վեր Բողոքների կառավարման համակարգը (այսուհետ՝ ԲԿՀ կամ Համակարգ) հանդիսանում է հաճախորդներին լսելու, բողոքները թափանցիկ կերպով հասցեագրելու և ծառայությունները շարունակաբար բարելավելու բանկի հանձնառության առանցքային մասը:

Բանկը չի սահմանափակվում միայն ընթացիկ խնդիրների արագ կարգավորմամբ. մենք կարևորում ենք շահակիցների հետ մշտական հետադարձ կապի ապահովումն ու երկխոսությունը: Բացի այդ, մենք վարում ենք բոլոր ուղիներով ստացված բողոքների միասնական տվյալների բազա, որոնք դասակարգվում են ըստ թեմաների, աղբյուրների և այլ համապատասխան չափանիշների: Այս տվյալների բազան հիմք է հանդիսանում պարբերական վերլուծությունների իրականացման և համապարփակ հաշվետվությունների պատրաստման համար: Կատարված վերլուծությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել կրկնվող խնդիրների ու միտումների մասին՝ թույլ տալով Ղեկավարությանը տրամադրել նպատակային հանձնարարականներ գործընթացների բարելավման համար: Այս կառուցվածքային մոտեցումն արտացոլում է պատասխանատվության և հաճախորդների փորձառության շարունակական կատարելագործման նկատմամբ բանկի հանձնառությունը:

Հաճախորդների փորձառության վերլուծության բաժնը կառավարում է բողոքների կառավարման համակարգը, որն ապահովում է բողոքների լուծման համակարգված մոտեցում: Մեր ներքին շահակիցները, ներառյալ՝ բիզնես ուղղությունները, քարտային գործառնությունները, Իրավաբանական վարչությունը, Հեռավար բիզնեսի և բեք-օֆիսի ստորաբաժանումները նույնպես ակտիվորեն ներգրավված են այս գործընթացում: Յուրաքանչյուր շահակից մասնակցում է իր գործառույթներին առնչվող հետաքննության գործընթացին և անմիջապես տեղեկացվում է բարելավում պահանջող ցանկացած գործընթացի մասին:

Հաճախորդները կարող են մուտք գործել Համակարգ հետևյալ հարմարավետ ուղիներով.

- Գրավոր/թղթային դիմումներ,
- Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկված գրավոր դիմումներ,
- Բանկի պաշտոնական կայքի «Հետադարձ կապ» բաժին,
- Անանուն ձևաթղթեր կամ տեղեկատվական թերթիկներ,
- Զանգեր Թեժ գծին կամ ընդհանուր Զանգերի կենտրոնին,
- Հաղորդագրություններ թվային բանկային հարթակների միջոցով,
- Սոցիալական մեդիայի հարթակներ:

Այս ուղիներով ստացված բոլոր բողոքները մուտքագրվում են Համակարգ, որտեղ դրանք համակարգված կերպով մշակվում են սահմանված ընթացակարգերի համաձայն:

Մենք առաջնահերթություն ենք տալիս արագ և թափանցիկ հաղորդակցությանը հաճախորդների բողոքները հասցեագրելիս: Մենք երաշխավորում ենք, որ բոլոր բողոքները վերանայվում են և պատասխանվում առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Անկախ կայացված որոշումից կամ լուծումից՝ հաճախորդները

հետադարձ կապ են ստանում այն նույն ուղիով, որով ներկայացրել էին իրենց բողոքը՝ ապահովելով հետևողականություն և հասանելիություն: Այն իրավիճակներում, երբ լուծումը կախված է արտաքին կողմերից կամ պահանջում է լրացուցիչ ժամանակ, բանկը տեղեկացնում է հաճախորդին սահմանված ժամկետում: Հաճախորդները պարբերաբար տեղեկացվում են իրենց գործի ընթացքի մասին, իսկ վերջնական որոշումն ընդունվելուց հետո տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն:

Յուրաքանչյուր բողոք վերանայվում է նշանակված ստորաբաժանման կողմից, որը հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը և, անհրաժեշտության դեպքում, համագործակցում այլ բաժինների հետ՝ խնդիրը համապարփակ գնահատելու համար: Գույքային կամ ոչ գույքային պահանջներ պարունակող բողոքներին կցվում է իրավաբանական եզրակացություն, իսկ Հաճախորդների փորձի ուսումնասիրության բաժինը ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները նախքան գործը վերջնական վերանայման և հաստատման նպատակով Գործադիր տնօրենի տեղակալին ներկայացնելը:

Այս հետաքննության արդյունքների հիման վրա բանկը որոշում է իր պատասխանատվության աստիճանը բարձրացված խնդրի շուրջ, և եթե բանկի գործընթացների, թերացումների կամ ոչ պրոֆեսիոնալ սպասարկման հետևանքով հաճախորդին պատճառվել է վնաս կամ անհանգստություն, ձեռնարկում է համապատասխան քայլեր հարցը կարգավորելու համար՝ ներառյալ փոխհատուցումը (կիրառելիության դեպքում) և ուղղիչ միջոցառումները՝ հետագայում նմանատիպ դեպքերը կանխելու և համապատասխան գործընթացները բարելավելու նպատակով:

2025 թվականին բողոքների ընդհանուր թիվը կազմել է 4,046:

ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿՈՒՄ



- Քարտեր **23.80%**
- Փոխանցումներ **1.60%**
- Քարտեր/վարկային գծեր **7.90%**
- Սպասարկման որակ **49.60%**
- Հաշիվներ **4.50%**
- Հեռահար բանկինգ **2.80%**
- Բանկոմատներ, տերմինալներ **2.90%**
- Ավանդներ **0.30%**
- Ապառիկ վարկեր **6.20%**
- Այլ **0.40%**

2025 թվականին ստացված բողոքների բաշխվածությունն ըստ ծառայությունների տեսակների

ՍՏԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ



- Թղթային տարբերակով **2.50%**
- Զանգերի կենտրոն **86.00%**
- Թեժ գիծ **2.10%**
- Պաշտոնական էլ նամակ **5.50%**
- Մեսենջերներ **0.70%**
- Սոցիալ մեդիա **0.90%**
- Վեբ կայք **0.80%**
- Այլ **1.40%**

2025 թվականին ստացված բողոքների աղբյուրների բաշխվածությունը



- Բավարարված / Մասամբ բավարարված **39%**
- Մերժված **3%**
- Կիրառելի չէ n/a **58%**

2025 թվականին ստացված բողոքների լուծման արդյունքների բաշխվածությունը

Գծապատկեր 13. Բողոքների ընդունման և լուծման կապուղիները

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

(GRI 3-3, GRI 418-1, SASB FN-CB-230a.1, SASB FN-CB-230a.2)

Անձնական ֆինանսական տվյալների գաղտնիության և անվտանգության ապահովումը բանկային ոլորտի հիմնարար պարտականությունն է: Քանի որ բջջային բանկինգը և ամպային տեխնոլոգիաները շարունակում են զարգանալ, տվյալների անվտանգությունն էլ ավելի վճռորոշ է դառնում: Բանկն ընդունում է, որ Տեղեկատվական անվտանգությունը ոչ միայն կարգավորող մարմինների պահանջ է, այլև մեր ռազմավարության առանցքային մասը՝ ուղղված վստահության, դիմակայունության և երկարաժամկետ աճի խթանմանը:

Կիբերանվտանգության աճող սպառնալիքների դարաշրջանում անվտանգության հզոր համակարգերի պահպանումը և մեր անձնակազմի շարունակական վերապատրաստումը կենսական նշանակություն ունեն: Բանկը հանձնառու է պաշտպանել ողջ զգայուն տեղեկատվության, այդ թվում՝ հաճախորդների, աշխատակիցների և գործընկերների տվյալների, ինչպես նաև բանկային գաղտնիքի հույժ գաղտնիությունը, ամբողջականությունն ու հասանելիությունը: Պաշտպանելով այս տեղեկատվությունը՝ մենք մեղմում ենք անհատների և բիզնեսների ֆինանսական բարեկեցությանն ուղղված ռիսկերը՝ միաժամանակ բարձրացնելով մեր հեղինակությունն ու կայունությունը:

Բանկի Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը այս նպատակներին հասնելու հիմնական բաղադրիչն է: Այն երաշխավորում է, որ մեր գործառնությունները համապատասխանեն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ստանդարտներին, ինչպիսիք են ISO/IEC 27001:2013-ը և ISO/IEC 27701:2019-ը, որոնք ուղղորդում են մեր անվտանգության քաղաքականությունների և գործելակերպի մշակումը: Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը համահունչ է այս համաշխարհային ստանդարտներին և բանկի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի հիմնարար տարրն է: Այն ապահովում է անձնական տվյալների պաշտպանությունը և ձևավորում անվտանգ ու թափանցիկ գործառնական միջավայր: Քաղաքականությունը պարբերաբար վերանայվում և թարմացվում է (տարեկան առնվազն մեկ անգամ)՝ դրա արդիականությունն ու արդյունավետությունը պահպանելու համար:

Այս քաղաքականությանն աջակցող հիմնական կարգավորող փաստաթղթերն են.

- << ԿԲ խորհրդի թիվ 173-Ն որոշումը, որը սահմանում է տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջները,
- Կանոնակարգ 4-ը, որը սահմանում է բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները:

Մենք հանձնառու ենք հնարավորություն ընձեռել անհատներին վերահսկելու իրենց անձնական տվյալները: Սա ներառում է այն երաշխիքը, որ անհատները կարող են հետևել և պահանջել իրենց տվյալների ջնջումը՝ համաձայն << օրենսդրության և միջազգային ստանդարտների: Առաջնահերթություն տալով տվյալների պաշտպանությանը՝ մենք նպատակ ունենք պաշտպանել բոլոր շահակիցների շահերը, ներառյալ՝ հաճախորդների, գործընկերների, բաժնետերերի, մատակարարների, կապալառուների և պետական մարմինների (օրինակ՝ << ԿԲ-ի):

Խոցելիությունները նվազագույնի հասցնելու նպատակով բանկն իրականացնում է տեղեկատվական ռիսկերի համակողմանի գնահատում: Այս գնահատումները բացահայտում և դասակարգում են պոտենցիալ ռիսկերն ըստ առաջնահերթության, ինչը մեզ թույլ է տալիս մշակել և շարունակաբար կատարելագործել մեր Տեղեկատվական ռիսկերի նվազեցման ծրագիրը: Այս ծրագիրն իրականացվում է մեր Ներքին ուղեցույցի (IN 27-12) համաձայն՝ ապահովելով սպառնալիքների մեղմացման հետևողական մոտեցում: Գիտակցելով տեղեկատվական անվտանգության սպառնալիքների արագ փոփոխվող բնույթը՝ մենք իրականացնում ենք տարեկան վերագնահատումներ՝ մեր ռազմավարությունները նոր ի հայտ եկող ռիսկերին հարմարեցնելու համար:

